Էջմիածին

1976

Ե

Էջմիածին

1976

Ե



ԼԳ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՅՈՒԼԻՍ

1976

ՀՐԱՄԱՆԱՒ

Ծ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ԺՆԵՎՈՒՄ

Վեհափառ Հայրապետը սույն թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսի 12-ը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հրավերով, եղավ Փարիզում և Ժնևում՝ ոչ պաշտոնական այցով: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Վեհափառ Հայրապետը հուլիսի 1—6 օրերին այցելում է Ժնև՝ ուղեկցությամբ հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ եպս. Նագաշյանի:

Ժնևում Հայոց Հայրապետին ուղեկցում է նաև Շվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանը:

Ժնևում Հայոց Հայրապետը տեսակցություններ է ունենում Union de Banques Suisses-ի ընդհանուր տնօրենի և այդ դրամատան մեջ ի պահ դրված ս. Էջմիածնի անձեռնմխելի հիմնադրամի կապակցությամբ՝ Մայր Աթոռի բարերար տիար Սարգիս Քյուրքճյանի հետ:

Ժնևում գտնված օրերին Հայոց Հայրապետը հետաքրքրվում է նաև շվեյցարահայ համայնքի եկեղեցական գործերով: Այդ նպատակով Նորին Ս. Օծությունը մասնավոր տեսակցություն է ունենում Ժնևի հայոց եկեղեցական վարչության փոխ-ատենապետ տիար Էոժեն Փափազյանի և ս. Գրիգոր Լուսավորիչ հիմնարկության ներկայացուցիչ տիար Շարլ Փիլիպոսյանի հետ;

Վեհափառ Հայրապետը Ժնևում հանդիպում է ունենում նաև հյուրաբար այստեղ գտնվող Մայր Աթոռի բարերար տիար Մարտիրոս Տարագճյանի և հասարակական գործիչ տիար Հայկաշեն Ուզունյանի, ինչպես նաև Մայր Աթոռի հանգուցյալ բարերար Կարապետ Ղազարյանի այրի տիկին Ազգանուշ Ղազարյանի հետ:

Հուլիսի 5-ին Վեհափառ Հայրապետն այցելում է Ժնևի հայոց ս. Հակոբ եկեղեցի և նույն օրն էլ վերադառնում Փարիզ:

Փարիզում Իր կեցության օրերին, հուլիսի 6—11-ը, Վեհափառ Հայրապետը հանդիպումներ է ունենում Մայր Աթոռի բարերարներ տիար Նուրհան Ֆրենկյանի, տիար Գևորգ Պագըրճյանի, Փարիզի հայոց եկեղեցական վարչության ատենապետ տիար Սեդրակ Քարյանի, վարչության անդամ տիար Ալեքսանդր Օհանյանի, տիար Համազասպ Մոմճյանի, տիկին Եսթեր Իշկալացյանի, տիար Աղասի Դարբինյանի, «Յառաջ» թերթի խմբագիր տիկին Արփիկ Միսաքյանի, «Աշխարհ» թերթի խմբագիր տիար Ալեքսան Ավետիսյանի և այլ ազգայինների հետ:

Հուլիսի 11-ին Վեհափառ Հայրապետին է այցելում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

Փարիզում գտնված օրերին Նորին Ս. Օծությունը մասնավոր տեսակցություն է ունենում Լիբանանահայ կարոտյալ ընտանիքների օգնության հանձնաժողովի նախագահ տիար Հովհաննես Գասարճյանի հետ:

Հուլիսի 4-ին, կիրակի օրը, երբ Վեհափառ Հայրապետը գտնվում էր Ժնևում, տ. Սերովբե արքեպիսկոպոսը, տ. Գևորգ եպիսկոպոսի ընկերակցությամբ, մեկնում է Լիոն՝ մասնակցելու տեղի հայոց ս. Հակոբ եկեղեցում Լիոնի կարդինալ Ռենարի պատվին կազմակերպված հանդիսությանը:

Այս առթիվ Լիոնի հայոց եկեղեցում պատարագում է տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Հուլիսի 10-ին Վեհափառ Հայրապետն այցելում է Փարիզում Սովետական Միության արտակարգ և լիազոր-դեսպան Ստեֆան Չերվենկոյին և ջերմագին զրույց ունենում նրա հետ:

Հայոց Հայրապետին այս առթիվ ուղեկցում էին տ. Սերովբե, տ. Գյուտ արքազանները և տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանը:

Հուլիսի 11-ին, կիրակի օրը, Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում պատարագում է տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի, որը լցված էր հավատացյալ հոծ բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, հանուն Ֆրանսիայի հայոց թեմական կազմակերպության, հոգևորականության և բովանդակ հայ ժողովրդի, ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը և խնդրում Նրան տալ Իր օրհնությունն ու պատգամը:

Վեհափառ Հայրապետը խոսք է առնում և ասում.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(1976 թ. հուլիսի 11)

Հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո. ամեն:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեծ հաճույքով և սիրով, բոլորիդ կբերենք ողջույն և օրհնություն Մայր Աթոռ ս. Էջմիածնեն:

Այս պահուն հուզումով բարձրացանք այս ս. Բեմը ձեզի ուղղելու համար քանի մը խոսք: Այս ս. տաճարը Մեր հայրապետական կյանքի պատմության մեջ մասնավոր տեղ մը կգրավե: Այս եկեղեցին առաջինը եղավ Մեր այցելած եկեղեցիներեն, երբ իբրև կաթողիկոս, ճիշտ քսան տարիներ առաջ, ճամփա ելանք դեպի արտասահման: Այդ օրեն անցան ուղիղ քսան տարիներ: Կհիշենք շատ հստակ պատկերը, որ այսօր ալ Մեր աչքերուն առջև կպարզվի: Շատ հավանական է, որ ձեզմե շատեր ներկա էին քսան տարիներ առաջ այստեղ: Անշուշտ շատերն ալ չկան, բնական օրենքով անոնք անցած են կյանքի մյուս ափը: Օրհնյալ ըլլա անոնց բոլորի հիշատակը:

Սիրելի Սրբազան եղբայր, շնորհակալություն Ձեր ջերմ խոսքերուն համար:

Այս առթիվ ևս Մեր գոհունակությունը կհայտնենք այն սիրալիր և եղբայրական հարաբերություններու և պտղառատ գործակցության համար, որ քսան տարիներե ի վեր գոյություն ունին և կզարգանան Մայր Աթոռին և Ձերդ Սրբազնության միջև, իբրև հավատարիմ և բարեջան հայրապետական պատվիրակը Արևմտյան Եվրոպայի:

Այս օրերս կգտնվինք Փարիզ կարճ և ոչ պաշտոնական այցելությամբ մը: Եղանք նաև Ժնև քանի մը օրով, Մայր Աթոռին նյութական, ֆինանսական հարցերու ամրապնդման առնչությամբ: Մայր Աթոռս առանձնապես գաղտնիք մը չունե մեր ժողովուրդեն: Աստուծո ողորմությամբ և մեր ժողովուրդի առատաձեռնությամբ, անավասիկ քսան տարիներ հետո կրնանք մխիթարությամբ հայտարարել, թե Ժնևի մեջ հատուկ դրամատան մը մեջ, ս. Էջմիածնի անունով կարևոր գումար մը հավաքված է, իբրև անձեռնմխելի հիմնադրամ, որուն եկամուտներեն կօգտվի Մայր Աթոռս վերջին տասը և ավելի տարիներու ընթացքին: Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Հայաստանի եկեղեցիները այսօր նյութապես ինքնաբավ վիճակի մեջ են: Նույնն է կացությունը նաև Ռուսաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հայ եկեղեցիներուն: Մայր Աթոռը նյութապես բարվոք վիճակի մեջ կգտնվի, շնորհիվ մեր հայրենաբնակ ժողովրդի բարեպաշտության և նվիրատվումներու: Ճիշտ է, Հայաստանի մեջ հարուստներ չունինք, բայց բազմահազար մեր հավատացյալներու լումաներով, կգոյանան բավականաչափ գումարներ, որով Մայր Աթոռը և մեր բոլոր եկեղեցիները դարձած են ինքնաբավ: Ունինք նաև արտապյուտճենական, բացառիկ շինարարական աշխատանքներ՝ պատմական տաճարներու վերանորոգումներ կամ վերակառուցումներ, նոր շենքերու կառուցումներ և այլն, ուրեմն բացառիկ շինարարական աշխատանքներ, որոնք կկատարվին արտասահմանեն ստացված նվիրատվություններով և մասամբ ալ այն գումարով, որ դրամատան մեր ունեցած անձեռնմխելի ֆոնդեն կգոյանա: Այսպիսով, Մայր Աթոռս ավելի քան բավարարված վիճակի մեջ կգտնվի: Ի տես այս կացության, Մենք նախ փառք կուտանք Աստուծո ու Մեր երախտագիտությունը կհայտնենք բոլոր անոնց, որոնք իրենց բարի ձեռքը, օգնող ձեռքը կերկարեն մեզի, ի պայծառություն մեր հայրենի բոլոր եկեղեցիներուն: Այս տեսակետեն ոչ միայն Ամերիկան, այլ նաև ձեր երկիրը, Ֆրանսան, առաջին շարքի վրա կգտնվի մեր բարերարներու տեսակետեն և ձեր սրբազան առաջնորդն ալ, մեր սիրելի եղբայրը՝ Սերովբե

արքեպիսկոպոսը, ամենայն հոգատարությամբ կնպաստե մեծ չափով Մայր Աթոռի շինարարական աշխատանքներուն:

Ահա այսպես, սիրելի ժողովուրդ, մեր հայրենիքի բարենպաստ պայմաններու մեջ և շնորհիվ նաև մեր պետական իշխանությանց հույժ բարյացակամ վերաբերումին, Մենք մեր աշխատանքները քսան տարիներու ընթացքին շարունակեցինք և պիտի շարունակենք, որպեսզի հետզհետե ավելի զորանա հայոց հավատքի բազմադարյան կեդրոն ս. Էջմիածինը, ուրկե համայն մեր ժողովուրդին կբաշխվին օրհնությունները և շնորհները երկնային:

Հայ ժողովուրդի հոգիի և հավատքի արմատները կգտնվին Արարատի նայվածքի ներքո, ս. Էջմիածնի նվիրական քարերուն տակ: Այս հոգևոր ճշմարտությունը կխորհիմ, թե մեծագույն գրավականն է մեր ժողովուրդի հոգևոր միասնության, անսասանության և հավետ կենդանության: Մեր ջերմագին իղձն ու մաղթանքն է, որ մեր ազգի զավակները միշտ մնան մեր Մայր եկեղեցվո հովանիին ներքև, որովհետև ժողովուրդի ամենապահով ու փրկարար նավահանգիստը մեր, հատկապես արտասահմանի պայմաններու մեջ, Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին է, իր գլուխ ունենալով Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Ավելի քան երբևէ, ճշմարիտ է հայրենասեր պատմաբան՝ Առաքել Դավրիժեցիի խոսքը, թե՝ «Ի վերայ Աջոյն և սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Սիրելի ժողովուրդ, կկամենանք ավելցնել նաև, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Մենք անձնապես, միշտ կմնանք աղոթող և Մեր ուժերու չափով գործող՝ աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության և պետություններու միջև արդար հարաբերություններու ամրապնդման համար: Մեզի համար վիշտ է, որ մեր օրերուն կտեսնենք տակավին արյունահեղություններ, պատերազմներ և բազում տեսակի ողբերգություններ: Այս պահուն չենք կրնար չհիշել Լիբանանի ողբերգական վիճակը, ուր Մենք ավելի քան 200.000 ժողովուրդ ունինք և որոնք տագնապյալ և կարոտյալ ծանր վիճակի մեջ կգտնվին: Մեր աղոթքն է, որ խաղաղությունը շուտով վերահաստատվի այդ սքանչելի երկրին մեջ, և մեր ժողովուրդի զավակները՝ իրենց եկեղեցիներով, իրենց կրթական հաստատություններով, իրենց ազգային կազմակերպություններով, իրենց մամուլով ու մշակութային միություններով շարունակեն հայկական այն կյանքը, որ առաջին համաշխարհային պատերազմեն սկսյալ մինչև մեր օրերը այնքան սքանչելի կերպով զարգացավ:

Այս առիթով մեծ գոհունակությամբ և գնահատանքով պետք է հիշենք ֆրանսահայ գաղութը, որ ապացույցը տվավ իր համազգային մտահոգության, մեկ միլիոն ֆրանսական ֆրանք կարճ ժամանակվա մեջ հանգանակելով, իբրև հետևանք Մեր կոչին և իբրև հետևանք այն աշխույժ և եռանդուն աշխատանքին, որ ծավալվեցավ այստեղ, ի գլուխ ունենալով հայրապետական պատվիրակը և իր ժրաջան գործակիցները:

Մենք միշտ պիտի մնանք աղոթող, որ միջազգային կյանքի արդի իրադրությունը փոխվի վերջապես, և իրապես արդար ու խաղաղ հարաբերություններ ստեղծվին ազգություններու և պետություններու միջև:

Քանի մը օրեր առաջ, երբ Ժնև կգտնվեինք, առավոտ մը, երբ Լեմանի ափին կքայլեինք, շենքի մը պարիսպին զետեղված մարմարե մեծ տախտակի վրա կարդացինք հետևյալ քանդակված խոսքերը.

„La liberté du faible et la gloire du fort" Lamartine.

(«Տկարի ազատությունը, ուժեղի փառքն է»):

Հուզումի ուժգին ցնցում մը ապրեցանք, ըմբոշխնելով պահ մը վեհությունը, գաղափարական գեղեցկությունը, մարդասիրական այս մտածումին: Ինչքա՜ն այժմեական է այսօր ալ Լամարտինի այդ խոսքը: Բայց և տխրությամբ պետք է ավելցնենք, թե մեր օրերու մարդկությունը ինչքա՜ն հեռու է այդ մեծ գաղափարի կենսագործումեն: Մանավանդ մենք իբրև փոքր ժողովուրդ, տակավին ինչքան ծարավի ենք արդարության: Այնուամենայնիվ հավատքով զորացած և միշտ ապագայի հույսերով լուսավորված, լավատես հոգիով մենք պետք է դեպի հառաջ ընթանանք, մեր բոլոր ուժերը լարած, մեր պարտքը կատարելով մեր եկեղեցվո և մեր ժողովուրդի հանդեպ, այն հաստատ համոզումով, որ ի վերջո համայն մարդկությունը պիտի հասնի իսկական խաղաղության, արդարության և ազատության նավահանգիստը, հերջանկություն բոլոր ազգերու և մանավանդ հերջանկություն և ի մխիթարություն անցյալի մեջ տանջված և այժմ վերածնած մեր ժողովուրդին:

Ձեզ, սիրելի հավատացյալներ, կրկին անգամ սիրո ողջույն և օրհնություն Մայր Աթոռեն և ազատ հայրենիքեն:

«Շնորհք և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ. ամէն»:

Հուլիսի 12-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Փարիզից և վերադառնում Մոսկվա, որտեղ Նրան դիմավորում են Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ ու Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը և Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Մոսկվայի օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Հուլիսի 13-ին Վեհափառ Հայրապետն այցելում է ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների խորհուրդ և ջերմ զրույց ունենում խորհրդի նախագահի տեղակալներ Պ. Մակարցևի և Վ. Տիտովի հետ:

Սույն զրույցին ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Հուլիսի 14-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ:

Ա. Հ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Զաւեն եպս. Չինչինյանը և քարոզում «Ուրախ լերուք ի Տէր, դարձեալ ասեմ ուրախ լերուք, զի մերձ է Տէր այնոցիկ, որք սուրբ են սրտիւք» (Փիլիպ. Դ 4—5) բնաբանով:

*
* *

Հուլիսի 11-ին, կիրակի.—Գիւտ տփոյ սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Նույն օրը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից, Դամասկոս մեկնեց տեղի թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

*
* *

Հուլիսի 16-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հուլիսի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Իսկ եթէ սկիզբն սուրբ է, և զանգուածն. և եթէ արմատն՝ ապա և ոստքն» (Հռովմ. ԺԱ 16) բնաբանով:

*
* *

Հուլիսի 25-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ Յիսուս այլակերպեցաւ իբրև արեգակ, և հանդերձ նորա եղև իբրև լոյս» (Մատթ. ԺԷ 2—3) բնաբանով: Նորին սրբությունն Իր գեղեցկահյուս քարոզում վեր է հանում Պայծառակերպության խորհրդի հոգևոր, բարոյական և պատմական նշանակությունը եկեղեցու և հավատացյալների կյանքում:

* * *

Նույն օրը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, Ալեքսանդրիա մեկնեց տ. Զավեն եպս. Չինչինյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

* * *

Հուլիսի 26-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը: Ս. պատարագից հետո կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հուլիսի 27-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, վերակացու Միսաք սրկ. Մարգարյանի գլխավորությամբ, մեկնեց մեկօրյա պտույտի դեպի Սևան:



ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը 1976 թվականի հունիսի 27-ին, կիրակի օրը, ի ժամ ս. պատարագի, ծայրագույն վարդապետի աստիճան է շնորհել առաջնորդական փոխանորդ տ. Աղան վրդ. Բալիոզյանին:

Խարտավիլակի պաշտոնը կատարել է Մելբուռնի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես քհն. Գոոզյանը:

Աղան ծայրագույն վարդապետը, ավազանի անունով՝ Եղիա, ծնվել է Հալեպում 1946 թվականի օգոստոսի 18-ին և այնտեղ էլ ստացել իր նախնական կրթությունը:

1961 թվականին ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան և 1968 թվականին հաջողությամբ ավարտել ընծայարանի բաժինը:

1966 թվականի մայիսին սարկավագ և 1968 թվականի հուլիսին աբեղա է ձեռնադրվել՝ Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսից:

1971 թվականի նոյեմբերին Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ստացել է վարդապետական աստիճան՝ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսից:

1968—1971 թվականներին վարել է ընծայարանի փոխ-տեսչի և քարտուղարի պաշտոնները՝ դասավանդելով միաժամանակ գրաբար լեզու, աշխարհագրություն:

Իր աթոռանվեր ու խղճամիտ ծառայությունների համար 1972-ին տ. Եղիշե պատրիարքից իրավունք է ստացել կրելու վարդապետական լանջախաչ և ծաղկյա փիլոն:

1970—1971 թվականներին միաժամանակ վարել է Կյուլպենկյան մատենադարանի տեսչի պաշտոնը:

Վեհափառ Հայրապետի միջնորդությամբ 1971 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարան, որտեղ և մինչև

1974 թվականը հետևել է հայոց լեզվի և հայ գրականության դասընթացներին՝ որպես ազատ ունկնդիր:

Նույն տարիներին հոգևոր ճեմարանում դասավանդել է մեկնություն Հին և Նոր Կտակարանների, ծիսագիտություն, վարք սրբոց և Քրիստոնեական առարկաներ:

Վերադառնալով ս. Աթոռ՝ Երուսաղեմ, 1974—1975 թվականներին պաշտոնավարել է որպես տեսուչ Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ու դասավանդել աստվածաբանություն, գրաբար լեզու և ծիսագիտություն:

1975 թվականի նոյեմբերից, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, տ. Եղիշե սրբազան պատրիարքի արտոնությամբ ու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպիսկոպոսի հրավերով, պաշտոնավարում է որպես առաջնորդական փոխանորդ նույն թեմում:

Տ. Աղան ծ. վարդապետն աշխատակցել է ս. Աթոռի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրին կրոնա-քարոզչական բնույթի հոդվածներով և ինքն էլ պատրաստել 1866—1877 ու 1927—1971 տարիների «Սիոն» ամսագրի նյութերի համառոտ մատենագիտությունը: Այժմ նա աշխատում է Պողոս վարդապետ Տարոնեցու կյանքի և մատենագրական վաստակի վրա:

Տ. Աղան ծ. վարդապետը գտնվում է իր հոգևոր ու մտավոր ուժերի ծաղկման շրջանում, ուժեր, որոնք, վստահ ենք, ի սպաս կդրվեն մեր ժողովրդի եկեղեցական, ազգային-հայրենասիրական ծառայության նվիրական գործին:

Հանուն Վեհափառ Հայրապետի շնորհավորում ենք տ. Աղան ծ. վարդապետին և մաղթում նրան նորանոր հաջողություններ, այն համոզումով, որ նա կարդարացնի Վեհափառ Հայրապետի և տ. Եղիշե սրբազան պատրիարքի՝ իր վրա դրված հույսերը՝ ի պայծառություն և ի ծառայություն մեր ս. եկեղեցու:

Ա. Հ.



ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՍՏԻՃԱՆ

Հունիսի 14-ին Մոսկվայի ռուսաց եկեղեցու հոգևոր ակադեմիայում Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաբաջյանը հանդես է եկել աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան ստանալու համար նախապես ներկայացրած իր ավարտաճառի կամ դիսերտացիոն աշխատանքի բանավոր պաշտպանությամբ:

Ավարտաճառի թեման է՝ «Եզնիկ Կողբացու աստվածաբանական հայացքները»: Այն բաղկացած է 4 գլուխներից, ներածությունից և վերջաբանից: Ընդամենը 111 մեքենագրված էջ:

Ա գլուխ. Եզնիկ Կողբացին և նրա «Եղծ աղանդոց» աշխատությունը.

Բ գլուխ. Եզնիկ Կողբացու «Հակաճառություն»-ը.

ա) Ընդդեմ հեթանոսական կրոնների, բաբելոնյան աստղագիտության և ժողովրդական հավատալիքների.

բ) Ընդդեմ «Քէշին պարսից» կամ պարսկական կրոնի.

գ) Ընդդեմ մինչքրիստոնեական փիլիսոփաների (Պյութակորաս, Պլատոն, Էպիկուր) և ընդդեմ ստոյիկության.

դ) Ընդդեմ քրիստոնյա աղանդավորների (Մարկիոն, Վալենտին և ուրիշներ).

Գ գլուխ. Եզնիկ Կողբացու աստվածաբանական հայացքները կամ ուսմունքը.

Քրիստոսաբանություն (Հայր Աստված, Որդի Աստված և Հոգին սուրբ. Աստված. Ամենասուրբ Երրորդություն), **եկեղեցի** (episkopություն, սրբերի բարեխոսություն, սազատ կամք, ճակատագիր, երազ, մարմինների հարություն և վախճանաբանություն), **բարու և չարի վարդապետություն** (հրեշտակ, սատանա).

Դ գլուխ. Եզնիկ վարդապետ Կողբացու «Խրատք»:

Անանիա վրդ. Արաբաջյանը ծնվել է 1951

թվականին Երևանում, ավազանի անունով՝ Ավետիք: 1958—68 թթ. սովորել և ավարտել է Երևանի № 52 միջնակարգ դպրոցը:

Հոգևոր ճեմարան է ընդունվել 1970 թվականին և ավարտել այն 1973 թվականին փայլուն հաջողությամբ:

Ավարտական նյութն է եղել՝ «Ռուս պրավոսլավ եկեղեցին»:

1972 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1973 թվականին՝ աբեղա:

1975 թվականին ստացել է մասնավոր վարդապետական իշխանության աստիճան: Վարդապետական ավարտական թեման է եղել՝ «Ռուս եկեղեցական-աստվածաբանական գրականությունը հայ առաքելական եկեղեցու մասին»:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ 1973—1975 թվականներին սովորել և էքստերն կարգով ավարտել է Մոսկվայում՝ Զագորսկի հոգևոր ակադեմիայի քառամյա դասընթացը բարձր գնահատականներով և իր ուսումը շարունակել, նույն հաստատության ուսումնական խորհրդի հայրաբանության ամբիոնի բացառիկ որոշումով՝ ասպիրանտուրական բաժնում, ուր և գրել ու պաշտպանել է իր թեկնածուական աշխատությունը:

Տ. Անանիա վարդապետը նույն տարիներին և մինչև 1976 թվականի փետրվարը եղել է հոգևոր հովիվը Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցու:

Անանիա վարդապետ Արաբաջյանը այժմ աշխատանքի է անցել ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում որպես փոխտեսուչ և կրոնագիտական առարկաների դասախոս:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է տ. Անանիա վրդ. Արաբաջյանին ու մաղթում նրան նոր հաջողություններ հոգևոր-եկեղեցական, կրթական ծառայության ճանապարհի վրա՝ ի մխիթարություն Հայոց Հայրապետի և ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ա. Հ.



ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի էլ, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին ԱՄՆ-ի հայոց արևելյան և արևմտյան թեմերի և Հ. Բ. Ը. Միության երիտասարդաց կազմակերպությունների անդամները՝ 40 պատանիներ և աղջիկներ՝ ղեկավարությամբ Սփրինգֆիլդի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովիվ և թեմի երիտասարդական կազմակերպության վարիչ տ. Ներսես քհն. Ճեպեճյանի:

Հունիսի 18-ին, ուրբաթ օրը, խումբը Մոսկվայից ժամանեց Երևան և տեղավորվեց «Անի» հյուրանոցում:

Հունիսի 19-ին, շաբաթ օրը, նրանք այցելեցին Երևանի տեսարժան վայրերը, եղան Էրեբունիում, Ծիծեռնակաբերդում, իսկ երեկոյան «Հայհամերգ»-ի դահլիճում լսեցին Հայաստանի Էստրադային նվագախմբի համերգը:

Հունիսի 20-ին, կիրակի.—**Տօն կաթողիկէ ս. Էջմիածնի.** Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը: Ս. պատարագին ներկա են լինում նաև ամերիկահայ երիտասարդները:

Պատարագի ընթացքում քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ի վերայ Աջոյն և ս. Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ» բնաբանով, և վեր հանում հոգևոր, եկեղեցական ու ազգային-հայրենասիրական այն մեծ դերն ու առաքելությունը, որ կատարում է Մայր Աթոռը մանավանդ մեր օրերին հայ ժողովրդի ծոցում:

Նորին Սրբությունը հայրաբար ողջունում է ներկայությունը ամերիկահայ երիտասարդության ներկայացուցիչների, որոնք ուխտի էին եկել հեռավոր ԱՄՆ-ից մեր հավատքի դարավոր կենտրոն, լույսի խորան ս. Էջմիածին՝ ոգեշնչվելու հայրենիքի նվաճումներով, խորացնելու իրենց հայերեն լեզվի իմացությունը և խանդավառվելու ու ապրելու հայությամբ, հայրենիքի և հայ մշակույթի սիրով:

Ս. պատարագի վերջավորությանն ամերիկահայ երիտասարդները Հայոց Հայրապետի ձեռքով ստանում են ս. հաղորդություն:

Նույն օրը երիտասարդները, դեպի Երևան իրենց ճանապարհի վրա, այցելում են նաև Սարդարապատի հերոսամարտի հիշատակին կանգնեցված հուշարձանախումբ և Զվարթնոցի ավերակներ:

Հունիսի 21-ին, երկուշաբթի օրվանից, ամերիկահայ երիտասարդները սկսում են հետևել Երևանում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած հայոց լեզվի և երգի-պարի դասընթացներին:

Հունիսի 23-ին, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանում նրանց բարեհաճում է ընդունել և ողջունել Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նորին Սրբությունը ջերմ զրույցի ավարտին տալիս է Իր օրհնությունն ու պատգամը:

Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքից հետո ամերիկահայ երիտասարդների խումբը երախտագետ սրտով կատարում է մի քանի երգեր հայերեն լեզվով՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Երիտասարդության անունից, Վեհափառ Հայրապետին ուղղված, շնորհակալության և երախտագիտության սրտագին խոսք է ասում խմբի ղեկավար տ. Ներսես քհն. Ճեպեճյանը:

Երիտասարդներն ապա հյուրասիրվում են Մայր Աթոռի բարիքներով և հոգեկան մեծ բավականությամբ հրաժեշտ առնում Վեհափառ Հայրապետից:

Դասընթացներին հետևելով միաժամանակ երիտասարդներն իրենց ազատ ժամերին այցելում են Կոմիտասի անվան զբոսայգի, քաղաքային պանթեոն, Մատենադարան, պատմության թանգարան, «Հաղթանակ» զբոսայգի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Ալ. Սպենդիարյանի և Մ. Սարյանի տուն-թանգարաններ, ինչպես նաև Հայաստանի պետական պատկերասրահ, Բյուրականի աստղադիտարան, Արզնիի բյուրեղապակու գործարան, լինում են նաև Գառնիի հեթանոսական տաճարում, ս. Գեղարդ վանքում, Սևանում: Ապա այցելում են Դիլիջան, Կիրովական և Լենինական:

Երևանում գտնված օրերին երիտասարդները ներկա են լինում հետևյալ հայագիտական դասախոսություններին՝ «Հայ ժողովրդի մշակույթը Ե դարում», «Հայ ժողովրդի կազմավորումը», «Հայ ժողովրդական երաժշտություն», «Հայ ժողովրդի ազատագրական շարժումները», «Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» (սվայդների ցուցադրումով), «Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը», «Սովետական Հայաստանն այսօր»:

Հուլիսի 4-ին, կիրակի օրը, ԱՄՆ-ի հայ եկեղեցու երիտասարդաց խումբը ներկա է լինում Երևանի ս. Սարգիս եկեղեցում մատուցված պատարագին:

Հուլիսի 8-ին, հինգշաբթի օրը, ս. Թարգմանչաց տոնի առիթով, նրանք ուխտի են մեկնում Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Պատարագի ընթացքում նրանք են կատարում պատարագի երգեցողության մի քանի հատվածներ:

Հաջորդ օրն այցելում են Խորվիրապի վանք:

Հուլիսի 15-ին, հինգշաբթի օրը, նրանք լավագույն տպավորություններով և անմոռաց հիշատակներով հրաժեշտ են առնում Մայր Աթոռից և հայրենիքից ու մեկնում ԱՄՆ:

ՄԻՍԱՔ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ





ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՃՈՆ

7-րդ դարի շարականագիր է Բարսեղ Ճոնը, որը Ծիրակ գավառի Դպրեվանքի վանահայրն էր: Վարդան պատմիչը հաղորդում է, որ նա ոչ միայն գրել է «Ցարութեան Հարցեր» շարականները, այլև Ներսես Գ Ծինող (641—661) կաթողիկոսի հանձնարարությամբ խմբագրել, կանոնավորել է Ծարակնոցը. «..ապա հրամայեաց ընտրել զարժանն և զայն միայն ուսանել, զոր և արարին ի ձեռն սրբոյն Բարսղի՝ մականուն Ճոն կոչեցելոց, որ էր առաջնորդ սուրբ ուխտին, որ դպրեվանք կոչի ի գաւառին Անւոյ... վասն որոյ ճոնընտիր կոչի շարականն, որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր»[1]:

Իսկ Կիրակոս Գանձակեցին բացատրում է, թե ինչ պատճառով կաթողիկոսը հրամայել է Բարսեղին՝ խմբագրելու Ծարակնոցը: 7-րդ դարում արդեն այնքան էին բազմացել ու եկեղեցիներում տարածվել շարականները, որ մի գավառում ժամասացության ժամանակ երգվածները մյուս գավառների համար անծանոթ էին: Ժամերգության այդպիսի մի դեպքի, Բագավանի եկեղեցում, Վարդավառի տոնին, ներկա է լինում Ներսես Ծինող կաթողիկոսը, երբ աջակողմյան դասի սկսած Հարցը չի կարողանում շարունակել ձախակողմյան դասը և այդպիսով մի քանի Հարց իրար են խառնում և շփոթում: Ահա թե այդ դեպքի մասին Կ. Գանձակեցին ինչ է գրում. «Դէպ եղև սմա (խոսքը Ներսես Ծինող կաթողիկոսի մասին է—Գ. Հ.) աշխարհաժողով բազմութեամբ ի տօնի վարդավառին լինել ի Բագուան: Եւ բազմացեալ էին երգք շարականոց յեկեղեցիս Հայոց մինչև ոչ գիտել միոյ գավառի երգեցող՝ զմիւսոյն: Եւ ասացին շարական վարդավառի հարցինն և միւս դասն ոչ կարաց փոխել զնա, և փոխեցին բազում շարական, և ոչ զայն ևս գիտէին: Ապա հայրապետն Ներսէս, հաւանութեամբ ամենայն ժողովոյն ընտրեցին զպիտանին և զօգտակարն, զի յամենայն յեկեղեցիս յամենայն աւուր մի պաշտօն լիցի ըստ աւուրն խորհրդոյ: Եւ ընտրեցին արս իմաստունս, զի շրջեսցին ընդ ամենայն աշխարհս հայոց և զնոյն կարգաւորութիւն հաստատեսցեն, որ է մինչև ցայսօր»[2]:

Սակայն մեր շարականագիտության մեջ ոչ միայն խոսք չի եղել Բարսեղ Ճոնի մասին որպես շարականագիր, այլև չի ընդունվել, որ նա Ներսես կաթողիկոսի հանձնարարությամբ խմբագրել է մեր Ծարակնոցը և Ճոնընտիր կոչված Ծարակնոց չի եղել և դա պատմագիրներ Վարդանի և Կ. Գանձակեցու կողմից հաղորդած թյուրիմացության արդյունք է: «Վարդանի ու Կիրակոսի այս պատմությունը,—գրում է պրոֆ. Մ. Աբեղյանը,—մի վկայություն է միայն նրա համար, որ մեր հոգևոր բանաստեղծության ծաղկելուն նպաստել է առանձնապես այն, որ դարեր շարունակ մեր եկեղեցիներում միատեսակ ժամերգություն և կանոնական պարտադիր երգեր չեն եղել, և թե փորձեր են եղել շարականների մեջ ընտրություն անելու ու միատեսակության

[1] Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ. պատմութիւն տիեզերական, Մոսկվա 1861, էջ 96:

[2] Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատաս. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 թ., էջ 61—63:

վերածելու ժամերգությունն այդ նկատմամբ: Որ Վարդանի ու Կիրակոսի ժամանակ այդ միատեսակությունն արդեն հաստատված է եղել, այդ պարզ է. բայց որ «Ծոնընտիր» շարականը՝ 7-րդ դարում կազմված լինի, այդ կարելի չէ ընդունել»[3]: Իսկ թե ինչու պրոֆ. Մ. Աբեղյանը վերոհիշյալ երկու պատմագիրների բոլոր հաղորդածները շարականների մասին ընդունում, հավաստի է համարում, բայց «Ծոնընտիր» շարականի խմբագրումն ու գոյությունը չի ընդունում, բացատրում է այսպես՝ «Հավանական է կարծել, որ Կիրակոսն ու Վարդանը, որոնց երկուսի աղբյուրն անպայման մեկ է, մի պատմական շփոթություն են բովանդակում. դեպքը երևի 12-րդ դարից Ներսես Շնորհալուց և իր ժամանակակից «ամենագովելի» և «աստուածաշնորհ» Բարսեղ վարդապետից (1162 թ.) փոխված է 7-րդ դարը Ներսես Ծինողի ժամանակ»[4]: Նախ պետք է ասել, որ պատմիչ Վարդանի և Գանձակեցու հաղորդածները, ինչպես տեսանք, բավականին տարբեր են, հետևապես, դրանք եթե աղբյուր ունեցել են, համենայնդեպս, նույնը չի եղել: Վարդանը գլխավոր ուշադրությունը դարձնում է կաթողիկոսի հրամանի վրա, որ հանձնարարվում է Բարսեղ Ծոնին՝ ընտրություն կատարել և նոր Շարակնոց կազմել, որ ընդհանուր լինի բոլոր եկեղեցիների համար: Իսկ Կ. Գանձակեցին տալիս է Շարակնոցը խմբագրելու պատճառները, Բագավանում տեղի ունեցած դեպքը, որոշակի ժամանակը (Վարդավառի տոնի օրը) և այլն: Վարդանն ասում է, որ միայն կաթողիկոսն է հանձնարարել Ծոնին խմբագրելու Շարակնոցը, իսկ Գանձակեցին հաղորդում է, ժողովն է որոշել, որ Բարսեղ Ծոնը ընտրություն կատարի Շարակնոցում:

Ուրեմն Վարդանի և Կիրակոսի հաղորդածները նույնը չեն և նույն աղբյուրը չեն ունեցել: Այնուհետև, իսկապես, պատմիչները արդյոք չե՞ն շփոթել Ներսես Ծինողին ու Ներսես Շնորհալուն և Բարսեղ Ծոնին ու 12-րդ դարի Բարսեղ Անեցուն: Թվում է, թե այստեղ էլ ոչ մի շփոթություն չկա՝ ո՛չ ժամանակի, ո՛չ տեղի և ո՛չ էլ անձնավորությունների: 7-րդ և 12-րդ դարերի միջև ընկած է հինգ հարյուր տարի: Վարդանի և Գանձակեցու նման պատմիչները չէին կարող իրարից այդքան հեռու ժամանակները և կաթողիկոսները շփոթել, իրար խառնել: Եթե նրանց օգտագործած աղբյուրում այդ «թյուրիմացությունը» լիներ էլ, անշուշտ նրանցից մեկն ու մեկը կուղղեր, բայց այդպիսի բան չի եղել: Իսկ ինչ վերաբերում է տեղին, պարզ ասված է՝ «Բագավանում», որը գտնվում է Բագրևանդում, (այժմյան Ուչքիլիսեն), և Ներսես Շնորհալին չէր կարող Կիլիկիայից գալ Բագավան՝ Վարդավառի ժամերգությունը լսելու: Կիլիկիայում Բագավան անունով վայր չկա, իսկ Ներսես Շնորհալին իր 7 տարվա կաթողիկոսության ժամանակամիջոցում երբեք Հռոմկլայից դուրս չեկավ, որովհետև նա մշտապես տառապում էր հոդացավով և ջերմախտով, բացի այդ, եթե ուզենար էլ, չէր կարող Ալաշկերտ գնալ, քանի որ այդ գավառը Կիլիկիայի հայկական իշխանության սահմաններից դուրս էր և հեռու: Վերջապես Վարդան պատմիչը և Կ. Գանձակեցին չէին կարող շփոթել թեկուզ նույն անունն ունեցող երկու մեծ, նշանավոր կաթողիկոսներին: Այդ երկու կաթողիկոսներն էլ իրենց գործունեությամբ, ժամանակով, կենսագրությամբ հայտնի են մեր պատմության մեջ և չէր կարող նման շփոթություն լինել: Հետո, Ներսես Շնորհալուց 4 դար առաջ Ստեփանոս Սյունեցին արդեն մեր ժամակարգությունը կանոնավորել էր, ամեն մի տոն ուներ իր հավուր պատշաճի կանոնը, չէր կարող պատահել, որ Վարդավառի նման մեծ, տերունական տոնը, այն էլ 12-րդ դարում, Ն. Շնորհալու օրոք, չունենար իր կանոնը, և Հարցը երգելիս եկեղեցու երկու դասերը «շփոթեին բազմաթիվ շարականներ» և չկարողանային գտնել տոնի օրվա շարականը: Վարդավառի տոնը 12-րդ դարում տոնվում էր ոչ միայն մի օր, այլ մյուս տերունական տոների նման բազմօրյա էր և ամեն մի օրն ուներ իր կայուն կանոնն ու շարականը: Շնորհալու օրով բոլոր տոներն իրենց շարականներով արդեն վաղուց կանոնավորված էին և ժամերգության ժամանակ, այն էլ Բագավանի նման մի նշանավոր եկեղեցում, այդպիսի շփոթություն 12-րդ դարում անկարելի էր: Այդ դեպքը իսկապես, ինչպես պատմիչներն են հաղորդում, տեղի է ունեցել 7-րդ դարում, երբ դեռ մեծ տոներից մի քանիսը չունեին իրենց կանոնն ու մշտական շարականը, երբ դեռ կանոնը չէր ընդունված հայոց եկեղեցում, ամեն մի շարական կարող էր մուտք գործել եկեղեցի և երգվել: Անչափ բազմացել էին շարականները և միանգամայն հնարավոր էր, որ ժամերգության ժամանակ մի շարականը շփոթեին մյուսի հետ: Հետո, Բարսեղ Անեցի կաթողիկոսը չէր կարող խմբագրել շարականը, որովհետև նա շարականագիր չէր, քանի որ մինչ այդ Շարակնոցի, ժամագրքի և եկեղեցական մյուս նշանավոր

[3] **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրակ. պատմություն, Երևան, 1944 թ., հտ. Ա, էջ 477—478:

[4] Անդ, էջ 478:



գրքերի խմբագրողներն ու կազմողները ոչ միայն լավ շարականագետ են եղել, այլև շարականագիր կաթողիկոսներ: Այդպիսի խմբագիրներ են եղել Հովհան Մանդակունին, Հովհան Օձնեցին, Ներսես Շնորհալին: Պատմագիրներ Վարդանն ու Կիրակոսը շատ որոշակի ասում են, որ շարականներն անչափ բազմացել էին յոթերորդ և ոչ թե տասներկուերորդ դարում Մեծ Հայքում և ոչ թե Կիլիկիայում, ժամերգության ժամանակ շարականների շփոթումը եղել է ոչ թե Կիլիկիայում, այլ Մեծ Հայքի Բագրևանդ գավառի Բագավանի եկեղեցում, Վարդավառի տոնի օրը՝ շարականներից Հարցը երգելիս, որ եկեղեցու աջակողմյան և ձախակողմյան դասերը ինչքան էլ չարչարվեցին, չկարողացան գտնել Վարդավառի Հարցը, որ այդ խառնաշփոթության պատճառով Ներսես Շինող կաթողիկոսը, որն անձամբ ժամերգությանը ներկա էր, շատ վրդովվեց, հրամայեց դպրեվանքի վանահորը՝ Բարսեղ Ծոնին՝ խմբագրելու Շարակնոցը և այլն: Այսքան որոշակի, համոզիչ տվյալները և հաղորդումները հաստատում են, որ իրոք շարականների բազմացումն ու տարածումը, դրանց խմբագրումը տեղի է ունեցել Մեծ Հայքում ոչ թե 12-րդ, այլ 7-րդ դարում, ոչ թե Ներսես Շնորհալու, այլ Ներսես Շինողի օրով, ոչ թե Բարսեղ Անեցու, այլ Բարսեղ Ծոնի ձեռքով: Այնպես որ, այստեղ ոչ մի թյուրիմացություն չկա և պետք է հավատալ այդ երկու պատմագիրների հաղորդածներին, որ իրոք, 7-րդ դարում անհրաժեշտ է եղել ընտրություն կատարել շարականների մեջ, ժամերգությունը կանոնավորելու և կայունացնելու համար, և այդ գործը կատարել է Շիրակի դպրեվանքի վանահայր Բարսեղ Ծոն վարդապետը:

Բարսեղ Ծոնը Շարակնոցի պատահական խմբագիր չի եղել: Նա միաժամանակ շարականագիր է: Թեև մեր շարականագիտության մեջ նա չի ճանաչված որպես շարականների հեղինակ և երաժշտագետ, սակայն, իսկապես նա շարականներ էլ է գրել և հմուտ է եղել հայ եկեղեցու ժամերգության գործում:

«Զկարգ շարականոց Յարութեան ըստ ութ ձայնից՝ Բազումք ընծայեն Մովսեսի Խորենացւոյ, և այլք Բարսղի Ծոն կոչեցելոյ՝ ի մէջն եօթներորդ դարուն, որպէս յիշէ Վարդան Վարդապետ ի տեսութիւն Անթառամ ծաղկին ասելով ի սկզբանն. «Զի թէ թարգմանիչն և հոգեշարժ վարդապետն Մովսէս Խորենացին ասացեալ է զԾնընդեան և զՅարութեան երգս շարականոց և թէ մեծն և իսանդիսանար ճգնաւորն Բարսեղ՝ մականուամբ ճոն կոչեցեալ ապա չէ պարտ պակաս հայել ի խորհրդաւոր բանքն յայս եւ արդարև ի կազմութիւն շարականոցս երևի վայելուչ հնութիւն հանդերձ ճարտարութեամբ ի զանազան ձևս բանից փոփոխելով զնոյն զվսեմութիւն ոճոյ, և զգերազանց ասացուածս՝ որք առաւել ի ձայնսն բկ, գձ, գկ, դձ, դկ»»[5]: Նախորդ հոդվածներում Մովսես Խորենացուն վերագրվող շարականները փաստորեն և բանասիրորեն վերլուծելիս, եկանք այն եզրակացության, որ Յարութեան Հարցերը նրա գրչին չեն պատկանում: Ինչպես պատմիչը, այնպես էլ շարականների մեծ գիտակ, բազմավաստակ հ. Գ. Ավետիքյանը իրավացիորեն Բարսեղ Ծոնին է վերագրում Յարութեան վերոհիշյալ հինգ Հարցերը: Այդ շարականների ոճը, լեզուն, գործածված պատկերները և խոսքի գեղարվեստական մյուս միջոցները ևս իրենց հերթին հաստատում են, որ դրանք ոչ թե հինգերորդ, այլ յոթերորդ դարի գործ են և պատկանում են Բարսեղ Ծոնի գրչին: Որո՞նք են այդ շարականները և ի՞նչ արժեք են ներկայացնում դրանք: Հարության վերոհիշյալ 5 ձայներով Բարսեղ Ծոնը գրել է 24 Հարց, որից բկ՝ 5, գձ՝ 5, գկ՝ 3, դձ՝ 5 և դկ՝ 6: Բոլոր Հարցերը ունեն իրենց Գործատունը և կրում են փառաբանական բնույթ: Ինչպես Շարակնոցում եղած բոլոր Հարցերը, այնպես էլ սրանց ելակետը և ատաղձը Բաբելոնի երեք մանկունքն են՝ տարբեր առումներով և տարբեր փառաբանություններով: Ավագ ձայն ունեցող 4—5 Հարցերում փառաբանվում է Փրկիչը: Երկնային զորքերն ու բնակիչներն անգամ երկյուղածությամբ փառաբանում են Արարչին, որը թողած իր հավիտենական, անճառ փառքը, խոնարհվել, իջել է երկիր՝ կամավոր խաչվելու, անարգվելու հրեաների կողմից, որպեսզի իր մահվամբ նոր կյանք տա մարդկությանը, որը դատապարտված է եղել Ադամի ժամանակներից: Այդ Հարցերի մեջ շարականագիրը փառաբանության հետ միաժամանակ դիմում է Փրկչին, խոսում նրա հետ և իր երգին տալիս աշխույժ, կենդանի բնույթ: Դիմում է նաև Արարչին, որ մեղապարտ մարդկությունն ազատելու համար Նա իր Որդուն ուղարկել է երկիր, մարմնացել է հավիտենական Բանը սուրբ կույսի արգանդում և որպես մարդ, ապրել է մարդկանց մեջ շուրջ երեսուն տարի՝ կամավոր խաչվելու, մահանալու, դժոխքն ու խավարը քանդելու և երեք օրից հետո հարություն

[5] Հ. Գ. Ավետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814 թ., էջ 284—285;

առնելու համար: Եվ այդ ամենը կատարվել է «Հօր հաճութեամբ»: Փրկիչը ոչ միայն մարդացել է, այլև ծառայի դեր է կատարել մարդկության համար և այդ համեստությամբ, մարդասիրությամբ և անձնուրացությամբ նա հասել է իր նպատակին, այն է՝ «կանգնեցեր զմահացեալսն»: Երրորդ ձայնին (գձ) պատկանող հինգ Հարցերը հետապնդում են նույն նպատակները՝ տարբեր կողմերից, տարբեր եղանակներով: Այս Հարցերում փառաբանականի կողքին բազմաթիվ են նաև խոսքի գեղարվեստական ձևերը:

Փրկչի կյանքը համարվում է «անապական արյուն», որով նա ցողել է տիեզերքը, մաքրել կեղտից ու խավարից, որոնցով ապականված է եղել տակավին Ադամի ժամանակներից: Նա, որ ստեղծել է աշխարհն ու արևը, բոլոր արարածները, այժմ իր ստեղծածների ձեռքով բարձրացել է խաչափայտի վրա: Տիեզերքն անգամ ցնցվել է Փրկչի չարչարանքներից և արևը խավարել.

«Եւ տեսեալ արեգականն
Զարարիչդ ի վերայ խաչին,
Զհանդուրժեալ չարչարանաց Արարչիդ,
Խաւարեցոյց զլոյսն ի միջօրէի
Ի յահէ փառաց քոց
Տէր Աստուած, Հարցն մերոց»[6]:

Նա, ով կենարար էր, կյանք էր բաշխում աշխարհին, այսօր հրեա զինվորը տեգով ծակում է նրա կողը, որտեղից

«Աղբիւր կենդանաբար բղխեալ
Լրուաց զտիեզերս ի մեղաց...»

Աշխարհին անմահություն տվողն այժմ ինքն է կամավոր հրաժարվում իր կյանքից և ընդունում մահը: Թեև ինքը, ըստ շարականի, ամենազոր է, «էակից Հօրը» և «լի է բարութեամբ» և մեռելներին կյանք է պարգևել, սակայն հիմա, անօրենների ձեռքով, անարգվում, խոցվում, ծարավում ու տանջվում է խաչափայտի վրա՝ նույն անօրենների և աշխարհի փրկության համար: Եթե առաջ ինքն էր հսկում ու կառավարում երկնի զորքերին, «վեցթևյան» սերովբեներին և «բազմաչեայ» քերովբեներին, այսօր նրա մարմնին հսկում է գերեզմանատան պահակը.

«Կենդանիդ յաւիտենից Քրիստոս,
Այսօր ի գերեզմանի եդար.
Եւ պահապանքն պահէին զգուշութեամբ
Զգերեզման քո, Տէր Աստուած Հարցն
մերոց»[7]:

Վառ ձայնի (գկ) Հարցերում շոշափվում է Քրիստոսի մարդեղության խորհուրդը: Անճառելի Բանը մարմին է առել կուսից ադամորդուն փրկելու համար: Այստեղ շարականագիրը Փրկչին այլաբանորեն համարում է «գառն անարատ», որը «զենաւ մեզ պատարագ... ի վերայ խաչին», որով և նա կարողացավ քանդել դժոխքը, և բանալ դրախտի դռները մարդկության համար: Փրկիչն իր հարությամբ անեծքից ու դատապարտումից ազատագրեց մարդուն և հնարավորություն տվեց նրան.

«Ի կոչումն արքայական սեղանոյն
տէրունական,
Մարմնոյ և արեան Աստուծոյ հարցն
մերոց»[8]:

Չորրորդ (դձ) ձայնի Հարցերը շարունակում են նույն մոտիվները և նույն փառաբանությունները, որոնք տեղ-տեղ ոչ միայն նույն մտքերն ու զգացմունքներն են դրսևորում, այլև մի քանի տեղ կրկնվում են՝ թեև տարբեր ձևակերպումներով ու եղանակներով:

Վերջ ձայնով Բարսեղ Ծոնը դրել է վեց Հարց՝ իրենց Գործատներով՝ «Որ զամենազօր», «Այսօր ցնծան երկինք», «Փառաւորեալ է անուն քոյ», «Որ յառաջ քան զարև», «Անսկիզբն Բանդ» և «Որ աներեսակերպ աթոռ նստիս»:

«Որ զամենազօր» Հարցի սկզբում հիշվում են հնոցում եղած Բաբելոնի երեք մանկունքը, որտեղ երևացել է Տիրոջ զորությունը: Ապա երգվում է Փրկչի «Բազմազեղ ներողութիւնը» առ «զօրաց երկնաւորաց», «բազմագութ» ողորմությունը առ մարդկային ցեղը, որի համար նա խաչ բարձրացավ: Գործատունը խորացնում է Հարցի մտքերն ու փառաբանությունը. «Այսօր ցնծան» Հարցի մեջ ցնծության մոտիվներ են հնչում: Երկինքն ու երկիրն ուրախության մեջ են, որովհետև.

«Այսօր նորոգեցան տիեզերք ամենայն,
Յարութեամբ քո Տէր Աստուած հարցն
մերոց»[9]:

Երրորդ Հարցն ամբողջովին ներբող ու

[6] Ծարական, Երուսաղեմ, 1936 թ., էջ 441;

[7] Անդ, էջ 448:

[8] Անդ, էջ 456:

[9] Անդ, էջ 491;

վառաբանություն է՝ նվիրված Փրկչին և Աստծուն.

«Փառաւորեալ է անուն քո սուրբ...
Որ ի բարձունս բնակեալդ ես
Եւ հայիս յարարածս քո քաղցրութեամբ»[10]:

Ուշադրություն արժանի է սույն Հարցի Գործատունը, որը աչքի է ընկնում իր ճարտասանական ոճով: Խաչված և հարություն առած Փրկիչը.

«Որ հրեշտակացն անտեսանելին է,
Ի վերայ խաչին տեսաւ.
Որ սրովբէիցն անհասանելին է,
Ի գերեզմանի եղաւ.
Որ քրովբէիցն անիմանալին է,
Ի յերրորդ աւուր յարեաւ»[11]:

Հետևյալ Հարցը («Որ յառաջ») երգում է այն մասին, որ Քրիստոսը որպես «իմանալի Բան» արևից էլ առաջ է գոյություն ունեցել, որին «մարգարէն վերակոչեաց հոգի յերեսաց մերոց»: Ահա այդ հոգու զորությամբ էլ Նա

«Զդրունս դժոխոց փշրեաց,
Եւ զարգելեալսն ի նմա կորզեաց ի
կեանս»[12]:

Մյուս երկու Հարցերում գերիշխող զգացմունքներն են փառաբանությունը և երկյուղածությունը: Մի Հարցում Փրկիչը «անսկիզբ Բանէ» է, «Թագաւոր անմահ է», որի համար շարականագիրը կոչ է անում՝ «առաւել բարձր արարէք զնա յաւիտեան».

[10] Անդ, էջ 493:
[11] Անդ, էջ 494:
[12] Անդ, էջ 496:

իսկ մյուսում, այս ձայնի վերջին հարցում, նույն Փրկչին բանաստեղծը դիմում է այսպես.

«Որ յահեղակերպ աթոռ նստիս,
Եւ ընդ Հօր ես յէութեան...
Ուստի սերովբեքն ի խոնարհ ունելով,
Զդեմս յարփիահրաշ փառաց քոց»...[13]

Այստեղ դատապարտվում է միաժամանակ Հուդայի արարքը՝ հակադրելով Քրիստոսի փառքին, մարդասիրությանն ու ողորմածությանը.

«Իսկ Յուդայի լրբութեամբ մերձեալ,
Ի համբոյր նշաւակ և առիթ մատնութեան...»[14]

Սակայն հաղթանակով է ավարտվում ամեն ինչ: Երեք օրից հետո Փրկիչը հարություն է առնում, քառասուն օր դարձյալ նա երկրի վրա ապրում է, քարոզում և հրաշքներ գործում, ապա համբառնում երկինք: Վերջին Հարցի Գործատունը վերջանում է այդպես.

«Համբարձաւ Աստուած օրհնութեամբ,
Եւ զօրք երկնից երգէին՝
—Ո՞վ է սա թագաւոր փառաց...
—Սա է նա, որ ի հովանաւոր և ի լուսեղէն
Ամպոցն ձայն եղև,
—Դա է որդի իմ սիրելի,
Բարձր արարէք զնա յաւիտեան...»[15]

Բարսեղ Ճոնով էլ վերջանում են մեզ հայտնի 7-րդ դարի շարականագիրները: Իսկ նրա խմբագրած Ճոնընտիր շարականն էլ ստանում է կայուն, կանոնական բովանդակություն:

[13] Անդ, էջ 500:
[14] Անդ, էջ 500:
[15] Անդ, էջ 501:

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ)

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՋԱՆՔԵՐ*

Մայր տաճարի վերանորոգման գիտական մեթոդիկայի հարցերին անդրադարձել է նաև անվանի նկարիչ Վարդգես Սուրենյանցը «Մուրճ» ամսագրում հրապարակած իր «Դարձյալ Էջմիածնի տաճարի նորոգման մասին» հոդվածով[31]:

Դրանից պարզվում է, որ Վարդգես Սուրենյանցը Մակար Ա և Խրիմյան Հայրիկ կաթողիկոսներից նախապես հրավեր է ստացել ստանձնել ս. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման ղեկավարությունը, սակայն հետագայում անհայտ պատճառով նույնիսկ չի ներգրավվել այդ կապակցությամբ ստեղծված հանձնաժողովներում: Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին գրած նրա ընդարձակ զեկուցագիրը նույնիսկ մնացել է անպատասխան: Գուցե մասամբ այդ է պատճառը, որ հիշատակված երկու կաթողիկոսների օրոք կատարված վերանորոգման աշխատանքներին Սուրենյանցը խիստ բացասական գնահատական է տվել՝ գտնելով, որ դրանք եղել են անծրագիր և միայն գործնական նեղ նպատակներ հետապնդել. «...ավելի ոճի ավերման, քան վերականգնման են ծառայել»[32]: Տվյալ դեպքում պետք

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1976 թվականի № № Ե—Զ-ից:

[31] «Մուրճ», 1909, № 88, էջ 4: Համարյա նույն բովանդակությամբ, օգտագործելով Հայկ. ՍՍՀ Պետական արխիվում պահպանված տեքստը (Դիվան հայ կաթողիկոսների, ֆոնդ 57, գործ 197, էջ 22—27), Գ. Հարությունյանի (որը հավանաբար անտեղյակ է եղել հոդվածի հրապարակված լինելուն) առաջաբանով հոդվածը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1974 թ. հունվար-փետրվար համարում, էջ 35—39:

[32] **Վ. Սուրենյանց,** Հաղագս վերաշինության տաճարին սբ. Էջմիածնի, «Էջմիածին», 1947, հունվար-փետրվար, էջ 36:

է ենթադրել, որ նկատի ունի վերանորոգման ժամանակ տաճարի հիմնախարիսխների ձևի աղավաղումը, որովհետև անմիջապես հայտնում է այն կարծիքը, թե հայկական տաճարի ամենաբնորոշ մասը եռաստիճան հիմնախարիսխն է՝ հայերի կողմից ժառանգված հին հելլենացիներից:

Մայր տաճարի վերականգնման Սուրենյանցի պատկերացրած գիտական սկզբունքներին մենք արդեն մասամբ ծանոթացանք ճարտարապետ Շտերնի կողմից կազմված նախագծի արժանիքները քննարկելու կապակցությամբ: Որպես ականատես, օրինակներ բերելով եվրոպական որոշ երկրների (Իսպանիա, Ֆրանսիա) վերաշինական աշխատանքների փորձից (մասնավորապես Վիոլե դե Դյուկի կողմից վերաշինված Սեն-Դենիի եկեղեցին), Վ. Սուրենյանցը միանգամայն իրավացի կերպով գտնում է, որ ամեն մի վերանորոգմանը պիտի նախորդի պատմա-ճարտարապետական առումով կարևոր արժեք ներկայացնող հուշարձանի ուշադիր և բազմակողմանի ուսումնասիրություն, ըստ որում պետք է հավասար չափով ուշադիր լինել և հարգալից վերաբերվել շենքի ոճի ու շինարվեստ առանձնահատկությունների հանդեպ[33]:

«Պետք է ամենայն ուշադրությամբ,— գրում է նա,—դիտել և նկատել ամեն մի մանրամասնություն, որպեսզի հեշտ կարելի լինի նորան նույնությամբ վերականգնել: Շատ անգամ նույնիսկ աննշան երևացող մանրամասնությունը կարող է զարկ տալ հնագույն, նախկին ձևերի գյուտին»[34]:

Այնուհետև նա խորհուրդ է տալիս զգուշանալ ամենահին ձևերը վերականգնելու մոլուցքից: Նրա կարծիքով պետք է անձեռնմխելի թողնվեն հետագայում հավելված մասերը, այդ թվում՝ Մայր տաճարի զանգակատունը, Իշման ս. սեղանը, խորաններն ու սեղանները, նույնիսկ թանգարանը, որովհետև դրանք գեղարվեստական արժեք ունեն ու տաճարի երկարատև պատմության հիշատակարաններն են ներկայացնում. «Հետևապես,—գրում է Սուրենյանցը,—տաճարի թե՛ ներքին և թե՛ արտաքին ձևերին դիպչելը աններելի սխալ կլինի»[35]: Հիմնավորելու համար իր տեսակետը, նա վկայակոչում է Մայր տաճարի ուշ միջնադարյան պատմությունը, անդրադառնում Մովսես Տաթևացի, Եղիազար Այնթապցի ու Գևորգ Դ կաթողիկոսների ժամանակ կատարված հավելումներին ու գտնում, որ դրանք վկա են ազգի մտավոր զարգացման երեք շրջանների, և դրանցից ամեն մեկն արդեն պատմություն է դարձել[36]: «Տաճարը պիտի այնպես նորոգվի,—եզրակացնում է նա,—որ մարդ չիմանա, թե նրան ձեռք է դիպել, իբրև թե ընդհանրապես վնաս չի հասցված եղել անողոք ժամանակի շընչից»[37]:

Վ. Սուրենյանցի հոդվածում ընդհանուր առմամբ կան ընդունելի տեսակետներ, ու միայն թանգարանի հարցում դրանք չեն համընկնում Մեսրոպ վարդապետի կարծիքի հետ: Թերևս դրանով պետք է բացատրել, որ Վարդգես Սուրենյանցն առաջարկում էր իր զեկուցագրում առաջ քաշված սկզբունքները հաշվի առնել մրցույթի պայմանները կազմելիս ու «Մուրճ»-ում տպագրված իր հոդվածում վրդովմունք է հայտնում իր առաջարկները մրցույթի պայմաններում չօգտագործելու համար:

Մեսրոպ վարդապետը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականորեն է լծվում ս. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման գործին, դառնում բոլոր նախապատրաստական միջոցառումների ջերմ մասնակիցը: Մայր Աթոռի հանձնարարությամբ նա 1908 թ. ապրիլի 26-ին Թիֆլիսում հրավիրում է ճարտարապետներից ու նկարիչներից բաղկացած մի խորհրդակցություն: Այստեղ էլ ընտրվում է մի մասնաժողով, որին հանձնարարվում է տեղում ծանոթանալ տաճարի վիճակին ու մանրամասն զեկուցում ներկայացնել: Մասնաժողովի կազմում էին ճարտարապետ Զոհրաբյանը, Բիլֆելդը, Տեր-Սարգսյանը, արձանագործ Նիկոլաձեն, նկարիչներ Ֆոգելը և Թադևոսյանը: Խորհրդակցությանը մասնակցել են նաև նկարիչներ Լոպատինսկին, Ֆեյթվաճյանը, Գրինևսկին, Թոիձեն, Շմերլինգը, Հակոբյանը, ճարտարապետներ Սարգսյանը, Բաբանյանը և ուրիշներ: Այս բոլորից հետո տաճարի դրությունը ուսումնասիրելու համար Մայր Աթոռ է ժամանում մի մասնաժողով, որի կազմի մեջ մտնում էին ճարտարապետներ Տեր-Միքայելյանը և Տեր-Սարգսյանը, նկարիչներ Թադևոսյանը և Ֆոգելը ու արձանագործ Նիկոլաձեն[38]:

---

[33] **Վ. Սուրենյանց**, հիշ. աշխ., էջ 33:

[34] Նույնը: Քաղվածաբար բերված այս նախադասությանը հանդիպում ենք նաև Վ. Սուրենյանցի ձեռքով գրված ռուսերեն գրության պատառիկում (տես Երևանի պետական պատկերասրահի արխիվ, ֆ. 38, ի-4415, գ. 253):

[35] Նույնը:

[36] Նույնը, էջ 39:

[37] **Վ. Սուրենյանց**, հիշ. աշխ., էջ 38:

[38] «Արարատ», 1908, էջ 374: Այս և այլ առիթներով մասնաժողովների կազմում չենք հանդիպում Թ. Թորամանյանի անվանը, որպիսի հանգամանքը

Պետք է ենթադրել, որ նշված խորհրդակցության ժամանակ էլ որոշվել է անհապաղ կատարել Մայր տաճարի մանրամասն չափագրությունը, որը և հանձնարարվում է ճարտարապետ Ն. Ա. Մադաթյանին:

Նկատի ունենալով, որ չափագրությունը հիմք պիտի ծառայեր Մայր տաճարի վերանորոգման նախագիծ կազմելուն, երբեմն Մայր Աթոռ էին ժամանում Մայր տաճարի վերանորոգման Թիֆլիսի մասնաժողովի անդամները՝ ծանոթանալու համար կատարվող չափագրության ընթացքին[39]:

Մայր տաճարի չափագրության աշխատանքն սկսվում է 1909 թ., և ավարտվում 1910-ին: Այնուհետև մաքրագրված չափագրությունը, որը բաղկանում էր 9 մեծադիր թերթերից (հատակագիծ, 4 ճակատ, 4 կտրվածք), բազմացվում է վիմագրության միջոցով, որպեսզի տրամադրվի վերանորոգման նախագիծ կազմողներին[40]:

Չափագրությունն ավարտվելուց հետո, 1910 թ. մայիսի 15-ին, Մայր Աթոռում հրավիրվում է մի նոր խորհրդակցություն, որին մասնակցում են Մայր տաճարի վերանորոգման մասնաժողովի անդամներ ճարտարապետներ Բաբանյանը, Տեր-Սարգսյանը, Մադաթյանը և նկարիչներ Բաշինջաղյանն ու Ֆեյթվաճյանը: Նրանք Իզմիրլյան կաթողիկոսին (1908—1910) ներկայացնում են տաճարի չափագրությունը և բանավոր բացատրում կատարվելիք վերանորոգման մանրամասնությունները:

Նույն օրը, երեկոյան, Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի նախագահությամբ և Կոմիտաս վարդապետի քարտուղարությամբ, մասնակցությամբ Սինոդի անդամների, Հայրապետական Դիվանի ու Թիֆլիսից ժամանած Մայր տաճարի վերանորոգության մասնախմբի ճարտարապետ և նկարիչ անդամների, տեղի է ունենում խորհրդակցություն, ուր և հանգում են հետևյալ եզրակացության.

ա) Անհապաղ սկսել Մայր տաճարի կտուրի վերանորոգումն ու այն ավարտել մինչև աշնան վերջը:

բ) Թիֆլիսի ճարտարապետների և նկարիչների մասնախումբը պետք է անմիջապես Մայր տաճարի վերանորոգման նախագծի մրցույթ հայտարարի՝ ծրագրերն ու պայմանները նախապես համաձայնեցնելով Վեհափառ Հայրապետի հետ:

գ) Նկատի ունենալով, որ Մայր Աթոռում կառուցված շենքերը ճարտարապետական-գեղարվեստական միասնություն չեն կազմում, այսուհետև նոր շենքերի կառուցումը իրականացնել միմիայն ձեռնհաս մասնագետ ճարտարապետների միջոցով ու նրանց հսկողության ներքո[41]:

Մինչդեռ Մայր տաճարի վերանորոգումը նախապատրաստելու ուղղությամբ գործադրվում էին բազում ջանքեր, տաճարի արեվելյան հավելված թանգարանային շենքի կտուրը վնասվել էր այն աստիճան, որ ներծծվող խոնավությունը վտանգում էր այնտեղ պահված թանկագին զգեստներն ու հնությունները[42]: Անհրաժեշտ էր անհապաղ հայթայթել դրամական միջոցներ և կատարել կտուրի վերանորոգումը:

Կաթողիկոսական տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը այդ նպատակով դեռևս 1908 թ. հունվարի 17-ին դիմում է դրամատեր և բարերար Ալեքսանդր Մանթաշյանին՝ խնդրելով հանձն առնել Մայր տաճարի տանիքի վերանորոգման ծախսերը, իր կողմից նշանակված անձի և ճարտարապետի միջոցով սահմանելով հսկողություն տրամադրված միջոցների ծախսման վրա:

Ալեքսանդր Մանթաշյանը պաշտոնապես հայտնում է, որ հանձն է առնում ֆինանսավորել Մայր տաճարի տանիքի վերանորոգումը և ավելորդ է համարում իր կողմից հսկիչներ նշանակելը և խնդրում է ստեղծել մի հանձնաժողով՝ նախագահությամբ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի, անդամակցությամբ Կոմիտաս վարդապետի և երկու կամ երեք այլ անդամների (ընտրությունը թողնելով նախագահի հայեցողությանը): Այնուհետև հայտնում է իր կարգադրության մասին, որով 40 հազար ռուբլի է տրամադրում աշխատանքներն սկսելու համար և հավաստիացնում, որ Մայր տաճարի նորոգությանը նպաստելը եղել է իր վաղեմի բաղձանքը[43]:

Հավանաբար դրանից հետո կոնկրետ աշխատանքներ են ձեռնարկել Մայր տաճարի տանիքի վերանորոգման ուղղությամբ: 1910 թ. վերաբերող մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսի մակագրությամբ հանձնարարված է եղել Մայր տաճարի վերանորոգության մասնաժողովին, ապահովության հա-

---

հավանաբար պիտի բացատրել նրա նկատմամբ Մեսրոպ վարդապետի անբարյացակամ վերաբերմունքով:

[39] «Արարատ», 1909, էջ 908:

[40] Այդ գծագրերի տակ կան նախագահ Օ. Շմերլինգի, ճարտ. Ն. Մադաթյանի և քարտ. Գ. Գրիգորյանի ստորագրությունները:

[41] «Արարատ», 1910, էջ 399—400:

[42] Նույնը, 1908, էջ 151:

[43] Նույնը, 1908, էջ 150—151:

մար, տանիքը ծածկել թիթեղով[44]: Կատարվե՞լ է, արդյոք, Վեհափառի այս կարգադրությունը, վստահ ասել չենք կարող, քանի որ մեզ հասած տեղեկություններում այդ չի վկայվում:

Մայր տաճարի տանիքի նորոգման մասին հավաստիանում ենք մի այլ փաստաթղթից: Առաջացած վեճերի կապակցությամբ Թիֆլիսից ժամանած հանձնաժողովի արձանագրության[45] մեջ կարդում ենք. «Քննութեան ենթարկուեցին գործի համար պատրաստուած նիւթերը՝ աւազ, քար, նոյնպէս և լիովին պատրաստուած կտուրի համար քարէ պլիտաները (սալերը—Վ. Հ.) 400 հատ: Աւազի յատկութիւնը լաւ է, բայց անհրաժեշտ է ցերեզիտի (կապակցող նյութ—Վ. Հ.) հետ գործածութեան համար լուանալ: Պատրաստուած պլիտաները իրենց չափերով համապատասխանում են տուեալ չափերին, լաւ տեսակ քարից են, անկիւնների կանոնաւոր մշակութեամբ չետվերտնիկներով (քառորդիկներով—Վ. Հ.) բոլոր չորս կողմից»[46]:

Արձանագրությունը կազմված է 1914 թվականի փետրվարի 14—15-ին, այսինքն առաջին աշխարհամարտը սկսվելուց 5 և կես ամիս առաջ: Միանգամայն հնարավոր է, որ, չնայած անբարենպաստ ժամանակներին, վերը հիշատակված քարե սալերը տեղադրված լինեն տանիքին[47]:

Մայր տաճարի վերանորոգման հանձնաժողովի գործունեության շատ կարևոր փաստաթուղթ պետք է համարել նախագծի մշակման համար հայտարարված մրցույթի ծրագիրը: Այն կազմվել է Թիֆլիսի ճարտարապետների և նկարիչների մասնախմբի կողմից:

Համաձայն այդ ծրագրի մրցույթի, մասնակիցներին առաջադրվում էր.

ա. Վերականգնել տաճարի նախկին ցոկոլը (հիմնախարիսխը):

բ. Ջանգակատունն ամբողջությամբ պահպանել:

գ. Թողնել կողմնային (հարավային և հյուսիսային) երկու մուտքերը:

դ. Անփոփոխ պահպանել կողքի երկու աբսիդների և գլխավոր սեղանի վրա կանգնեցված երեք փոքր գմբեթները, իսկ գլխավոր գմբեթում թույլատրել փոխել միայն վեղարի թեքությունը:

ե. Ոչնչացնել (հանել) կողքի գմբեթների շուրջը իբրև պաշտպանության միջոց (ամրոց) շինված շրջապարիսպը և ըստ հնարավորության հին տեսքով վերականգնել տաճարը պսակող քիվերն ու ֆրոնտոնները:

զ. Վերացնել Մայր տաճարի արևելյան կողմից հավելված թանգարանի շենքը, որպես տաճարի ընդհանուր ձևին ու ոճին չհամապատասխանող շինություն:

է. Դրա փոխարեն, նույն կողմից, տաճարի հին խորաններին կից ու նրա ոճով, մի նոր շինություն կառուցել՝ բաղկացած 3 մասից, այդ թվում՝ 20 քառ. սաժեն մեծությամբ մի ավանդատուն և 5 քառ. սաժեն մեծությամբ մասանց խորան:

ը. Հյուսիսային խորանի հատակը 7 աստիճանով բարձր անել (յուրաքանչյուր աստիճանը՝ 5 վերշոկ) տաճարի հատակից: Հարավային խորանի հատակի բարձրությունը և աստիճանների քանակը թողնել անփոփոխ:

Մրցույթի ծրագրի 9—18 կետերում շարադրված են մրցույթի պայմանները, իսկ 19-րդ կետում նշված է ժյուրիի կազմը, որի մեջ մտնում էին Մեսրոպ եպիսկոպոսը, Գարեգին վարդապետը, Բիլֆելդը, ճարտարապետներ Բաբանյանը, Գ. Տեր-Միքայելյանը, Ալ. Ռոտինյանը, նկարիչներ Ե. Թադևոսյանը, Հ. Ֆեթվաճյանը և Հ. Գրիգևսկին:

Կաթողիկոսական հատուկ կոնդակով (N 1775 առ 31 հուլիսի 1910 թ.) հաստատված է ինչպես մրցույթի ծրագիրը, այնպես էլ ժյուրիի նախագահն ու անդամների կազմը[48]:

Սրանով ընդհատվում են «Արարատ»-ի տեղեկությունները մրցույթի մասին: Թե ինչպե՞ս է ընթացել այն, ու ինչ արդյունքներ է տվել, մեզ չհաջողվեց հանդիպել որևէ հա-

[44] Նույնը, 1910, էջ 679:

[45] Արձանագրության տակ ստորագրել են Ե. Թադեվոսյանը, Մատթեոս եպիսկոպոսը, Բարկեն վարդապետը, Վրթանես վարդապետը, Հ. Գրիգևսկին, Ա. Կալգինը, Ն. Մադաթյանը, Ռ. Մարտիրոսյանը, Է. Ֆրանկեն: Սրան կից մեկ ուրիշ արձանագրության մեջ (որը ստորագրել են արձանագրողներ Գ. Կեպինովը և Է. Ֆրանկեն), հավաստվում է, որ գմբեթի թմբուկի ներքին ծեփը հեռացնելիս, եղած արձանագրությունները չեն վնասվել:

[46] «Արարատ», 1914, էջ 221:

[47] Որպես ապացույց կարող է դիտվել մեկ ուրիշ վկայություն այն մասին, որ տանիքի սալարկման աշխատանքները կատարվել են ալեքսանդրապոլցի քարագործ վարպետների միջոցով: Դրանցից մեկը՝ վարպետ Եգոր Կորկոտյանը, որը տարիներ հետո, 40-ական թվականներին, աշխատում էր պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում ու մասնակցում Թարգմանչաց վանքի ու այլ հուշարձանների վերանորոգմանը, պատմում էր, որ Մայր տաճարի տանիքի սալերը շարվել են՝ կարաններում խցկելով ձեթով ներծծված բամբակ, որից հետո տանիքի բոլոր սալերը արտաքուստ օծվել են ձեթով, որպեսզի տանիքը պաշտպանվի խոնավության ներթափանցումից:

[48] «Արարատ», 1910, էջ 680:

ղորդման: Բայց որ մրցույթը կայացել է, դրանում չենք տարակուսում, քանի որ շատ տարիներ առաջ, Գևորգ Զ կաթողիկոսի գահակալության տարիներին ու դրանից հետո էլ, անձամբ մի քանի անգամ առիթ ենք ունեցել Մայր Աթոռի արխիվում տեսնելու մրցույթային նախագծերը, որոնք հիմա չկան: Դրանցից միայն մեկի հեռանկարը ցուցադրված է Հին Վեհարանի նորաստեղծ թանգարանում: Նրա տակ կա ճարտ. Ն. Մադաթովի (Մադաթյան) ստորագրությունը: Հեռանկարում պատկերված է Մայր տաճարի հյուսիս-արևելյան տեսքը: Ըստ այդ նախագծի, տաճարի արևմտյան մասը պահպանվում է նույնությամբ, սակայն վերսացված են հին քիվերն ու ֆրոնտոնները: Հյուսիսային կողմի աբսիդի ձախ (արևելյան) կողմից ավելացված է մի դուռ՝ հար և նման առաջինին (արևմտյանին): Ամբողջովին վերափոխված է արևելակողմյան թանգարանի շենքը, ինչպես իր ձևերով, այնպես էլ հարդարանքով: Նրա արևելյան ճակատն ունի բազիլիկային եկեղեցու լուծում, միջին մասը բարձրացված է և պսակված երկթեք կտուրով: Թանգարանի պատերը մշակված են զույգ սյուներով ու շրջանակների մեջ առնված խուլ հարթությունների միջոցով՝ մոտիվներ, որոնք փոխ են առնված վրացական ճարտարապետության ԺԱ—ԺԳ դդ. հուշարձաններից (Ախթալայի եկեղեցի և այլն) ու բոլորովին անհարիր են Մայր տաճարի հնամենի ձևերին:

Սրանով առայժմ սահմանափակում ենք մեր դիտողությունները մրցույթային նախագծերի վերաբերյալ: Մյուս նախագծերին նկատի ունենք անդրադառնալ առանձին, երբ դրանք գտնվեն...

Այսպիսին են եղել այն ջանքերը, որոնք ԺԹ դարի ընթացքում և Ի դարի սկզբին տարվել են Մայր տաճարի պահպանության և վերաշինության ուղղությամբ, ջանքեր, որոնք, սակայն, առանց շոշափելի արդյունքներ տալու, ընդհատվել են առաջին աշխարհամարտի հետևանքով:





ՀԵՂԻՆԵ ՆԵՐՍԵՍՅԱՆ-ՓԱՆԻԿՅԱՆ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ «ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ»-Ը
(Հրատարակության 100-ամյակի առիթով)

1876 թվականին Կոստանդնուպոլսում լույս տեսավ Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք» անմահ աշխատությունը, որը չի կորցրել իր նշանակությունն ու հետաքրքրությունը նաև մեր օրերում: «Ժողովուրդ հայոց,—դիմում է նա իր ընթերցողներին,— քեզ համար նկարեցի դրախտի ընտանիքը... ով դուք ընտանիք հայոց, ուղղեցեք ձեր ներկայն, որ ապագան ուղիղ լինի, տնտեսեցեք ներկայն, որ ապագային հացը չի պակասի... Դու ազնիվ եղիր ու ազնիվ ժողովրդոց բարի ու պարկեշտ օրինակին հետևիր»: Որքա՜ն այժմեական են հնչում 100 տարի առաջ գրված այս իմաստուն տողերը:

Պոլսի պատրիարքական Աթոռից հրաժարվելուց հետո, «Վասպուրականի Արծիվը» նոր թափով սկսեց իր գրական գործունեությունը: Այս անգամ իր հայացքը նա ուղղեց հայ ժողովրդի առօրյա հոգսերին, նրա անմխիթար ընտանեկան կյանքին: Իր պատրիարքության շրջանում էլ նա անձամբ ականատես եղավ ընտանիքների արատավոր կողմերին և ամենաարատավոր ամուսնական կյանքին, որի համար առատ նյութ էին հայթայթում պատրիարքարանի դատաստանական խնդիրների արձանագրությունները:

Այս գրքի լույս ընծայմանը նյութապես նպաստել է հայրենակից, մոլդավաբնակ բարերար Աստվածատուր Զունեղը: Երախտագիտության մեծ զգացումով է խոսում Հայրիկն իր «Առ բարերարն երկասիրութեանս» առաջաբանում: «Դուք գիտէք իսկ թէ քանի դժուարագիտ են դեռ մեր ազգին մէջ գրավաստակաց մեկենասները, որ ոսկոյն հետ գիրք սիրեն և յոժար լինին տընքնասէր հեղինակին երկն ու ջանքը ոսկով պսակել: Որչափ դժուարին է մեծայարգի ոսկին՝ անարգ թղթին և մրին հետ փոխանակել, որ այս աշխարհիս պաշտեցեալ մամօնայն է: Եւ դուք փոխանակեցիք զայն, որ քաջ գիտէք կշռել և համեմատել թե ի՞նչ է ոսկին և ինչ են չպետ համարուած թուղթ և մուր: Պարծի դու, դեռ քեզ նման քիչ մարդիկ գիտեն թէ ոսկին հող է, թուղթ և մուր լոյս են: Բայց լոյսը դիւանին տակ և մթան մէջ անլոյս կը մնայ՝ եթէ ոսկին չօգնէ ու չհանէ զլոյսն ի լոյս»: Նա բարեբախտություն է համարում հայ ժողովրդի նման զավակների գոյությունը, որոնք լույս են սիրում և հայ ընտանիքների բարգավաճումը ցանկանում և չեն խնայում դրամը՝ «հայ տընտասեր մշակաց վաստակավոր գրիչը» քաջալերելու: «Տո՛ւր, մի խնայիր,—ասում է Հայրիկը,—թող գրիչը լոյս հանէ ւ ոսկին ափոէ զայն Հայոց աշխարհին»: Հայ ամեն մի կարող մարդու «սեպուհ պարտքն է համարում» հեղինակը այսպիսի նվիրական բարեգործությունը: «Թերևս հին Հայրենիքդ,—ասում է նա,—այն չքնաղ Անին է, յորմէ դժիեմ բախտն զպապդ յօտարութիւն վարեց: Ցիշէ նաև որդեկորոյս մօրդ, որդիական մեծ պարտքդ: Օ՛հ, այդ մեր սևաւոր անբախտ մայրիկը՝ իր բեղնաւոր դրախտին բիւրաւոր ընտանիքը համասպիտ կորոյս և ինքն այրի մենաւոր, անմխիթար կը նստի որպէս բու իր աւերուկաց վերայ: Ձեռն տուր

ինձ, լոյս տանք ու սրբենք մեր մօր արտասուքը, որ Ծիրակայ շիջեալ փառաց վերայ դեռ աղիողորմ կ'ողբայ: Ձեռն տուր, շինենք զոր տգիտութիւն փլուց թողուց աւերակ: Շինենք, այո՛, չէ թէ նիւթական քարով, այլ գիտութեան լուսով: Քարը դիւրաշարժ է, միշտ կը կործանի, իսկ լոյսն անշարժ է, հաստատ և կայուն, միշտ անկործան կանգուն կը մնայ»: Մեծ մտածողը «դրախտի ընտանիք» էր երազում, որից կախված է իր համոզմամբ հայ ժողովրդի առաջադիմությունն ու հուսալի ապագան: Իր երկասիրության մեջ Խրիմյան Հայրիկը իրեն հատուկ արիությամբ կոչ է անում պատերազմել և արմատախիլ անել հայկական ընտանեկան կյանքում եղած «ծանրալուր» արատները, կտրել անբարոյականության «բազմաճղի ծառը», որ այնպես խոր արմատ է դրել հատկապես վերին խավի հասարակության մեջ:

«Ես կը գովեմ քո եռանդը, որ կձգտիս դէպի յառաջադիմութիւն և քաղաքակրթութիւն, միայն թէ սխալ ըմբռնած ես»,—ահա այդ մոլորությունից է որ նա զգուշացնում է հեռու մնալ: Իր գրքում նա բազմիցս ցույց է տալիս հայ կյանքում բուն դրած արատները, որ պիտի վերացվեն ու մատնացույց անում առողջն ու բանականը, որ կա հայ ընտանիքում: Խրիմյան զարմանալի առաջադիմական մտքեր է հայտնում ընտանեկան կյանքի, ամուսնության, ամուսինների փոխհարաբերությունների, կնոջ իրավունքների և շատ այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

Խրիմյան Հայրիկն իր երկասիրության մեջ պաշտպան է կանգնում հայ կնոջ ազատությանը՝ այր մարդու հետ հավասար իրավունքներ պահանջելով: Հայ կնոջը նա համարում է գերդաստանի «հոգին»: Նա ջանում է երանավետ կյանքը երկրի վրա տեղափոխելու, երկնային դրախտը հաստատելու հայ ընտանիքի, հայ հասարակության, ամբողջ ժողովրդի մեջ: Բայց նա կարծես երկչում է կանանց հարցում այդքան շռայլ գտնվելու համար, ուստի ասում է. «Ձիս պիտի դատէք, երբ եկեղեցու վարդապետ, աւետարանի աշակերտ, կենաց հացին տնտես, թողու իր բարձրագոյն պաշտօն, Պողոսի քարոզած երկնից անճառ դրախտը, և երկնի ընտանեկան դրախտի համար ճառէ: Ճշմարիտ կլինէր քո այդ դատաստան, եթէ երկնից դրախտ մոռնայի, ու չկապէի զայն երկրիս դրախտի հետ, որ իսկապէս երկնից դրախտի հիմն է»:

Այո՛, Մեծ երազողն այդպես էր ցանկանում լինեն մեր առօրյա կյանքը, որի հիմքը ընտանեկան կյանքն է, իսկական դրախտ դարձնելու շատ դժվարին գործը: Եվ այդ նպատակով էր, որ նա գրեց «Դրախտի ընտանիք» հետաքրքիր աշխատությունը, որը բաղկացած է 18 գլխից: Առաջին երկու գլուխները, որ կրում են «Դրախտի ընտանիք» և «Դրախտի ընտանիք արտաքոյ» խորագիրը, պարունակում են առաջին մարդկային զույգի կյանքի վերաբերյալ տեղեկություններ եդեմական դրախտում և դրախտից դուրս, սուրբ Գրքի և սրբազան մատենագիրների համեմատ: Երրորդ՝ «Նահապետական տուն և ընտանիք» գլուխը վերաբերվում է հայ նահապետական ընտանիքին, որը, ինչպես ցավով նշում է Հայրիկը, «գաղթական հայոց մասը ուր որ գնաց, հոն իր մեռելոց հետ թաղեց նաև իր հայրենեաց հին ու պատուական աւանդները: Մասիսին հնութեան ու փառաց հետը մոռացաւ նաև Էջմիածնի բարձրագոյն Կաթողիկէն»: Ահա չարիք, որից ազգը պիտի հեռու պահել: Ուստի Հայոց Հայրիկը մեծ «սրտացավությամբ» դիմում է իր ժողովրդին, որպես հին նահապետական ժառանգորդ զավակների, մնան իրենց հայրենի տանը, չհեռանան, սիրեն Մասիսը... և սուրբ Գրիգորի Կաթողիկեն: «Մշակեցէք հայոց ձեռատունկ այգին, Արարատայ դաշտը, մի թողուք յաւիտեան նահապետական տուն և ընտանիքը: Դուք Մասիսին հարազատ որդիներն եք, Մասիսը ձեր սեպական տունն է. թող չէն մնա ձեր տունը»:

Սա արժեքավոր հայրենասիրական կոչ էր՝ ուղղված հայ հասարակությանը: Չորրորդ՝ «Մարդ և ամուսնություն» գլխում հեղինակը մանրամասն քննում է ամուսնության հարցերը: Ամուսնությունը բնական և անհրաժեշտ օրենք է համարվում, որ աշխարհ է եկել Ադամի և Եվայի հետ միասին: Ամուսնության շարժառիթը սերն է, իսկ նպատակը՝ «մարդկային սեռի բարգաւաճումը ի փառս իւր Արարչին»: Ամուսնության բուն օրենքը, ըստ Հայրիկի, սերն է, որ հատուկ է «ամեն թռչնոց և անասնաց, առանց ամուսնական պայմանին՝ որ միմիայն ազատ մարդոյն համար է»: Ոչ ոք իրավունք չունի բնական այդ օրենքը խախտելու, քանի որ «Ամուսնական օրէնքը, մեր կեանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է»: Նա ճիշտ կերպով նշում է, որ մարդկային բնությունը կազմված է այնպես, որ այր մարդը միշտ կին մարդու ընկերությունն է որոնում, և հակառակը: Կյանքի բոլոր ուրախություններն ավելի մեծ ու զգալի են, վշտերը՝ թեթև ու տանելի, այս փոքրիկ ընկերության մեջ: Խրիմյան Հայրիկը մեծ խստությամբ դատապարտում է բոլոր նրանց, ովքեր ժխտում են ամուսնությունն ու ընտանիքի սուրբ օրենքը և իրենց շնական փիլիսոփայությամբ քարոզում անառակություն, կամ կոչ են ա-

նում մարդկանց խորշել ամուսնությունից ու կանանցից «իբրև չար արարածներ» և ձրգտում են 'Ի'ոգինեսի նման «անին, անտուն ու անընտանիք կարասաբնակ լինեն»: Մեջբերելով սուրբ Գրքի այն խոսքը, թե «ոչ է բարւոք մարդոյն միայն լինել» առաքյալի այն խոսքին, թե՝ «բարւոք է մարդոյ ի կին սարդ չմերձենալ», Հայրիկը այն միտքն է հայտնում, որ մարդիկ ոչ դատապարտված են կուսական կյանք վարելու առանց երբեք ամուսնության և ոչ էլ ամուսնանալ առանց բացառության: Նա միաժամանակ նշում է, որ եթե Պողոս առաքյալի նման ինքնակամ չլինեին և Ավետարանին անձնվիրությամբ չծառայեին, ո՞վ կավետարաներ այն անզուսպ բարբարոս հեթանոսների մեջ, ո՞վ կշիներ Քրիստոսի եկեղեցին և «ո՞վ կթափէր արիւն հաւատոյ վկայութեան համար»: Ուրեմն, ինչպես հաստատում է Մեծ հումանիստը, «մարդոյն երկու վիճակի կեանքն ևս իւր ազատ ընտրութեան և կամաց թողնւած է»:

Հինգերորդ գլխում («Տուն և ընտանիք») պարզաբանվում են լավ կամ վատ, հաջող կամ անհաջող ընտանիքների վերաբերյալ զանազան հարցեր: Նա ամեն մի ընտանիք դիտում է որպես մի փոքրիկ թագավորություն: Հայ ազգի առաջադիմությունն ու հետադիմությունը, նրան կյանք տվողն այդ ընտանիքն է: Ամեն ինչ՝ լուսավորություն, զորություն, փառք, բարոյական ու նյութական հարստություն, ելնում է ընտանիքի ծոցից. և հակառակը. ընտանիքը բոլոր թշվառությունների աղբյուրն է: Մի խոսքով ազգի ամբողջ կյանքը ընտանիքի կյանքից կախումն ունի, ուստի ընտանիքը պետք է առողջ և օրինակելի լինի: Լավագույն ընտանիքներ ունենալու, նրանց կործանարար ախտերից փրկելու միակ միջոցը Խրիմյան Հայրիկը տեսնում է դաստիարակության, ամենից առաջ ընտանեկան լավ դաստիարակության մեջ: «Առանց հայրական ու մայրական դաստիարակութեան անհնարին է բարեկեցիկ ազգ, ժողովուրդ և հայրենիք կազմել»: Արժեքավոր շատ մտքեր ունի մեծ մտածողը ընտանեկան և դպրոցական դաստիարակության մասին:

«Ամուսնության կամ ընտանեկան կյանքին խափանարար զեղծմունքներ» գլխում (Զ գլուխ) «Վասպուրականի արծիվը» իրեն հատուկ արդարացի բարկությամբ խարազանում է հայ ազգի այն մոլախոտերին, որոնք «սանձակոտոր ազատութեան մէջ», ցանկասիրության ընդարձակ ասպարեզ գտնելով անտեսում են ամուսնության սուրբ կապը, առանց ուխտի ու դաշնի «ամենուրեք կը գտնեն իրենց ցանկութեան կրից յագուրդ» և այնուհետև «մարդկային ամօթը արհամարհելով» ամեն տեղ չճանաչելով պարտք և իրավունք», «ամօթ և պատուոյ զգացումն» իրենց մանկիկները դատապարտում են «կամ արև չտեսնելով չքանալ» կամ որբ մնալ: Նույն կրքոտությամբ նա դատապարտում է նաև ընտանեկան կյանքի մեջ բուն դրած զեխությունը, որի մեջ «հայ ընտանիքներեն շատերը... պարանոցաթաղ եղած են»: Սա հատուկ է առանձնապես հասարակության բարձր խավին: Նա նշում է, որ զեխությունը, շքեղությունը, շռայլությունը, անապարձ ցուցամոլությունը, ունայնությունը, զբոսասիրությունը և շատ նման արատները մի մեծ բանակ կազմած մարախի նման խժռում է ազգի բարգավաճումը, և սա է այսօր նաև պատճառներից մեկը, որ Պոլսի հայոց թիվը նվազում է: Նա չի մոռանում իհարկե նաև սոցիալական այլ պատճառներ, ինչպես օրինակ հարստահարությունն ու կեղեքումը և արտաքին ու ներքին այլ պատճառներ, որոնց մասին խոսում է որպես ժողովրդի զարգացման հիմնական արգելքների:

Զգտնելով իր ժողովրդի բարգավաճման ու զարգացման իսկական ելքը, մեծ Հայրիկն մնում է ասել. «Կաղօթեմ ձեզ համար տառապեալ որդիք հայրենեաց, որ դուք ազատ մնաք այս աւերիչ զեխութենէն, ձեր փառքն ու պերճանք թող լինի հայրենեաց հողն ու դաշտ, ջուրն ու բիւրազան ծաղիկները, եզնամոլ, մաճն ու արօր և շինականին անպաճոյճ իւր խրճիթն»:

Մյուս գլուխներում մեծ մտածողը կանգ է առնում «Ընկերութիւն և իրաւունք կենակից ամուսնոյ», «Հարսանիք և խորհուրդ պսակին», «Կոչումն հարսին և փեսային», «Փոխադարձ պարտիք և իրաւունք առն եւ կնոջ», «Մայր և դայակ», «Ընտանեկան դաստիարակութիւն ծնողաց», «Մահ ծնողաց և օրհնութիւն», «Ընտանեկան կտակ և յիշատակ», «Տաներեց և իւր պարտիք», «Ընտանեկան պատկառանք և ազատութիւն», «Փոփոխութիւն ընտանեկան վիճակին. անկումն և բարգաւաճումն» խնդիրների վրա:

Ուշագրավ են Հայրիկի արտահայտած մտքերը «Ընտրութիւն և իրաւունք կենակից ամուսնոյ» (գլուխ Է) հարցի վերաբերյալ մտքերը, որոնք ըստ մեծի մասին առաջադիմական ու ժամանակակից են: Նա պահանջում է, որ ամուսնացողներն ընտրություն կատարելու ազատ իրավունք ունենան. «Կենակից ամուսին՝ հարսն ընտրելու փեսային անժխտելի իրավունքն է»: Նույնը նա պահանջում է և հարսի համար «Վասն զի հարսը ստրուկ չէ, այլ իբրև ազատ ընկեր իւր փեսային նոյն հաւասար իրաւունքն ունի»: Ժամանակի համար սա շատ ընդուն-

ված և սովորական մի պահանջ չէր, երբ ամուսնությունների մեծ մասը կատարվում էր բռնությամբ և բազմապիսի հաշիվներով ու շահադիտական նկատառումներով: Այս հարցում Հայրիկը խստությամբ զգուշացնում է, որ ամուսնությունները առանց արյունակցության լինեն, հասակի մեջ համեմատություն լինի, շահամոլություն ու զեղծումներ չլինեն, առևանգումների տեղիք չտալ և այլն և այլն: Նա հորդորում է, որ ամուսնական կյանքի գլխավոր պայմանը սերը համարվի, որը և սերտորեն կապում է ամուսիններին: Ո՛չ ոսկին, ո՛չ ադամանդն ու այլ հարստություններ չեն կարող պահել այդ սուրբ կապը: Երբ սրանք սպառվում են, «սէրը տեղի կուտայ»: Կապվել «եկեղեցւոյ պատուիրանին համեմատ սուրբ սիրով, որով Աստուած իր հզոր ձեռքով կապեալ Դրախտի ընտանիքը»:

«Հարսանիք և խորհուրդ պսակին» գլխում իրավացիորեն նշում է, որ հարսանյաց հանդեսները կարևոր են և դաստիարակչական մեծ նշանակություն ունեն, բայց միաժամանակ զգուշացնում է ավելորդ շռայլությունից ու ուժերից վեր ծախսերից. այնպես չլինի, որ «Զմարդն բուն կեանքի հացէն զրկուի» կամ «Հարսանեաց» ուրախության չհաջորդի տխուր և հոգսերով լի կյանքը:

Իմաստուն է Հայրիկը իր խորհուրդներով, և, կրկնում ենք, այդ պահանջները այսօր էլ մեծ արժեք են ներկայացնում մեզ համար:

Երկու ամուսինների փոխադարձ պարտավորություններն ու իրավունքները քննելիս պաշտպան է հանդիսանում կնոջ ազատության և այր մարդու հետ հավասար իրավունքներ ունենալուն: Հայտնի է, որ եկեղեցին տղամարդուն համարում է ընտանիքի գլուխ, իսկ կնոջը՝ նրան հնազանդ մի էակ: Ավետարանը, ըստ Խրիմյան Հայրիկի, կնոջ կորուսյալ իրավունքը դարձյալ իրեն տվեց, «Թէ այսուհետև չիք խտիր, ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս»: Չնայած այն բանին, նշում է Հայրիկը, որ քրիստոնեությունը հանում է կնոջը ստրկությունից, բայց չի ջնջում նրա հնազանդ լինելու պարտքը, որ բնական է և բարոյական: Բայց այս հնազանդությունը, ըստ Հայրիկի, այնպիսին չէ, «ինչպէս ժողովուրդը՝ բռնակալ իշխանին, զինուորը՝ զորապետին, ստրուկ ծառայ՝ իր տիրոջ կինազանդի... ո՛չ, այդպէս, կին ոչ բռնակալութեան հպատակ է, ոչ զինուոր է, ոչ ստրուկ ծառայ: Կին իր ամուսնոյն ազատ ընկեր ու հաւասար լծակից է ամենայն իրաւամբ: Ուստի կին աղախին չէ, այլ տան տիկին և թագուհի, թէպէտ և այր մարդ թագաւոր լինի, իշխան լինի, տէր և գլուխ լինի, բնաւ իրաւունք չունի և կարող չէ այնպէս իշխել, ինչպէս կ՚իշխեն աշխարհիս այլ և այլ տիրող գլուխները իշխանական գաւազանով վասն զի ընտանեկան կեանքին ու վարչութեան մէջ իշխանական սուր, ոստիկանութիւն և գաւազան չկա, այլ միայն սէր, խնամք և միութիւն»:

Հոյակապ են, ուսանելի, դաստիարակող իմաստուն Հայրիկի այս պահանջները: Նրա մտքովն անգամ չի անցնում, որ մարդը կարող է բռնակալ լինել և չարաչար ճնշել իր «կեանքն ու ընկերը», եթե ճանաչի բարոյապես, թե կինը իր «մարմին, իւր սիրտ և հոգի է», միթե հնարավո՞ր է, որ մարդը «ինքզինք և իւր իսկ անձին ազատութիւնը իբրև օտարի բռնակալէ, և մինչև իսկ հարուածէ, չարչարէ և խեղդէ կարծելով թէ իրաւունք ունի, որովհետև ինքն զօրաւոր է թէ բազկով, թէ բանիւ»: Ամուսնության մեջ «Այր ու կին մի մարմին է», ասում է Հայրիկը: Եթե մենք ընդունենք Առաքյալի այն միտքը, «թե կնոջ գլուխը այրն է», բայց ում մտքով կանցնի, որ «կինը նրա ոտքն է», խորհում է մեծ մտածողը: «Ոչ,—եզրակացնում է Հայրիկը,—կինը այր մարդուն նուազագոյն մասն չէ, այլ նորա կողի բուն միջակէտն է, նորա սրտին հոգոյն մօտ, յորմէ Արարչապետին իմաստութիւնը, խորհրդով մի ոսկր առաւ և ամուսնական մարմինը լրացուց»: Եթե նույնիսկ այր մարդը ավելի իրավունքներ ունենար ամուսնական կյանքում, միևնույն է, նա իրավունք չունի «խստութեամբ իշխել»: «Տիրապետութեամբ վարիլ, կամ կարծել թէ կինը իւր ստացուածն է և կամ արծաթագին ծառայ»: Եթե տղամարդը զորություն ունի, «բուռն են իւր բազուկները», միևնույն է, խրատում է Հայրիկը, նա իրավունք չունի «ջարդել ու փշրել իւր կողին մի տկար ոսկրը»: Ըստ Հայրիկի ամեն մի ամուսին պետք է իմանա, որ կինը իր ամուսինն է, «ցմահ դաշնակից ընկերն է, իւր աշխատութեան հաւասար լծակիցն է... իւր մահուան ու շիրիմին լացող ողբերգուն է», «իւր որբ թողած զաւակների խնամատար մայրն է, իւր յիշատակը անմահ պահող ջերմեռանդ այրին է»: Բայց այնուամենայնիվ այր մարդուն ավելի պարտականություններ է տալիս Հայրիկը ընտանիքի և իր ժողովրդի հանդեպ, թերևս այն պատճառով, որ աշխարհիս իշխանական իրավունքը, սուրը, կռվի ասպարեզը տղամարդկանց ձեռքումն է և «փառաց մրցանակը նոքա միայն կընդունին... Հետևաբար՝ պարտաւոր են ընտանեաց համար մեռնիլ ինչպէս կմեռնին Հայրենեաց համար և որ բարոյական Հայրենիքը ընտանիքն է»: Բայց այս դեպքում անգամ Հայրիկը նորից կանգնում է կանանց շահերի պաշտպանի դիրքում. նա նշում է, որ «Այրերը միայն չեն մեռնիր,

կիներն ալ կմեռնին. Մի՞թէ չմեռան ու գերի չվարեցան Ե դարու հայոց առաքինի կանայք, որոց առաքինութեան հանդէս պատմագրելով կը հոչակէ սուրբ Եղիշէ Հայրն»: Ուրեմն պետք չէ, նրա խորը համոզմամբ, բոլորովին տկար համարել «զկին, կարծելով թէ նա մի հողակերտ և դիւրաբեկ անօթ է»: Նա «երբեմն հրացեալ երկաթ կը դառնայ երբ սուրբ կրօնին, ամուսնոյն և զավակաց սէր զինքն կը բոցավառէ ու կը մղէ առ ամենայն վտանգ»: Բացի այդ, նա գտնում է, որ կինն էլ տկարամիտ չէ, նա էլ կարող է բարձրանալ գիտության այլ ասպարեզների, բարձունքները, եթե չունենա ընտանիքի և զավակների մեծ հոգսերը, միայն նրան պետք չէ մեկուսացնել աշխարհից ու ընկերային կյանքից, և որ նա էլ կարող է ըմբռնտանալ: Նոր ժամանակների գիտության և ազատությունների մասին խոսելիս Հայրիկը նշում է, որ կինը հենց որ գրել-կարդալ սովորեց, նա ինքնըստինքյան լուծեց իր համրության հարցը և ճանաչեց իր իրավունքը: Բողոքեց ու հոչակեց աշխարհի առաջ, որ ինքը նույնչափ ազատության իրավունք ունի, որչափ տղամարդը: Նա «Այր մարդոց ընկերութեան մէջ հաւասար աթոռ» պահանջեց: Եվ դա իրավացի է համարում մեծ հումանիստը: Նա գտնում է, որ կինը պիտի ճանաչի աշխարհի կյանքը, «մարդնային ընկերութեան հետ մտերմանալ, խորհիլ գիտնա, մտածել սովորի, որպէսզի իւր ամուսնու ճշմարիտ կենակիցը» լինի և ունենա այն բոլոր հատկությունները, ինչ որ տղամարդկանց բնական և ազատ իրավունքն է պահանջում, ուստի հարկավոր է, որ ամուսինները միշտ խորհրդակցեն միմյանց հետ բոլոր հարցերում, փոխադարձ հավատ ու վստահություն լինի նրանց մեջ, եթե ոչ, ապա կստացվի «Քանդած օջախ»-ի մեջ նկարագրած աղետալի տեսարանը, որ անհոգ ու շռայլ տանտիկինն իր շքեղ տանը բազմաթիվ հյուրերով շրջապատված լոտո է խաղում, երբ հանկարծ գալիս են ամուսնուն պարտքի համար բռնելու (Սունդուկյան) և տունը վերգրում: Նա դատապարտում է նման կանանց ու ընտանիքների կործանման պատճառ համարում:

Կանանց հարցի վերաբերյալ խիստ մտածված, ճիշտ ու խորապես տրամաբանական լուծումներ ու մտահանգումներ ունի Հայրիկը:

«Դրախտի ընտանիք» երկասիրության մեջ ուսանելի շատ բան կա նաև «Ընտանեկան դաստիարակութիւն զաւակաց», «Մայր և դայակ» և այլ գլուխներում, որտեղ նա վեր է հանում «մայրական առաջին ու մեծ պարտականութիւնները և երեխաների ընտանեկան կրթութեան և դաստիարակութեան մեծ խորհուրդը»:

Անշուշտ մեծ Հայրիկը քաջատեղյակ էր այդ մասին գոյություն ունեցող մեծ մտածողների ու մանկավարժների հայացքներին, որովհետև շատ մեկնաբանություններ ու պահանջներ համընկնում են Ժան Ժակ Ռուսոյի և Պեստալոցցու այդ շրջանի մեծ տարածում գտած մտքերին: Նա գտնում է, որ մայրը ամենից առաջ իր կաթով պիտի սնի զավակներին, ծանոթացնի նրանց բնության երևույթների և շրջապատի հետ, արթնացնի աստվածապաշտության գաղափարը նրանց մեջ: Ընտանեկան դաստիարակության գործը պիտի լինի երեխայի բնական հետաքրքրության զարգացման, նրան ուղղություն տալու, նրա մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացումը: Ծնողների չափազանց սերը և չափազանց խստությունը հավասարապես վնասակար են դաստիարակության գործում: Որովհետև առաջինը պատճառ է դառնում կամակորության և անտեղի պահանջկոտության, իսկ չափազանց խստությունը, մանավանդ մարդկային արժանապատվությունը նվաստացնող ծեծը ճնշում և ջլատում է երեխայի բնական աշխույժ ու զվարթ հոգին, որով նրա միտքը բթանում է, սիրտը կոշտանում և առհասարակ մի կրավորական էակ դառնում: Այս պահանջներն ավելի քան այժմեական են հնչում:

Այնուհետև բարոյական դաստիարակության մեջ Հայրիկը բարի օրինակ է պահանջում, քան խրատ, և այս առիթով երկար խոսում (վերջին գլխում)՝ երևան հանելով այն բոլոր ախտերը, որ հայ ընտանիքի շեմքից ներս են մտել և օրեցօր աճում են, ժառանգաբար որդվոց-որդի անցնելով: Հայ ընտանիքն այդ ախտերից ազատելու, նրան բարոյապես բարձր տեսնելու մեծ հոգսն էր, որ առիթ ծառայեց Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք» հրաշալի աշխատության աշխարհ գալուն: Այս երկասիրությունը մեծ սիրով ընդունվեց ժամանակի հայ հասարակության կողմից, և այն չի կորցրել իր նշանակությունը նաև մեր օրերում: Լուսավոր, իմաստուն, ճշմարտացի հայացքներով լի է «Դրախտի ընտանիք»-ը:



ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 4813 ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մատենադարանում Վասպուրականի ձեռագրերի հետ ծանոթանալիս մեր ուշադրությունը գրավեց մեծադիր մի Ավետարան՝ ընդօրինակված 1338 թվականին[1]: Ավետարանում կային պատկերագրական հնամյա ձև ունեցող մի շարք խիստ հետաքրքրական մանրանկարներ: Ցավոք ձեռագրի հիշատակարանում խոսք չգտանք ինչպես այդ մանրանկարների տաղանդավոր հեղինակի, այնպես էլ գրչության կոնկրետ վայրի մասին: Մինչդեռ գրչի թողած այլ կարգի տեղեկությունները բավականին մանրամասն էին. «Արդ, գրեցաւ չորեքվտակեան գետս աստուածահոս ձեռամբ մեղաւոր և փցուն գրչի Մելքիսէդեկի, ի խնդրոյ պատուական քահանայի Հայրապետի յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց՝ Աստրոյ և Նազխաթունի, և զաւակաց իւրոց, և եղբարց իւրոց՝ Ախշիբէկի և Տալիթայի և Էմնայի...

...Այլ աղաչեմք, զի և զիս՝ ըզփցուն գրիչ զՄելքիսէդեկ, և զծնողսն իմ՝ զՍտեփաննոս քահանայ և զԽաթուն, և զեղբարսն իմ զՆերսէս քահանայ, և զՍիրախաթուն, և զԹանկխաթուն, և զՄարեմ տիկին, և զամենայն արեան մերձաւորսս յիշել ի Քրիստոս...

...Գրեցաւ ի թուականի հայոց ՉՁԷ. (1338), ի ժամանակս որ ոչ ղան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև զնաւ յերերման, և քրիստոնեայք էին հալածական և փախստական.

Զի ել ոմն անուն Դամուրտաշ
Եւ արար զազգս մեր ի մաշ,
Եւ Քրիստոս ետ նմա մահու ճաշ,
Եւ եղև յաչս մեր հրաշ.
Քրիստոսի անմահին վաշ,
Որ արար զնա լաշ:

...Եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լինել, զի ամենայն մարդ սխալի ի գործս, և ես առաւել քան զամենայն ոք, զի աշխարհս աւտար էր, և աւուրքս չար, և ժամանակս դառն, և ես պարտական ևս առաւել հոգւով...»[2]:

Ելնելով ձեռագրի մանրանկարների պատկերագրական և ոճական բնորոշ մի քանի առանձնահատկություններից, ենթադրեցինք, որ այն, ամենայն հավանականությամբ, պետք է ընդօրինակված լինի Վասպուրականի գրչակենտրոններից մեկում: Սակայն հիշատակարանի հանգամանալից քննությունը որոշ վերապահումների առիթ է տալիս: Այդտեղ նշված է, որ ձեռագիրն ընդօրինակվել է «զի աշխարհս աւտար»: Բայց որտե՞ղ: Ձեռագրի 147ա էջում կարդում ենք. «...Գրեցաւ ի դառն ժամանակիս,

[1] Ձեռագիրն ունի 188 թերթ, թղթյա է, 32×23,5 սմ մեծության, երկսյուն, բոլորագիր, 24 տող, ութ տերունական մանրանկարներ, մեկ ավետարանիչ, մեկ խորան: Պահպանակը 4 մագաղաթյա թերթերից է, կազմը՝ կաշեպատ տախտակ: Ստացողը Հայրապետն է և պարոն Փանոսը:

[2] Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 306—307:

որ էր թիւն ՉՁԷ, յայսմ ժամանակի ել ոմն անուրէն անուն նորա Դամուտտաշ, և աւար եհան զազգն քրիստոնէից. և Քրիստոս զինքն կորոյս յետոյ, հետ Ալիտուշին»: Խոսքը Թամուրտաշի մասին է, Իկոնիայի

Նկ. 1. «Ավետում»

թուրքմենների տիրակալի[3], որը, ինչպես վկայում է Մատենադարանում գտնվող № 7643 ձեռագրի հիշատակագիրը, 1338 թ. գալիս և պաշարում է Երզնկան. «...Եկն ի վերայ աստուածապահ քաղաքիս Եզնկայիս, և ժողովեց զամենայն շուրջակայիցս զքուրթ և զթաթար, և պաշարեաց զքաղաքս»[4]:

Թամուրտաշի անունը բազմիցս հիշատակվել է այլ աղբյուրներում[5] ևս: Եղած տվյալները վկայում են, որ այդ ինքնակալի քաղաքական գործունեությունը, կապված հայկական տարրի հետ, հիմնականում սահմանափակվել է Փոքր Ասիայի, Կիլիկյան Հայաստանի ու Բարձր Հայքի շրջաններով:

Մնում է ենթադրել, որ Մելքիսեդեկը սույն ձեռագիրն ընդօրինակելու ժամանակ եղել է Փոքր Ասիայի կողմերում՝ Սեբաստիա[6], Կեսարիա, գուցե և Երզնկա (Ավագ վանքի գրչության նշանավոր կենտրոնը) և որտեղ, ամենայն հավանականությամբ, կրել Թամուրտաշի 1338 թ. կործանարար ասպատակության դառնությունները:

Մեր այս ենթադրությանը չի հակասում հիշատակարանում եղած «աշխարհս աւտար էր» բառերը: Հնարավոր է, որ Թամուրտաշի հիշյալ ասպատակության ժամանակ Մելքիսեդեկը հեռացել է իր հայրենիքից (գուցե և Փոքր Ասիայից) ու գաղթել Վասպուրական և այդ «օտարության» մեջ ավարտել ձեռագրի ընդօրինակությունը: Հնարավոր է և հակառակը. Մելքիսեդեկը Վասպուրականի կամ Տարոնի կողմերից գնացած լիներ Երզնկա, կամ Փոքր Ասիայի հայաբնակ մի վայր, և այդտեղ էլ ականատես եղած լիներ 1338 թ. ողբերգական իրադարձություններին: Մի բան միայն պարզ է, որ այդ ձեռագրի ընդօրինակությունը կապվում է Փոքր Ասիայի կամ Եր-

Նկ. 2. «Ծնունդ»

[3] Նա Խազան խանի զորավարներից Չորանի որդին էր, որը նշանակված էր Փոքր Ասիայի կառավարիչ: Հետագայում հալածվելով Աբու-Սեյիդի կողմից (սա Ղազան խանի որդին էր և գահաժառանգը), փախչում է Եգիպտոս և որտեղ էլ սպանվում Աբու-Սեյիդի պահանջով (տես Мюллер, История Ислама, т. III, ст. 278): Ըստ այդ տվյալների Թամուրտաշը պետք է սպանված լինի նույն դարի 20-ական թվականներին: Փաստորեն նույն անվան տակ հանդես եկող անձնավորության հետագա գործունեությունը, ինչպես նկատում է պրոֆ. Լ. Խաչիկյանը «Հայ ժողովրդի պատմության» IV հատորում (Երևան, 1972, էջ 16), կապված է կեղծ Թամուրտաշի հետ:

[4] «Հիշատակարաններ», ԺԴ դ., էջ 304—305:

[5] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հտ. I, Երևան, 1951, էջեր 88, 100, 110, 112, 118, 121, 152, 392: Հատոր II, Երևան, 1956, էջեր 188, 194, 534:

[6] Ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք կողմնակի մի փաստի վրա ևս. Սեբաստիայում 1318 թ. ընդօրինակված մի Աստվածաշնչի հիշա-

զընկայի շրջանների հետ, և որ ձեռագրի հիշատակարանը գրելիս Թամուրտաշն արդեն դարձել էր «մահու ճաշ» և «ի ժամանակս որ ոչ ղան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև զնաւ յերերման»[7]:

Նկ. 3. «Տյառնընդառաջ»

Ձեռագրում գտնվող մանր հիշատակագրությունները տեղեկացնում են, որ այն հետագայում բերվել է Վասպուրական և այդտեղ 1750 թ. կազմվել «...երկիր Բուզունեաց ի դուռն Արջու ծովահայեաց սուրբ (Աստու)ածնին անքակտելի յիշատակ. գրեցաւ ձեռամբ սուտանուն Սահակ քահանային, այս է վերընտին զարդարել արծաթապատ ոսկով և արծաթով. թվ. ՌՄԷ. ամէն»[8]: Ըստ երևույթին ձեռագիրը մի քանի անգամ է կազմվել: Առաջին անգամ՝ գրչության ավարտից հետո. «Ցիշեցէք և Աստուած-ողորմի ասացէք Ազարիային, որ ի նազմել սուրբ աւետարանիս խաղող եբեր կերանը. Աստուած ողորմի ասացէք, ամէն» —գրված է Մելքիսեդեկի ձեռքով (447բ էջ): Իսկ 1758 թ., արդեն երրորդ անգամ, Տեր-Աբրահամը՝ «...ընկաւ վերստին բազում աշխատանք և ծաղս արաւ և ետ զարդարել զսայ ոսկով և արծաթապատ արաւ ի վերա սուրբ աւետարանին» (էջ 89ա): Սակայն այսօրվա դրությամբ կաշեպատ այդ կազմի վրա չկա թանկարժեք մետաղի և ոչ մի կտոր: Ամեն ինչ անողոքաբար կողոպտվել է ու մնացել մի տխուր հուշ. դրանք տախտակների հետ ագուցած փոսիկներ:

Ի դեպ, 89բ էջում տեղեկություն կա նաև թուղթ կոկողի մասին. «զԵբրեմ սարկաւագ, որ զթուղթս կոկեցի յիշեցէք ի Քրիստոս և զծնողսն իմ զՍիմէոն քահանա և զՍիրախաթուն»:

Թեմատիկ նկարաշարը ձեռագրում հետևյալն է. 1. Ավետում (էջ 1բ), 2. Քրիստոսի Ծնունդ (2ա), 3. Տյառնընդառաջ (2բ), 4.

Նկ. 4. «Հարություն»

Մկրտություն (3ա), 5. Մուտք Երուսաղեմ (3բ), 6. Խաչելություն (4ա), 7. Հարություն (4բ), 8. Համբարձում (5ա), 9. Չորս ավետարանիչներ (5բ):

Անվանաթերթերը գտնվում են հետևյալ էջերի վրա. Մաթևոս՝ 6ա, Մարկոս՝ 60ա, Ղուկաս՝ 90ա, և Հովհաննես՝ 148ա:

«Ավետումը» ներկայացնում է սակավ հանդիպող ուրույն մի տեսարան: Գաբրիել հրեշտակի անակնկալ հայտնությունից տատամսած Մարիամը մեղմորեն վեր է բարձրացրել ձեռքերը. դա նաև հնազանդության նշան է:

Նյութի պատկերագրային և գաղափարական միտվածությամբ Մելքիսեդեկի ձեռագրի «Ծնունդը» նկատելի աղերս է դրսևորում XIV դ. սկզբներին ապրած նկարիչ Հովսիան Բերկրեցու աշխատանքների հետ (Մատ. ձեռ. № 4806, էջ 1բ, ձեռ. № 4818,

---

տակարանում հանդիպում ենք մի շարք անունների՝ Ծերուն, Ստեփանոս, Մարիամ և այլն, որոնք հետագայում հոլովվում են նաև Մելքիսեդեկի 1338 թ. ձեռագրի հիշատակարանում: Մեզ, իհարկե, չհաջողվեց անմիջական նույնության կապ տեսնել դրանց միջև:

[7] Եվ իրոք. Աբու-Սեյիդի մահից հետո (1335 թ.) մոնղոլական կայսերության ողջ տարածքի վրա ծայր են առնում գահակալական պատերազմներ: Միասնական իշխանությունը տրոհվում է մանր տիրապետությունների. սկսվում է տիպիկ անիշխանության շրջան (այդ մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», IV, Երևան, 1972, էջ 15—16):

[8] Արճեշի գավառի Արջրոյ վանքի մասին տեղեկություն կա նաև 1317 թ. գրիչ Հայրապետի ընդօրինակած մի Ավետարանում. «...գրեցաւ սուրբ աւետարանս յերկիրս Քաջբերունի, որ այժմ կոչի Արճեշ, ի սուրբ ուխտս, որ Արջրոյ վանք կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սրբոց կենսաբեր նշանիս...» (տես «Հիշատակարաններ», ԺԴ, էջ 130):

էջ 2սւ)[9]: Զախ կողմում Աստվածամոր տպավորիչ կերպարն է: Նա նստած է (հին սովորույթ)[10], ձեռքերը դրած գրկին: Մանկան բարուրի մոտ հայտնի կենդանիներն են՝ ցուլը և ավանակը: Նկարում բացակայում են հրեշտակները[11], Հովսեփը (որը սովորաբար ձեռքը ականջին լսում է հրեշտակների երգի ձայնը), ինչպես և նորածնին լողացնող կանայք[12]: Կանոնական այդ մանրամասների փոխարեն նկարիչը կարծես

Նկ. 5. «Համբարձում»

ավելի ընդգծել է, այսպես ասած, աշխարհիկ-ժողովրդական մոտիվները. դրանք աջից մոտեցող մոգերի թագավորներն են, հովիվները և նրանց թռչկոտող գառնուկները: Հատկապես հետաքրքրական ձևերով են տեղադրված հովիվները՝ նկարի շրջանակների արտաքին երկու անկյունների մոտ: Համաչափ և նույնաձև դիրքով նրանք սրինգ են նվագում, որոնց փողերը ուղղված են կենտրոն: Փաստորեն այդ դեպքում էլ մատնանշելու ենք հորինվածքի հնամյա խմբագրական տեսքը, որտեղ հետագայում մուտք գործած կանոնական-դավանաբանական մոտիվների փոխարեն դեռ պահպանվում է ժողովրդա-աշխարհային ոգին, նույնիսկ կենցաղային ժանրային տարրերը: Ուշագրավ է երկնքի աստղը, որը նկարչի վրձնի տակ վեր է ածվել մեծ ու գեղեցիկ ծաղկազարդի: Դա կարող է արտահայտել նաև հարատևության իմաստ:

Ինքնատիպ է «Տյառնընդառաջ»-ը: Խիստ կարճառոտված այդ պատկերը ընդհանուր առմամբ ունի պաշտամունքային միտում: Զախ կողմում առանձնացած կանգնել է բարեպաշտ Սիմեոն Ծերունին՝ մանուկ Հիսուսը գրկին (սովորաբար Սիմեոն Ծերունին աջ կողմում է լինում): Հովսեփը և Մարիամը խոնարհաբար երկրպագում են նկարի աջ մասում գտնվող տաճարին[13]: Նկարիչն այս դեպքում էլ դիմել է համառոտաձևության. բացակայում է Աննա մարգարեն, չկա նաև բեմասեղանը[14]:

«Մկրտություն»-ը ներկայացված է պարզունակ գծանկարով: Միայն Հիսուսն ու Հովհաննեսն են, երկուսն էլ գետի մեջ: Նրանց երկու կողմերում մեկական ծառեր են պատկերված:

Հնամյա պատկերագրության շունչը զգացվում է նաև «Մուտք Երուսաղեմ» նկարում (3բ): Զախից աջ գնացող Հիսուսին հետևվում են տասնհինգ մարդ (արդյո՞ք բոլորը նրա աշակերտներն էին, թե նկարչի անուշադրության հետևանքն է դա): Նրանք դասավորված են դեպի վեր չորս կարգով:

«Խաչելություն»-ի մեջ խաչափայտը դրված է այն հողաթմբի վրա, որտեղ Ադամի գլուխն է թաղված: Այդտեղ ներկա են նաև պատժված ավազակները: Առավել հետաքրքրականը թերևս Հիսուսի կողը նիզա-

---

[9] Այդ ձեռագրերի մասին տես Л. Захарян, О двух группах рукописей с лицевыми миниатюрами XIII—XIV веков из скрипториев Васпуракана (автореферат), Москва, 1969.

[10] Աստվածամոր թիկնած դիրքը բնորոշ է քրիստոնեական արվեստի վաղ շրջանի սովորույթներին (տե՛ս Н. Покровский, Евангелие в памятниках иконографии преимущеетвенно Византинских и русских, СПб., 1892, ст. 75).

[11] «Ծննդում» հրեշտակների ներկայությունը ևս հատուկ չէ վաղ շրջանի նկարներին: Դրանք մուտք են գործել VIII—X դարերից:

[12] Մանկանը լողացնելու հատվածը ևս մուտք է գործել հետագայում, որը բոլորովին կապ չունի վաղ քրիստոնեական արվեստի սովորույթների հետ (տե՛ս այդ մասին „Византийский Временник", 1969, том 30, ст. 165—166).

[13] Մարիամի և Հովսեփի՝ դեպի տաճարը երկրպագելու դիրքը հավանաբար պետք է բացատրել Մաղաքիա մարգարեի այն պատգամի տպավորությամբ, որտեղ նշվում է Տիրոջ տաճար գալու հանդիսավոր պարագան: Նրանք առաջին անգամ Սիմեոն Ծերունուց իմանում են, որ տաճար այցելած Տերն իր զոհողությամբ մարդկանց փրկելու է մեղքերից: Փաստորեն այդտեղ կատարվում է մարգարեական առաջին օրհնաբանությունը:

[14] Ն. Կոնդակովը նկատել է, որ վաղ քրիստոնեական շրջանից հետո Հիսուսին տաճար բերելու դրվագը միշտ ներկայացվել է բեմասեղանի հետ (История Византийской искусства и иконографии, Одеса, 1876, ст. 64): Այդ թեմայի պատկերագրության վերաբերյալ առավել ամբողջականը Դ. Ֆորիի (The iconographie gevelopment of the presentation in the temple, „Art Bulletin", XXVIII, 1946), ինչպես և Կ. Վեյցմանի (The fresco Cycle of s. Maria di Castelseprio, Princeton, 1951) աշխատություններն են:

կահարող զինվորի կերպարն է՝ կենցաղային, ժողովրդական հումորով լի գծերով:

Պատկերագրական հնամյա ձևերին նախապատվություն տալը ակնառու դրսևորվում է նաև «Հարություն» նկարում[15]: Այդտեղ փաստորեն կրկնված է 1038 թ. (Մատ. № 6201) հայտնի ձեռագրի «Հարություն»-ի տարբերակը՝ իր դեկորատիվ, խիստ շարժունակ (ռիթմիկ) կառուցվածքով: Այդ ինքնատիպ տարբերակի մեզ հայտնի վերջին մեկ օրինակը 1294 թ. Բերկրիում ընդօրինակված Մատ. № 4814 ձեռագրում է (նկարիչ Խաչեր)[16]: Հնամենիության առումով նույնը պետք է ասել նաև «Համբարձում»-ի պատկերի կապակցությամբ: Սկավառակի մեջ գտնվող Հիսուսը նստած է խիստ ճակատային դիրքով, երկու ձեռքերը վեր պարզած. օրհնանքի և ոչ մի նշան:

Վերջին ուշագրավ էջը սույն ձեռագրում 5ա-ն է՝ չորս ավետարանիչների կերպարներով: Ավետարանիչները ներկայացված են մեկ էջի վրա, միմյանց մոտ կանգնած: Հնից եկող այդ ձևը, ընդհանուր առմամբ, միջնադարյան ձեռագրերում պահպանվում է մինչև XI—XII դարերը, այն էլ, իհարկե, ոչ բոլոր դեպքերում: Ավետարանիչներից յուրաքանչյուրին իրենց համապատասխան բնագրի սկզբում առանձին պատկերելու սովորույթը տարածում է գտել X—XI դարերից[17]: Անշուշտ, Մելքիսեդեկը քաջ գիտեր պատկերագրության մեջ կատարված այդ փոփոխությունները և, այդուհանդերձ, նախընտրելով հնամյա ձև, իր որոշակի նախասիրություններն է դրսևորել:

Անվանաթերթերից առավել հետաքրքրականը Մարկուսինն է (էջ 60ա). քառանկյան գլխազարդերի ներսի երկու կողմերում սևին տվող մուգ շագանակագույնի ֆոնի վրա պատկերված են երկու կարմիր առյուծներ՝ խիստ տպավորիչ ձևերով: Դրանց ներս քաշած պոչերի ծայրը ավարտվում է բաց գույնի լայնատարած բուսազարդով[18]:

Մելքիսեդեկի մանրանկարները, հատկապես ոճական առանձնահատկություններով, որոշակիորեն կրում են միջնադարին բնորոշ դավանաբանական խորհրդանշական բնույթ: Հեռու լինելով իրապաշտական-իլլիուզոնիստական ձևերի արտահայտման խնդրից, նկարիչը ստեղծում է պատկերավորման իր ուրույն լեզուն: Այդտեղ առաջնայինը հոգեկան աշխարհի ոլորտն է. մի միտում, որը, հատկապես արևելյան հողում, նպաստելու էր արվեստում պասսիվ հայեցողականության ու պաշտամունքի ուժեղացմանը[19]: Այդ հա-

Նկ. 6. «Չորս ավետարանիչներ»

կումները հիշյալ ձեռագրում (ընդհանրապես Վասպուրականի մանրանկարչության մեջ) արտահայտվում է հին արվեստին հատուկ ոճի պարզեցված ձևերով, որտեղ ամեն մի մանրամասն ինչ-որ չափով կրում է նաև սեմանտիկ-նշանային իմաստ: Սեմանտիկ-նշանային այդ ձևերը բավարարում էին միջնադարյան քրիստոնյա մարդուն գերագույն սրբությունների հետ հոգեկան շփման մեջ մտնելու համար:

Նկարիչ Մելքիսեդեկի ստեղծած պատկե-

---

[15] Դեպքին ներկա է նաև Հարություն առած Հիսուսը: Թեման մեկնաբանված է ոչ թե Մարկոսի և Մատթեոսի Ավետարաններին համապատասխան, այլ Հովհաննեսի և Ղուկասի:

[16] Մոտավոր նման հորինվածք է նաև Մատ. № 4818 ձեռագրում (նկարիչ Հովսիան), որը նույնպես եզակի է այդ շրջանի ձեռագրերի մեջ (XIV դ. սկիզբ):

[17] Ավետարանիչների պատկերագրության մասին տե՛ս **W. Hatch**, Faestmiles and descriptions of minuscule manuscripts of the neue testament, Cambridge, 1951, p. 33. **В. Д. Лихачев**, Четвероевангелие XI века в собрании Ленинградской публичной библиотеки („Византийский Временник", XIX, 1961, ст. 150).

[18] Պոչերի նման զարդերը (նաև ձիերի և այլ կենդանիների մոտ) գալիս է արևելյան արվեստի հին սովորույթներից, որը լայն տարածում ստացավ հատկապես սասանյան շրջանի արվեստում:

[19] Վ. Ն. Լազրևի խոսքերով ասած, նման դեպքում նկարիչներն իրենց առջև խնդիր են դնում՝ պատկերել ոչ թե մասնակի երևույթները, այլ դրանց հիմքում ընկած գաղափարը, տալ ոչ թե երևույթի անցողիկ, պատահական կողմերը, նրա փոփոխվող գծերը, այլ անփոփոխ էությունը (История Византийской Живописи, Москва, 1946, ст. 18—29 և այլն):

բային աշխարհին, գծի[20] և գույնի նրա ուրույն լեզվին, ամենից շատ բնորոշ է դառնում սուր դիտողականությունն ու տպավորիչ անմիջականությունը:

Հորինվածքներն ունեն պարզ-տարածական կառուցվածք: Կերպարների գործողության գոտին սահմանափակվում է ավելի շատ նշանադրումներով, քան ճարտարապետական ներքնամասերի (ինտերյեր) կամ առարկաների որոշակի պատկերմամբ: Գլխավորը մնում է ընդհանուր գաղափարի ամփոփ արտահայտումը:

Գծի, որպես արտահայտման գլխավոր միջոցի, դերի հետ մեկտեղ Մելքիսեդեկի աշխատանքներում կարևոր տեղ է հատկացվում գույնին. օգտագործվում է ընդամենը չորսը՝ կարմիր, կանաչ, կապույտ, դեղին, բայց խտացված տոներով, մաքուր ու հնչեղ: Ըստ որում, գունաշարի տպավորությունը պայմանավորվում է այդ գույներից յուրաքանչյուրի ծավալահատվածի չափով, որը որոշվում է հարևանող գույնի ներդաշնությամբ: Նկարիչը խուսափում է գունահատվածների մասնատվածությունից: Կերպարները մեկնաբանվում են հնարավորին չափ լայն գունամասսայով, երբեմն երկու գույնի օգնությամբ՝ ավետարանիչների դիմանկարները, Մարիամը «Տյառնընդառաջ»-ում և այլն: Այդ պայմաններում և տպավորության այդ սահմաններում գունահատվածներից յուրաքանչյուրը ձեռք է բերում ոչ միայն սոսկ «ինֆորմացիոն» իմաստ, այլև կառուցվածքային որոշակի նշանակություն:

Ձևակերտման ու գունային այդ հատկանիշները (ակամայից մտաբերում ենք հինավուրց մեր եկեղեցիների՝ Լմբատի, Թալինի, Աղթամարի, Տաթևի, Անիի որմնանկարների անմոռաց հմայքը, VII—X դդ. հայկական մանրանկարչության կենսահաստատ շունչը) Մելքիսեդեկի աշխատանքները համակում են խոր հուզականությամբ և անսովոր ուժեղ տպավորությամբ:

Ամփոփենք մեր խոսքը.

ա) Մելքիսեդեկի սույն ձեռագրի մանրանկարները եզակի են իրենց հնամենի պատկերագրությամբ և որպես այդպիսիք մոտավոր աղերս են ձգում Վասպուրականի հյուսիսային նահանգներում (Բերկրի) XIII դ. վերջում և XIV դ. սկզբին պատկերազարդված մի խումբ ձեռագրերի հետ (Մատ. ձեռ. № № 4814, 4818, 4052, 4808):

բ) Վասպուրականի մանրանկարներին բնորոշ հարթագծային յուրատիպ ոճը, իր «մաներիստական» երանգներով, ըստ էության, չի սահմանափակվել միայն այդ դպրոցի շրջանակներով: Մելքիսեդեկի ձեռագրի օրինակը ցույց է տալիս, որ դա մշակութային լայն միջավայրի արդյունք էր[21], որը հավասարապես կարող էր դրսևորվել ինչպես Վասպուրականում, այնպես էլ այդ միջավայրի մեջ մտնող մեկ այլ տարածքում: Տվյալ դեպքում նկատի ունենք Բարձր Հայքի կամ Փոքր Ասիայի շրջանները:

[20] Նրա մոտ կերպարներն ու առարկաները ոչ միայն խիստ պարզեցված են ու հստակ դասավորված, այլև արտահայտված գծային «մաներիզմի» յուրատիպ ոճավորումներով:

[21] Խոսելով մշակութային ընդհանուր միջավայրի մասին, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը գրում է. «Ասորիքը, Միջագետքը, Պարսկաստանը, Հայաստանը, Կապադովկիան, մինչև իսկ Փոքր Ասիայի միջին գավառները մի ամբողջություն են կազմում արվեստի տեսակետով» («Հայ արվեստի ծագումն ու ոսկեդարը», «Հասկ», 1954, հունվար, էջ 25):

ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ*

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ ԼԵՎՈՆ Ա (1198—1218)

Արծաթ

259. Օծման դրամ. թողարկված միապետի, Հիսուս-Քրիստոսի և խաչակիր առյուծի պատկերներով, Լևոն Ռուբենյանին հայոց թագավոր օծելու առթիվ, 1198 թվին, ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ արձանագրությամբ:

260—263. Նույնը, ինչպես նախորդը, օծման դրամ, բայց երկու առյուծների և նրանց միջև խաչի պատկերներով: Չորս հատ, դրվագված տարբեր փորագրության կնիքներով:

264—265. Երկդրամ. թողարկված գահին բազմած հայոց միապետի և դեպի ձախ կանգնած խաչակիր առյուծի պատկերներով, ԼԵՎՈՆ ԹԳՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ արձանագրությամբ, երկու հատ, դրվագված տարբեր կնիքներով:

266—267. Կես երկդրամյան. նույն պատկերագրությամբ, ինչպես նախորդը, բայց փոքր կշռային ու տրամագծային չափերի: Երկու հատ, տարբեր կնիքներով դրվագված:

268—334. Դրամ. թողարկված գահին բազմած միապետի (հանդիպահայաց, մի ձեռքին խաչ, մյուսին՝ շուշան) և երկու առյուծների ու նրանց միջև խաչի պատկերներով, ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված 67 հատ նույնանման միավորներ:

335—336. Կես դրամ. թողարկված Կիլիկիայում հայոց թագավոր Լևոն Ա-ի և երկու առյուծների պատկերներով, հայերեն արձանագրություններով, ինչպես նախորդները, բայց դրվագված տարբեր կնիքներով, երկու հատ:

Պղինձ

337—358. Դանգ. թողարկված Սիս քաղաքում, առյուծի թագազարդ գլխի և երկթև խաչի պատկերներով, ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՍ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված 22 նույնանման օրինակներ:

ԶԱԲԵԼ-ՀԵԹՈՒՄ (1226—1271)

Արծաթ

359—403. Դրամ. թողարկված Զաբել թագուհու և Հեթումի գահակալության տարիներին, մի կողմից թագավոր-թագուհու հանդիպահայաց, ողջ հասակով կանգնած, երկուսը միասին մեկ խաչ բռնած, իսկ մյուս կողմում դեպի աջ քայլող խաչակիր առյուծի պատկերներով, ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆ ԱՅ Է ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված 45 նույնանման օրինակներ:

404—406. Կես դրամ. նույն պատկերագրությամբ, ինչպես նախորդը, դրվագված տարբեր կնիքներով: Երեք նույնանման օրինակներ:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1976 թվականի № Զ-ից: Բնական չափերից պատկերները երկու-երեք անգամ մեծացված են:

407. Դրամ. թողարկված Իկոնիայի սուլթան Քայ-Քոբադ իբն Քայ-Խուսրաուի անվան արաբատառ գրությամբ և հայոց միապետ Հեթումի ձիավոր պատկերով, շուրջը հայերեն ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ արձանագրությամբ:

408. Դրամ. թողարկված Սիս քաղաքում, մի կողմից Հեթումի ձիավոր պատկերով, շուրջը՝ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ արձանագրությամբ, իսկ մյուս կողմից սելջուկյան սուլթան Քայ-Խուսրաու իբն Քայկոբադի անվան ու տիտղոսների արաբատառ գրությամբ:

Պղինձ

409—429. Դանգ. թողարկված Սիս քաղաքում, Հեթումի (գահին բազմած արքայական նշաններով) և հավասարաթև խաչի պատկերներով, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, նույնանման 21 օրինակներ:

430—435. Քարտեզ. թողարկված Սիս քաղաքում, Հեթումի (ձիավոր) և հավասարաթև խաչի պատկերներով, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ արձանագրություններով: Վեց նույնանման օրինակներ, դրվագված տարբեր կնիքներով:

436—445. Քարտեզ. թողարկված Սիս քաղաքում, նույն տարիներին, բայց Հեթումի գահին բազմած տեսքով, հավասարաթև խաչի նշանով, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ արձանագրություններով: Տասը նույնանման օրինակներ, տարբեր կնիքներով դրվագված:

ԼԵՎՈՆ Բ (1270—1289)

Արծաթ

446—491. Նոր դրամ. թողարկված ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԼԵՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված նույնանման 46 օրինակներ:

492—494. Կես դրամ. ձիավոր թագավորի և խաչակիր առյուծի պատկերներով, առանց արձանագրությունների, դրվագված տարբեր կնիքներով, երեք հատ:

Պղինձ

495—504. Քարտեզ. առյուծի և հավասարաթև խաչի պատկերներով, ԼԵՒՈ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, տասը հատ:

ՀԵԹՈՒՄ Բ (1289—1306)

Բիլոն

503—508. Պղնձի խառնուրդով փոքրիկ արծաթյա դրամներ, թագավորի հանդիպահայաց պատկերով և հավասարաթև խաչ նշանով, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, չորս հատ:

Պղինձ

509—513. Քարտեզ. թողարկված միապետի հանդիպահայաց պատկերով և երկթև խաչի նշանով, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի Ս. արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, հինգ հատ:

514—518. Քարտեզ. միապետի ծալապատիկ նստած (ղեկը ձեռքին) պատկերով և հավասարաթև խաչի նշանով, ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, հինգ հատ:

ՍՄԲԱՏ (1296—1298)

Արծաթ

519—522. Նոր դրամ. թողարկված միապետի (գահին բազմած) և խաչը պահպանող երկու առյուծների պատկերներով, ՍՄԲԱՏ ԹԱԳՈՐ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, չորս հատ:

Պղինձ

523—530. Քարտեզ. թողարկված ձիավոր թագավորի պատկերով և հավասարաթեվ խաչի նշանով, ՍՄԲԱՏ ԹԱԳՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԼ ՔԱՂԱՔ ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, ութ հատ:

ԼԵՎՈՆ Գ (1301—1307)
Արծաթ

531—539. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, ինը հատ:

Պղինձ

540—549. Քարտեզ. միապետի (ծալապատիկ նստած) պատկերով և հավասարաթև խաչի նշանով, ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅ ՇԻՆԵԱԼ Ի ԳԱՂԱ և ջնջված արձանագրություններով, ինչպես նաև երկու անգամ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ արձանագրություններով: Տարբեր կնիքներով դրվագված, տասը հատ:

ԱՎՇԻՆ (1308—1320)
Արծաթ

550—551. Օծման դրամ. թողարկված միապետի (գահին բազմած), ինչպես նաև խաչի և երկու առյուծների պատկերներով, ԱՒՇԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱԾՈՑ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված երկու հատ:

552—560. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԱՒՇԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅ. ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ արձանագրությամբ և տարբերակներով: Տարբեր կնիքներով դրվագված, ինը հատ:

561. Թագվորին. թողարկված արաբատառ մաշված արձանագրություններով:

Պղինձ

562—567. Փող. միապետի գահին բազմած պատկերով և հավասարաթև խաչի նշանով, ԱՒՇԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳ Ս արձանագրությամբ: Տարբեր կնիքներով դրվագված, վեց հատ:

ԼԵՎՈՆ Դ (1320—1342)
Արծաթ

568—585. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍ արձանագրությամբ: Տարբեր կնիքներով թողարկված, տասնութ հատ:

Պղինձ

586—597. Փող. միապետի գահին բազմած պատկերով և զարդարուն (հավասարաթև) խաչի նշանով, ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍ արձանագրությամբ: Տարբերակներ, տասներկու հատ:

ԿԻ (1342—1344)
Արծաթ

598. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԿԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ ՔԱՂԱՔԸՆ ՍԻ(՞) մաշված արձանագրությամբ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ (1344—1363)

599—613. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍ արձանագրությամբ: Տարբերակներ, տասնհինգ հատ:

Պղինձ

614—615. Փող. գահին բազմած միապետի պատկերով և հավասարաթև զարդարուն խաչի նշանով, ԿՈՍՏԸՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս արձանագրությամբ: Տարբերակներ, երկու հատ:

ԼԵՎՈՆ ԲՌՆԱԿԱԼ (1363—1365)
Արծաթ

616—624. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի Ս արձանագրությամբ: Տարբերակներ, ինը հատ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ (1365—1373)
Արծաթ

625—638. Թագվորին. ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ԿՈՍՏԸՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅ ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ արձանագրությամբ: Տարբերակներ, տասնչորս հատ:

ԼԵՎՈՆ Ե (1374—1375)
Արծաթապղինձ

639. Բիլոն. միապետի (հանդիպահայաց) պատկերով և հավասարաթև խաչի նշանով, ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ արձանագրությամբ:

640—641. Բիլոն. միապետի (հանդիպահայաց) պատկերով և զարդարուն հավասարաթև խաչով, ԼԵԻՈՆ ԹԱԳԱՒ ԿԱՐՈՂՈՒԹԲՆ Ա խիստ մաշված արձանագրությամբ: Տարբերակներ, երկու հատ:

Պղինձ

642—644. Փող, քայլող առյուծի և հավասարաթև խաչի պատկերներով, ԼԵԻՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ մաշված արձանագրությամբ: Տարբերակներ, երեք հատ:

ՀԵՏՌՈՒԲԵՆՅԱՆ ԱՐԾԱԹԱՊՂԻՆՁ

645. Բիլոն, ձիավոր թագավորի և խաչակիր առյուծի պատկերներով, հայերենի նմանվող մաշված արձանագրությամբ:

ԱՆՈՐՈՇ ԿԻԼԻԿՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

646—647. Դրամ. ձիավորի և խաչակիր առյուծի պատկերներով, ԼԵԻՈՆ ԹԱԳԱՒՈՐ մաշված արձանագրությամբ: Տարբերակներ, երկու հատ:

648. Դրամ. առյուծի և հավասարաթև խաչի պատկերներով, խիստ մաշված արձանագրությամբ:

649—651. Խիստ մաշված Միջնաբերդի և հավասարաթև խաչի պատկերներով, անընթեռնելի արձանագրությամբ: Տարբերակներ, երեք հատ:

652. Դրամ. ձիավոր թագավորի և խաչակիր առյուծի պատկերներով: Մաշված հայատառ արձանագրությամբ:

653—654. Քարտեզ. ձիավոր թագավորի և խաչակիր առյուծի պատկերներով, խիստ մաշված, անընթեռնելի հայերեն արձանագրություններով: Տարբերակներ, երկու հատ:

ԻՐԱՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԴՐԱՄՆԵՐ

ԿԱՋԱՐՅԱՆՆԵՐ

Ոսկի

655. Թուման. Ֆաթհ Ալի շահի անունով, թողարկված Քաշանում հիջիայի 1236 թվականին:

656. Կես թուման. Մուհամմեդ Հասան խանի անունով, թողարկված Թավրիզում 1750—1770 թվականներին:

ՍԵՖՅԱՆՆԵՐ

Արծաթ

657. Աբասի. շահ Աբբաս 2-րդի անունով, թողարկված 1642—1667 թվականներին:

658. Աբասի. շահ Հուսեյնի անունով, մաշված անընթեռնելի պարսկերեն արձանագրություններով, թողարկված 1783—1786 թվականներին:

659. Աբասի. շահ Հուսեյնի անունով, ջնջված արձանագրություններով, թողարկված Երևանում 1783—1786 թվականներին:

660. Աբասի. շահ Հուսեյնի անունով, ջնջված արձանագրություններով, թողարկված Թավրիզում:

ԱՖՇԱՐՅԱՆՆԵՐ

Արծաթ

661. Նադիրի, Նադիր շահի անունով, թողարկված Թավրիզում հիջրայի 1157 թ.:

ԻՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐ

Պղինձ

662. Ֆուլուս. արևի պատկերով և պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում 17-րդ դարում:

663. Ֆուլուս. սիրամարգի պատկերով և պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում 17-րդ դարում:

664. Ֆուլուս. առյուծի պատկերով և պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում 17-րդ դարում:

665. Ֆուլուս. կապկի պատկերով, պարսկերեն մաշված գրությամբ, թողարկված Երևանում 17—18-րդ դարերում:

666—667. Ֆուլուս. փղի պատկերով և պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում 17—18-րդ դարերում:

668. Ֆուլուս. լորիկի պատկերով, մաշված պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում 17—18-րդ դարերում:

669. Ֆուլուս. հովազի պատկերով և պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում հիջրայի 1122 թ. (=մ. թ. 1710—1711 թվականներին):

670. Ֆուլուս. առյուծի և աղվեսի պատկերներով, պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Երևանում հիջրայի 1123 թ. (=մ. թ. 1711—1712 թվականներին):

671. Ֆուլուս. պարսկերեն մաշված արձանագրությամբ, թողարկված Նախճավանում 18-րդ դարի սկզբին:

672. Ֆուլուս. ոչխարի պատկերով և պարսկերեն մաշված արձանագրությամբ, թողարկված Նախճավանում 18-րդ դարի սկզբին:

673—675. Ֆուլուս. առյուծի և արևի պատկերներով, պարսկերեն ջնջված արձանագրությամբ, թողարկված Իրանում

ՀԱՅՈՑ «ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱ» ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՏԿԵՐԸ ԱՐԾԱԹՅԱ ԴՐԱՄԻ ՎՐԱ (Մ. Թ. Ա. Ա դար)

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԹՅԱ ԴՐԱՄ, ԹՈՂԱՐԿՎԱԾ ԼԵՎՈՆ ՌՈՒԲԵՆՅԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1198—1219)

18-րդ դարի սկզբին: Երեք հատ, տարբեր փորագրության կնիքներով դրվագված օրինակներ:

ՕՍՄԱՆՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Ոսկի

676. Կես ֆունդուկլի. սուլթան Աբդ-ալ-Համիդի անվան և տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, թողարկված Եգիպտոսում հիջրայի 1187 թ. (=մ. թ. 1773—1774 թվականներին):

Արծաթ

677. Ղուրուշ. Մուստաֆա 2-րդ սուլթանի անվան և տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում 1109 թ. (=մ. թ. 1697—1698 թթ.):
678—679. Ղուրուշ. Ահմեդ 3-րդ սուլթանի անվան և տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում հիջրայի 1115 թ. (=մ. թ. 1703—1704 թվականներին): Երկու տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:
680. Օնլիկ. Ահմեդ 3-րդ սուլթանի անվան և տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, թողարկված Թիֆլիսում 1703—1730 թվականներին:
681. Ղուրուշ. Մահմուդ 1-ին սուլթանի ստորագրության դրոշմով և նրա տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում հիջրայի 1143 թ. (=մ. թ. 1770—1771 թթ.):
682. Ղուրուշ. Մուստաֆա 3-րդ սուլթանի անվան և տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, թողարկված Իսլամբուլում հիջրայի 1171 թ. (=մ. թ. 1757—1758 թթ.):
683—884. Ղուրուշ. Սելիմ 3-րդ սուլթանի ստորագրության դրոշմով և նրա տիտղոսների արաբերեն արձանագրությամբ. թողարկված Իսլամբուլում հիջրայի 1203 թ. (=մ. թ. 1788—1789 թթ.):
685—686. Ղուրուշ. Աբդ-ալ-Ազիզ սուլթանի ստորագրության դրոշմով և նրա անվան արաբերեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում հիջրայի 1277 թ. (=մ. թ. 1860—1861 թթ.):
687. Ղուրուշ. Աբդ-ալ-Ազիզ սուլթանի ստորագրության դրոշմով և արաբերեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում հիջրայի 1293 թ. (=մ. թ. 1876 թ.):

Պղինձ

688. Բեշլիկ. Մահմուդ 2-րդ սուլթանի ստորագրության դրոշմով և արաբերեն արձանագրությամբ, թողարկված Կ. Պոլսում հիջրայի 1223 թ. (= մ. թ. 1808—1809 թթ.):

ՌՈՒՍԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Ոսկի

689. Ձերվոնեց. Պավել 1-ինի անունով և հավասարաթև խաչի նշանով, ռուսերեն քառատող արձանագրությամբ, թողարկված 1797 թ.:

Արծաթ

690. Ռուբլ. Աննա Իվանովնայի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1733 թ.:
691. Պոլուպոլտիննիկ. Ելիզավետա Պետրովնայի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1747 թ.:
692—693. Գրիվեննիկ, Ելիզավետա Պետրովնայի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1747 թ.: Երկու տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:
694. Ռուբլ. Ելիզավետա Պետրովնայի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1753 թ.:
695—696. Պոլուպոլտիննիկ. Ելիզավետա Պետրովնայի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1756 թ., երկու հատ:
697. Պոլուպոլտիննիկ. Ելիզավետա Պետրովնայի պատկերով, թողարկված 1758 թ.:
698. Գրիվեննիկ. Ելիզավետա Պետրովնայի պատկերով, թողարկված 1756 թ.:
699. Գրիվեննիկ, Ելիզավետա Պետրովնայի պատկերով, բայց ջնջված թվականով:
700. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1766 թ.:
701. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1768 թ.:
702. Ռուբլ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1775 թ.:
703. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1777 թ.:
704. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1780 թ.:
705. Ռուբլ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1782 թ.:
706. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1783 թ.:

707. Ռուբլ. Եկատերինա 2-րդի պատկերով, նրա անվան ու տիտղոսների արձանագրությամբ, կայսրության զինանշանով, թողարկված 1786 թ.:
708. Գրիվենիկ. Եկատերինա 2-րդի պատկերով, նրա անվան ու տիտղոսների ռուսերեն արձանագրությամբ, թողարկված 1787 թ.:
709. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով, նրա անվան և տիտղոսների արձանագրությամբ, կայսրության զինանշանով, թողարկված 1792 թ.:
710—712. Պոլուպոլտիննիկ. Եկատերինա 2-րդի պատկերով, կայսրության զինանշանով, ռուսերեն արձանագրությամբ, առանց թվականի, թողարկված 1762—1796 թվականներին, երեք հատ:
713. Ռուբլ. Ալեքսանդր 1-ինի անունով և կայսրության զինանշանով, թողարկված 1818 թ.:
714. Հիսուն կոպեկ. Նիկոլայ 2-րդի պատկերով և կայսրության զինանշանով, թողարկված 1899 թ.:

Պղինձ

715. Դենգա, թագակիր երկգլխանի արծվի պատկերով, թողարկված 1731 թ.:
716. Պոլուշկա. թագակիր երկգլխանի արծվի պատկերով, թողարկված 1736 թ.:
717. Կոպեյկա. Եկատերինա 2-րդի անունով, թողարկված Սիբիրում 1776 թ.:
718. Երկու կոպեկ. Պավել 1-ինի անվան սկզբնատառերի խոշոր գրությամբ և կայսրական թագի պատկերով, թողարկված 1798 թ.:

ՎՐԱՑԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Պղինձ

719. Վրացերեն և արաբերեն արձանագրություններով, Բագրատունյաց տոհմի նշանով, Թամար թագուհու և նրա ամուսնու՝ Դավիթ Սոսլանի անունների կրճատ գրերով, թողարկված քրոնիկոնի 420 (=մ. թ. 1200) թ.: Կրկնադրոշմ օրինակ:
720—723. Վրացերեն և արաբերեն արձանագրություններով, Թամար թագուհու և նրա ամուսին Դավիթ Սոսլանի անուններով, Բագրատունյաց տոհմական նշանով, թողարկված Վրաստանում քրոնիկոնի 420 (=մ. թ. 1200) թ.: Չորս տարբեր կնիքներով դրվագված օրինակներ:

Արծաթ

724. Աբասի. պարսկերեն արձանագրություններով, առանց անունի, թողարկված Թիֆլիսում հիջրայի 1183 (= մ. թ. 1769—1770) թվականներին:
725. Կես մարչիլ (Էքվոշաուրիանի). պարսկերեն արձանագրություններով, առանց իշխանական անունի արձանագրության, թողարկված Տփղիսում հիջրայի 1183 թ.:
726. Աբասի. պարսկերեն արձանագրություններով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1184 թ. (=մ. թ. 1770—1771 թթ.):
727. Աբասի. պարսկերեն արձանագրությամբ, թողարկված Տփղիսում հիջրայի 1189 թ.:
728. Աբասի. պարսկերեն արձանագրությամբ, առանց իշխանական անունի, թողարկված Տփղիսում հիջրայի 1190 թ.:
729—730. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1191 թ., երկու հատ:
731. Աբասի. նույն տվյալներով, թողարկված Տփղիսում հիջրայի 1192 թ.:
732. Աբասի. պարսկերեն արձանագրություններով, առանց իշխանական անունի, թողարկված Տփղիսում հիջրայի 1193 թ.:
733—734. Աբասի. պարսկերեն արձանագրություններով, առանց իշխանական անունների, թողարկված Տփղիսում հիջրայի 1194 թ., երկու հատ:
735. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1195 թ.:
736. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1200 թ. (= մ. թ. 1784—1785 թթ.):
737. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդները, թողարկված Տփղիսում հիջրայի 1201 թ.:
738—739. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդները, թողարկված Տփղիսում հիջրայի 1202 թ., երկու հատ:
740—741. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդները, թողարկված Տփղիսում հիջրայի 1203 թ.:
742. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1204 թ.:
743—744. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1205 թ., երկու հատ:
745—746. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1207 թ., երկու հատ:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԹՅԱ ԴՐԱՄ, ԹՈՂԱՐԿՎԱԾ ԶԱԲԵԼ ԹԱԳՈՒՀՈՒ ԵՎ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (ԺԳ ԴԱՐ)

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐԾԱԹՅԱ ԴՐԱՄ, ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ «ՅԱՆՈՒՆ ՀՕՐ, ԵՒ ՈՐԴԻՈՅ, ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ՄԻԱԿ ԱՍՏՈՒԱԾ» ԱՐԱԲԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԽԱՉԻ ՆՇԱՆՈՎ, ԹՈՂԱՐԿՎԱԾ ԺԳ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՈՍԿՅԱ ԴՐԱՄԻ ՎՐԱ, ԴՐՎԱԳՎԱԾ ԿՈՍՏԱՆԴԻՆ Ը ԿԱՅՍԵՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1025—1028)

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԹՅԱ ԴՐԱՄ, ԹՈՂԱՐԿՎԱԾ ԼԵՎՈՆ ՌՈՒԲԵՆՅԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1198—1219)

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՈՍԿՅԱ ԴՐԱՄ ԿՈՍՏԱՆԴԻՆ Ժ ԴՈՒԿԱՍ ԿԱՅՍԵՐ (1059—1067) ԵՎ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

747. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1209 թ.:
748—749. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1210 թ.:
750—751. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1211 թ., երկու հատ:
752—753. Աբասի. նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում հիջրայի 1213 թ., երկու հատ:
754—762. Աբասի. պարսկերեն արձանագրություններով, առանց իշխանավորի անվան, նույն տվյալներով, ինչպես նախորդը, թողարկված Տփղիսում, ջնջված թվականով, ինը հատ:

Պղինձ

763. Կես աբասի. վրացերեն և պարսկերեն արձանագրություններով, ինչպես նաև ռուսական կայսրության զինանշանի պատկերով, թողարկված Տփղիսում հիջրայի 1202 թ.:

ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

764—765. Երկու աբասի. վրացերեն գրերով, քաղաքի աշտարակաձև թագի պատկերով, թողարկված Տփղիսում 1819 թ., երկու հատ:
766—767. Աբասի. վրացերեն արձանագրությամբ, թողարկված Տփղիսում 1819 թ., երկու հատ:
768—769. Երկու աբասի. վրացական արձանագրություններով, թողարկված Տփղիսում 1831 թ., երկու հատ:
770—771. Աբասի. վրացական արձանագրություններով, թողարկված Տփղիսում 1831 թ., երկու հատ:
772—773. Կես աբասի. վրացական արձանագրություններով, թողարկված Տփղիսում 1831 թ., երկու հատ:
774. Երկու աբասի. վրացական արձանագրություններով, թողարկված Տփղիսում 1832 թ.:

Պղինձ

775. Քսան փուլ. վրացերեն գրերով, «Թբիլիսի» անունով և քաղաքի աշտարակաձև թագի պատկերով, թողարկված Տփղիսում, առանց թվականի հիշատակության:

ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Ոսկի

776. Դուկատ. Հիսուս-Քրիստոսի պատկերով և լատիներեն գրություններով, թողարկված Վենետիկում 14-րդ դարում:
777. Դուկատ. Հիսուս-Քրիստոսի և դուքս Լյուդովիկոսի պատկերներով, ինչպես նաև լատիներեն արձանագրություններով, թողարկված Վենետիկում 14-րդ դարի վերջին:
778. Մեդալիոն. կայսր Լեոպոլդուսի և միապետության զինանշանի պատկերներով, ինչպես նաև լատիներեն արձանագրություններով, թողարկված Ավստրիայում 1705 թ.:

Արծաթ

779. Տալեր. Մավրիկիուսի և նրա դքսության զինանշանի պատկերներով, թողարկված Սաքսոնիայում 1548 թ.:
780. Տալեր. միապետի և թագավորության զինանշանի պատկերներով, թողարկված Բելգիայում 1648 թ.:
781. Դուկատ. Հիսուս-Քրիստոսի պատկերով և լատիներեն արձանագրությամբ, թողարկված Վենետիկում 14—15-րդ դարերում:
782. Դուկատ. Անտոնիո Վենեգրոյի և Հիսուս-Քրիստոսի պատկերներով, թողարկված Վենետիկում 1382—1400 թվականներին:
783. Տալեր. Իոհան Ալբերտուսի պատկերով և նրա իշխանության զինանշանով, թողարկված Գերմանիայում 1549 թ.:
784. Գրոշ. Սիգիզմունդ 3-րդ թագավորի պատկերով և նրա իշխանության զինանշանով, թողարկված Լեհաստանում 1624 թ.:
785. Տալեր. Մանսֆելդի իշխանության զինանշանի և զրահավոր ձիավորի պատկերներով, թողարկված 1663 թ.:
786. Տալեր. Մաքսիմիլիանի պատկերով և Բավարիայի ու Պրուսիայի իշխանության զինանշանով, թողարկված 1614 թ.:
787. Տալեր. Գեորգ Վիլհելմ 5-րդի պատկերով և Բրանդենբուրգի հերցոգության զինանշանով, թողարկված 1623 թ.:
788. Տալեր. Ֆրիդրիկուս թագավորի և Պրուսիայի զինանշանի պատկերներով, թողարկված 1752 թ.:
789. Տալեր. Մարիա-Թերեզայի և Ավստրո-հունգարիայի միապետության զինանշանի պատկերներով, թողարկված 1780 թ.:
790. Լիվրա. Լյուդովիկոս 14-րդի պատկերով և նրա անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրություններով, թողարկված Ֆրանսիայում 1691 թ.:
791. Ֆրանկ. Լյուդովիկոս 15-րդի անունով և միապետության զինանշանի պատկե-

ռով, թողարկված Ֆրանսիայում 1726 թ.:

792. Ֆրանկ. Լյուդովիկոս 16-րդի պատկերով, նրա անվան և տիտղոսների լատիներեն արձանագրություններով, թողարկված Ֆրանսիայում:

793. Ուլթ ռիալ. Կառլոս 4-րդի և միապետության զինանշանի պատկերներով, ինչպես նաև լատիներեն արձանագրություններով, թողարկված Իսպանիայում 1793 թ.:

794. Ուլթ ռիալ. Կառլոս 4-րդի և նրա միապետության զինանշանի պատկերներով, լատիներեն արձանագրություններով, թողարկված Իսպանիայում 1794 թ.:

795—796. Ուլթ ռիալ. Կառլոս 4-րդի և նրա զինանշանների պատկերներով, նույն արձանագրություններով, ինչպես նախորդը, թողարկված Իսպանիայում 1797—1799 թթ., երկու հատ:

797. Տալեր. Էռնեստ Ավգուստ 5-րդի պատկերով և նրա իշխանապետության զինանշանով, թողարկված Հաննովերում 1842 թ.:

Պղինձ

798. Պեննի. բրիտանական կայսր Գեորգ 3-րդի պատկերով և նրա անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրությամբ, թողարկված 1797 թ.:

799. Ուլթ մարավեդիս. Իզաբելա թագուհու և միապետության զինանշանի պատկերով, լատիներեն արձանագրությամբ, թողարկված Իսպանիայում 1844 թ.:

800. Պեննի. Վիկտորիա թագուհու և գեներալ Թոմի պատկերներով, թողարկված Բրիտանական Կայսրության կողմից 1816 թ.:

801. Պեննի. Վիկտորիա թագուհու և ծովերի դիցուհու պատկերներով, թողարկված Բրիտանական Կայսրության կողմից 1877 թ.:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Արծաթ

802—803. Դոլլար. դիցուհու և թևատարած արծվի պատկերներով, թողարկված ԱՄՆ-ում 1878 թ.:

804. Դոլլար. նույն պատկերագրությամբ, ինչպես նախորդը, թողարկված ԱՄՆ-ում 1888 թ.:

805. Կես պեննի. Մոնրեալի դրամատան պատկերով, թողարկված Կանադայում 1844 թ.:

806. Սոլի. Պերուի Հանրապետության զինանշանով, թողարկված 1870 թ.:

807. Հիսուն սենտ. հանրապետության զինանշանների պատկերներով, թողարկված Մեքսիկայում 1875 թ.:

808. Հիսուն սենտ. թևատարած արծվի և արդարադատության պատկերներով, թողարկված Մեքսիկայում 1877 թ.:

809. Մեկ սոլ. հանրապետության նշաններով, թողարկված Պերուում 1870 թ.:

810. Հիսուն սենտ. Արտիգասի պատկերով, թողարկված Ուրուգվայում 1917 թ.:

811. Քառորդ դոլլար. կառավարության նախագահի և պետության զինանշանի (թևատարած արծվի) պատկերներով, թողարկված ԱՄՆ-ում 1967 թ.:

812. Սենտ. թողարկված ԱՄՆ-ում 1849 թ.:

813. Սենտ. թողարկված ԱՄՆ-ում 1815 թ.:

814. Սենտ. թողարկված ԱՄՆ-ում 1853 թ.:

815. Կես պեննի. Ունսոն և առատության դիցուհու պատկերներով, թողարկված Կանադայում 1852 թ.:

816. Պեննի. Առատության զույգ եղջյուրների և ձիավոր ռազմիկի պատկերներով, թողարկված Կանադայում 1854 թ.:

817. Սենտ. Լինկոլնի պատկերով, թողարկված ԱՄՆ-ում 1941 թ.:

818. Պեզո. հանրապետությունն նախագահի և հովազի պատկերներով, թողարկված Ուրուգվայում 1942 թ.:

819. Հիսուն սենտ. հանրապետության նախագահի պատկերով, թողարկված Ուրուգվայում 1943 թ.:

820. Մեկ իեն. ծագող արևի երկրին բնորոշ նշանագրերով, թողարկված Ճապոնիայում 1912 թ.:

821—831. Ուշ միջնադարյան, նոր ու նորագույն ժամանակների եվրոպական, ամերիկյան և արևելյան (արծաթ, բրոնզ, նիկել, պղինձ) դրամներ, թողարկված 18—19-րդ դարերում:

Ա. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԲՐԱԿՈՒՆԻՍԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԸ

14—18-րդ դարերում պատմական Հայաստանի Երնջակ գավառի (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ Ջուլֆայի շրջան) հոգևոր կենտրոնը հանդիսացած այս նշանավոր վանքը գտնվում է ներկայիս Ջուլֆայի շրջանի Աբրակունիս (պատմական Աբրակունիք, Ապրակունիս ավան) գյուղի մոտ, գյուղ մտնող ճանապարհի աջ կողմում, Երնջակ գետից մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող մի փոքրիկ ձորակի արևմտյան եզերքին բարձրացող քարափի հարթ բարձրավանդակում:

Այս վանքը դեռևս հեռվից դիտողի համար ուրվագծվում է որպես մի ազդեցիկ և վիթխարի կառույց, որն իր ծավալա-տարածական հորինվածքով, շինաքարով, իր դիրքով միաձուլված է շրջապատի բնությանը, ներդաշնակվում է իր տեղին և դիրքին: Միջնադարյան հայկական ճարտարապետության նշանավոր կառուցվածքների թվում այս վանքը, ըստ իր հատակագծային կառուցվածքի, ուշագրավ շինություն է հանդիսանում և նշանավոր կառույց է չորս գրմբեթակիր մույթերով հիմնարկված հուշարձանների շարքում:

Ս. Կարապետ վանքը, որը դարերի ընթացքում տասնյակ անգամներ վերանորոգվել և վերակառուցվել է, այժմյան վիճակով կանգուն (նկ. 1) է և Երնջակ գավառի մյուս վանքերի և եկեղեցիների համեմատությամբ բավականաչափ լավ է պահպանված: Այս վանքի հիմնարկման և վերանորոգումների վերաբերյալ կան և՛ վիմագրություններ, և՛ մատենագիտական տեղեկություններ: Սակայն ինչպես արձանագրություններում, այնպես էլ գրավոր աղբյուրներում սպառիչ տեղեկություններ չեն պահպանվել այս նշանավոր վանքի կառուցման, նրա գործունեության մասին: Բավական է նշել նաև այն հանգամանքը, որ վերջին 60—70 տարիներում այդ ուշագրավ ճարտարապետական հուշարձանի, այդ վանքի հայտնի դրպրոցի, գրչօջախի մասին մասնագիտական գրականության մեջ և առհասարակ չկա ոչ մի ուսումնասիրություն, նույնիսկ հոդված:

Նկ. 1. Վանքի ընդհանուր տեսքը

Աբրակունիսի ս. Կարապետ վանքը և նրա պատմական անցյալի առանձին հատվածները ուսումնասիրվել է միմիայն մինչև 20-րդ դարի սկիզբը: Վանքի անմիջական ուսումնասիրողներից Մայր Աթոռի միաբան Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը, որը 1869—1874 թթ. այդ վանքի վանահայրն է եղել, ս. Կարապետի հիմնարկության մասին

գրել է. «...բայց հաւանած եմք ասել, որ այս մենաւորանը պիտի շինուած լինի մետասաներորդ դարու վերջերը. ըստ որում պատմութեան մէջ կգտնեմք սորա նորոգուիլն չորեքտասաներորդ դարու մէջ, այսինքն յամի 1381 ընդ ձեռն Մաղաքեայ վարդապետի Ղրիմեցւոյ: Իսկ հնոց ամուր շինութիւնները և վանօրէից վերայ գործ դրած ճարտարապետական ընտիր և կիրթ ճաշակն ի նկատի առնելով, չէ կարելի չկարծել թէ բաւական ժամանակ անցած պիտի լինի շինութեան վերայ...»[1]: Իսկ Մեսրոպ արք. Սմբատյանցի եզրակացությամբ (1897—1904 թթ. վանքի վանահայրն է եղել) ս. Կարապետի վանքը հիմնարկվել է Մաղաքիա Նախանձախնդիր Ճգնավոր վարդապետի աշխատանքների շնորհիվ: Ըստ որի Մաղաքիա աբեղա Նախանձախնդիրը 1379—1380 թթ. Եսայի Նշեցու դպրոցից (Գլաձորի համալսարանից) և Տաթևի համալսարանից հրավիրել է մի քանի ուսումնավարտ շրջանավարտներ, որոնց թվում լինում են Հովհաննես Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին, և նրանց անմիջական օգնությամբ 1381 թ. կառուցում է ս. Կարապետ վանքը ու Ապրակունիք գյուղի ս. Խաչ վանքից աստվածաբանական դպրոցը տեղափոխում են նորակառույց վանքը[2]: Ուսումնասիրություններից մեկում էլ երևում է, որ ս. Կարապետ վանքը հիմնարկվել է 1280 թ.[3]: Իսկ Ղազար կաթողիկոս Ջահկեցին այս վանքի հիմնարկման մասին գրել է. **«Յովհաննէս Որոտնեցի ուղղափառութեան հաստատիչն, Քրիստոսի Հօտին վերակացու... Կարգեաց զդպրոցս ի տունն Երնջակայ: Եւ շինեաց զչքնաղատիպ և զարմանահրաշ ցանկալի վանս սրբոյ Կարապետի»**[4]: Այս վանքի կառուցման հարցին անդրադարձել է նաև Հ. Էֆրիկյանը, որի կարծիքով վանքը հիմնարկված է եղել 11-րդ դարում և 1381 թ. վերանորոգվել է Մաղաքիա Նախանձախնդրի կողմից[5]:

Նկատելի է, որ թվագրությունների նման տարաձայնությունները (11—14 դդ.) բնավ էլ չեն կարող օգնել միջնադարյան այդ պատմա-ճարտարապետական հուշարձանի ճիշտ ուսումնասիրմանը: Սակայն ս. Կարապետ վանքի, նրա տաճարի, շինությունների ուսումնասիրությունները և այդտեղից մեր կողմից հայտնաբերած հնագիտական իրերի մնացորդները օգնում են էլ ավել պարզելու և լուսաբանելու այդ վանքի դերը, ճարտարապետական արժանիքները: Մի վանք, որի կարևորությունը սերտորեն կապված է միջնադարյան Հայաստանի աչքի ընկնող գավառներից մեկի՝ Երնջակի մտավոր մշակույթի հետ և հանդիսացել է այդ գավառի կենտրոնական կրոնա-կրթական, վարչա-քաղաքական օջախը:

Ս. Կարապետ վանքի հիմնարկման վերաբերյալ մեզ հասած գրավոր և վիմագիր սկզբյուրները մեծամասամբ հաստատում են այն փաստը, որ վանքը հիմնարկվել է 1381 թ. Մաղաքիա Ղրիմեցու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և այլոց կողմից: Այս փաստի օգտին է խոսում նաև 1868 թ. վանքի վանահայր Հովհաննես վարդապետ Փեշտմալչյանց Ալեքսանդրապոլսեցու կողմից վանքի տաճարի հարավային որմի (արտաքին) կամարի տակ արձանագրված մի ընդարձակ արձանագրության հայտնաբերումը: Այդ արձանագրությունը, որը այժմ պահպանվում է և հիմնականում ճիշտ է վերծանված, դեռևս արձանագրված լինելով ՌՃԵ (1656) թվականին, ինչ-ինչ պատճառներով մինչև 1868 թ. ծածկված է եղել պատի ծեփի տակ և անհայտ էր: Այդ արձանագրությունում ասվում է. **«Շնորհիւ Տեառն և մեծին Աստուծոյ, մեք միաբան սուրբ Կարապետի վանից Երնջակու, Եսայի և Ղազար վարդապետքս տեսնելով զքայքայումն մենաստանիս, հիմնարկեալ ի Մաղաքիա ճգնաւոր վարդապետէ Ղրիմեցւոյ և աւարտեալ ի Յովհաննու Որոտնեցի մեծ վարդապետէ՝ որդւոյ Իւանէի մեծ իշխանին Վաղատանոյ, յամի Տեառն ՌՅԶԱ և ի թուին Հայոց ՊԼ. նորոգեցաք զվանս ի հիմանէ կոփեալոյ վիմօք, տրօք ազգիս Հայոց, ի Կաթուղիկոսութեան սրբոյ Էջմիածնի Տեառն Յակոբայ Դ. Զուղայեցւոյ, յամի Տեառն ՌՈԾԶ և ի թուին Հայոց ՌՃԵ...»**[6]: Այնուհետև արձանագրության մեջ խոսվում է վանքի կալվածքների սահմանների մասին: Ըստ որի ս. Կարապետ վանքը ունեցել է մեծ կալվածքատարածություն:

Եսայի Նշեցի վարդապետը վանքի այդ նորոգման մասին վերոհիշյալ արձանագրությունից բացի թողել է նաև այլ արձանագրություններ: Այդ արձանագրություններից մեկը քանդակված է տաճարի հյուսիսային

[1] Տե՛ս **Արիստակես եպիսկ. Սեդրակյանց**, Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղ-պատ, 1872, էջ 5:

[2] Տե՛ս **Մեսրոպ արքեպ. Սմբատյանց**, Նկարագիր սուրբ Կարապետ վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 3—4:

[3] *Տե՛ս* Статическое описание Нах. провинции Санпетербург, 1833, *էջ 75*.

[4] Տե՛ս **Ղազար վարդապետ Ջահկեցի**, Գիրք Աստվածաբանական որ կոչի Դրախտ Ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 640:

[5] Տե՛ս **Հ. Էֆրիկյան**, Բնաշխարհի բառարան, Վենետիկ, 1902, հտ. Ա, էջ 718;

[6] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1869, № 26;

որմի պատուհանից վերև, ճակատային հատվածում տեղադրված գեղաքանդակ խաչքարի վրա՝

1. **Եսայի վ(ա)րդ(ա)պ(ե)տ**
2 **շինող**

Իսկ մյուսը՝ արևելյան որմի բարձունքի մասում տեղադրված խաչքարի վրա՝

1 **Եսայի վ(ա)րդ(ա)պ(ե)տ**
2 **շնող**
3 **թվ. ՌԾԴ(1655 թ.)**[7]

Չնայած այն հանգամանքին, որ ս. Կարապետ վանքի 1381 թ. հիմնարկված լինելու վերաբերյալ չունենք այդ տարեթվով արձանագրված վիմագրություն, հավաստիացնող աղբյուր, այնուամենայնիվ պետք է ընդունելի հիմք համարել վանքի 1381 թ. կառուցված լինելու փաստը, որը ս. Կարապետ վանքատեղի երկրորդ ծնունդն է, նրա հիմնովին վերականգնումը 14-րդ դարի հայկական միջավայրի ղեկավար հոգևոր դեմքերի կողմից: Ինչպես մատենագիտական աղբյուրներում, այնպես էլ վանքի համալիրի վիմագիր արձանագրություններում կան տարեթվերի տարբեր մատնանշումներ, որոնք անվիճելի չեն: Վանքի համալիրի շինությունների ու շրջակայքի մեր մի քանի անգամ կատարած հետազոտումներն ու ուսումնասիրությունները խոսում են այդ տեղի ավելի վաղ՝ 3—5-րդ դարերին վերագրվող կյանքի մասին: Վանքի շինություններից մեկի՝ հարավային պարսպաշարքի մոտ ավերակների ուսումնասիրության և նրա հիմքի ու հատակի մասնակի պեղումների ժամանակ 1973 թ. հայտնաբերել ենք 9—13-րդ դարերի խեցեղենի մնացորդներ: 1898 թ. արևմտյան պարսպաշարքի մոտակայքում ևս հողի շերտերում հայտնաբերվել է թոնիր, երկու խաչքարեր, որոնցից մեկը ունեցել է ՀԲ(1253) տարեթիվը կրող արձանագրություն[8]:

Մեր ուսումնասիրությունների ժամանակ հարավային պարսպի մոտ հանդիպել ենք նաև հնագիտական էական նշանակություններ ներկայացնող դամբարանների, որոնք կարելի է վերագրել 7—9-րդ դարերին: Այս պարսպի մոտ դամբարանների առկայությունն է ընդգծել նաև Արիստակես եպս. Սեդրակյանը, որոնց մասին գրել է. «... **մօտ օրերս** (1871—1872 թթ.—Ա. Ա.) **դիպուածով երևեցան հարաւային պարսպին տակ քանի մի գերեզմանք՝ որք մինչև ցարդ անհշմար անյայտացած էին խճանիւթ կարկառին մէջ. ի ներքուստ ամենքն մաքուր լոած և յարդարած փոքրիկ խրճթիկներ էին, ուր կային միայն ոսկերոտիքն...»**[9]: Այս դամբարանները, ըստ ավանդության, վերագրվում են իշխանական տոհմերին: Ս. Կարապետ վանքատեղի ամենահին հուշարձանը, այդտեղի վաղեմի հնությունը ապացուցող հուշարձանը, նրա «Ճգնավորի տունն» է, որը հայտնի է նաև «Սուրբ Կաթանք» աղբյուր անվանակոչումով: «Ճգնավորի տունը» գտնվում է վանքի պարսպից դուրս՝ արևելյան կողմում: Այն իր արտաքինից պատկերվում է որպես քարայր-անձավ, որի մուտքից գետնուղին բարձրանում է ս. Կարապետ վանքի տաճարի տակ: Այդ քարայրի փորվածքը ունի թաղակապ կազմություն և բավականին ընդարձակ տարածություն, որի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրահանգելու այն մտքին, որ մեր թվարկության առաջին դարերում այս անձավը եղել է բնակատեղի, և իզուր չէ որ այն պահպանել է «Ճգնավորի տուն» անվանակոչումը:

Այդ տեսակետից պատմականորեն իրողություն է այն հանգամանքը, որ մ.թ. 1—4 դարերում իրական կյանքի ծանր պայմաններում և քրիստոնեական գաղափարախոսության հետևորդների հալածանքների պատճառով առանձին մարդիկ, որոնք կոչվում էին անապատականներ[10], երբեմն մենակ, երբեմն փոքրիկ խմբերով հեռանում էին իրենց բնակավայրերից դեպի անապատներն ու լեռները և ապրում էին կուսական վայրերում: **Անապատականները,**— գրում է Փավստոս Բուզանդը,—**«յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ ի քարանձաւս ամրացեալք յայրս և ի ծերպս երկրի...»**[11]: Ամենայն հավանականությամբ, մինչև վանական եղբայրությունների հանդես գալը Երնջակ գավառում նույնպես եղել են ճգնավորական խմբեր: Այդ է վկայում նաև Երնջակ գավառի կենտրոնական մասում գտնվող բարձրաբերձ լեռներից մեկը, որը ստացել է «Ճգնավորի սար» անվանակոչումը: «Ճգնավորի սարի» բարձրագագաթում, նրա ծերպերում և լեռնափեշերում

[7] Այս արձանագրությունների հմմտ. տե՛ս **Մեսրոպ արքեպ. Սմբատյանց** (նշվ. աշխ., էջ 4), **Արիստակես եպիսկ. Սեդրակյանց** (նշվ. աշխ., էջ 16), **Հ. Ղ. Ալիշան** (Սիսական, Վեն., 1893, էջ 379):

[8] Տե՛ս **Մեսրոպ արքեպ. Սմբատյանց,** նշվ. աշխ., էջ 17:

[9] Տե՛ս **Ա. Սեդրակյան,** նշվ. աշխ., էջ 34—45:

[10] Տե՛ս **Ցուսիկ եպիսկոպոս,** Անապատականներ և վանականություն, Վաղ-պատ, 1906, էջ 5, 22: **Ներսես եպիսկ. Մելիք-Թանգեան,** Հայ եկեղեցական իրաւունք, հտ., Բ, Շուշի, 1905, էջ 66:

[11] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, դպր. Զ, գլ. ԺԶ:

մինչև այժմ էլ մնում են այդտեղ բնակություն հաստատած խստակրոն ճգնավորական միաբանությունների քարանձավներն ու այրերը:

Անդրադառնալով ս. Կարապետ վանքի «Ճգնավորի տան» հնագիտական արժանիքներին, պետք է ենթադրել, որ այն որպես բնակավայր ճգնավորության համար ծառայել է դեռևս 1—5-րդ դարերում: Իսկ հետագա դարերում, մոտավորապես 8-րդ դարում, այդ քարանձավի վրա հիմնվել է վանական միաբանության բնակատեղի և վանք: Վանքը կառուցելով վիմափոր անձավի վրա, բնականորեն անուշադրության է մատնվել անձավի բնակարանի դերը. այն հետագայում օգտագործվել է որպես ապաստան մթերապահեստ, պաշտպանության վայր: Իսկ հետագայում վանքի բարձրավանդակից վերև գտնվող հողատարածությունների մշակման և ջրովի ոռոգման սիստեմատիկ բնույթի հետևանքով այդ քարանձավում ի հայտ է եկել սառնորակ աղբյուր: Այդ աղբյուրի ջուրը կապված է եղել ոռոգման շրջանների հետ և երբեմն ունեցել է առատ ջուր, իսկ սովորաբար՝ քարակ, կաթկթող: Հենց այդ կաթկթող հատկությունը ի նկատի ունենալով այդ աղբյուրը կապվել է ս. Կարապետ վանքի սրբության հետ (վանքի տակից կաթկթելու համար) և կոչվել է «Սուրբ Կաթանք» աղբյուր:

Հիմնվելով ս. Կարապետ վանքի «Ճգնավորի տան», արձանագրված դամբարանների արժանիքների վրա և աչքի առաջ ունենալով վանքի շինությունների առանձնահատկություններն ու նրանցում օգտագործված տարբեր տարեթվեր (1074 թ., 1123 թ., 1253 թ. և այլն) ունեցող արձանագրությունները, վստահորեն կարելի է ասել, որ մինչև 1381 թ. ս. Կարապետ հանրահռչակ վանքի հիմնումը, այդտեղ գոյություն է ունեցել մի այլ ընդարձակ շինություն՝ վանք, վանական կյանք: Եվ պատահական չէ նաև այն հանգամանքը, որ ս. Կարապետ վանքը 1381 թ. հիմնվել է գավառի նպատակահարմար տեղում, նախկինում այդտեղ հոգևոր կենտրոն հանդիսացած կրոնական շինության ավերակ հիմքերի վրա:

Ս. Կարապետ վանքի դպրոց-գրչօջախը:

Նախքան ս. Կարապետ վանքի դպրոցի գործունեությունը, Երնջակ գավառում հայտնի են եղել Ապրակունյաց դպրոցի երկու կենտրոններ ևս: Դրանք Աբրակունիսի մոտ գտնվող ս. Գևորգ վանքի և Աբրակունիսի վերին վանքի կամ ս. Խաչ վանքի դպրոցներն էին, որտեղ դասախոսել և ռաբունապետեր են եղել Գլաձորի համալսարանի սաներ Գրիգոր Ապրակունեցի վարդապետը և Սարգիս վարդապետ Ապրակունեցին[12]: Սակայն Ապրակունյաց դպրոցների շարքում իր գործունեությամբ, դերով ու գիտական նշանակությամբ, իրավամբ, աչքի է ընկնում ս. Կարապետ վանքի նշանավոր դպրոցը, որը 14—18-րդ դարերում չի զիջել Երնջակ գավառի հոգևոր, մշակութային կենտրոնի իր դերն ու դեմքը: Ըստ ուսումնասիրողների (Հ. Միքայել Չամչյանի), ս. Կարապետ վանքի դպրոցում առաջին ռաբունապետը եղել է (1381 թ.) Մաղաքիա Ղրիմեցին, իսկ հետո՝ 1382 թ.-ից, Հովհան Որոտնեցին, որից հետո 1388 թ. մինչև 1391 թ.՝ Գրիգոր Տաթևացին: Ապրակունիսի դպրոցում դասախոսական-մանկավարժական մեծ աշխատանքներ է ծավալել նաև Որոտնեցու և Տաթևացու աշակերտ Մատթեոս աբեղա Ջուղայեցին: 1391 թ. Մատթեոս Ջուղայեցին Աբրակունիսի դպրոցում շարադրել և գրչագրել է իր անդրանիկ աշխատություններից մեկը՝ «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին» և թողած հիշատակարանում գրել է. **«...յերկիրս Երնջակոյ, ի վանքս Ապրակունեաց ... գծագրեցի առ ի յիշատակ առ յապա եղելոց մանկանց...»**[13]:

Միջնադարյան Հայաստանի այս նշանավոր գիտնականներն ու փիլիսոփաները ղեկավարելով ս. Կարապետի դպրոցը, անկասկած այդտեղ ևս բարձր մակարդակով են կազմակերպել ուսումնագիտական ծրագրերը, ծավալել են լայն մանկավարժական, գիտական գործունեություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ դպրոցում ևս դասավանդվել է փիլիսոփայություն, նկարչություն, մարդակազմություն, աստվածաբանություն, մաթեմատիկա և այլ մեկնողական-քերականական առարկաներ, ուր կրթություն են ստացել Երնջակի և շրջակա գավառների տասնյակ ուսումնատենչ մարդիկ: Աբրակունիսի ս. Կարապետ վանքը հայտնի է նաև որպես նշանավոր գրչօջախ, որի հարուստ գանձերից քիչ բան է մեզ հասել: Այդտեղ գրչագրված և մանրանկարված ձեռագրերի մի փոքրիկ հատվածը պահպանվում է Երևանի Մատենադարանում (տես ձեռագիր. № № 95, 2587, 2519, 2669, 2732, 3033, 4272, 4276 և այլն), որոնց ուսումնասիրությունները վկայում են, որ այդտեղ լուրջ ուշադրություն է դարձվել գրչարվեստին: Այդ վանքի ստեղծման հենց առաջին օրերից նրա շուրջը համախմբվել են տասնյակ մասնագետ գրիչներ, գծողներ,

[12] Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 4517, էջ 101ա:

[13] Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը, Եր., 1950, էջ 592:

ծաղկողներ և այլն: Այդ տեսակետից ուշագրավ է 1386 թ. այդտեղ գրչագրված «Ժողուածու բանից Գրիգոր Նարեկացւոյ, Գրիգոր Տղայի եւ այլոց» գրքի Հակոբ գրչի հիշատակարանը, որտեղ նա նշելով ձեռագրի վրա աշխատող խմբի աշխատանքները, միաժամանակ և խնդրում է. **«Այլ և յիշեսջիք զհոգևոր եղբարքս մեր՝ զՅովհաննէս՝ կազմող սուրբ գրոցս, և զԿարապետ՝ ծաղկող, որ ձրի ծաղկեաց, ևս առաւել զբարի շառաւեղքն յօրինեալ արմատոյն զԿարապետ՝ կրօնաւորի ի տիսս մանկութեան և զեղբայր սորին՝ զՄկրտիչ դպիր, որ են աշակերտք մեր, զի բազում աշխատութեամբ ջանացին ընդ մեզ, զի զամեն գթուղթս սուրբ գրոցս սոքա կոկեցին և տողեցին»**[14]:

Հակոբ գրիչը շրջել է Որոտնեցու հետ շատ վայրեր և իր հիշատակարաններում արձանագրվածների մասին խոսում է որպես ականատես: Նա Որոտնեցու Աբրակունիսի ս. Կարապետ վանքում երկրորդ անգամ հաստատվելու մասին, այդ նույն հիշատակարանում գրել է. **«և եկեալ սորա անխրոով խաղաղութեամբ ի վերայ վանորէից իւրոց, ի գաւառն Երընջակայ, շինէր և հաստատէր զսուրբ զեկեղեցիս շքեղ և փառաւոր ի մէջ անօրէն իշխանաց և բերթաւագաց, և ուրախ և ցնծութեամբ կայոք առաւել քան զառաջինն»**[15]: Այստեղ **«ի վերայ վանորէից իւրոց»**-ը ևս վկայում է, որ Երընջակ գավառի միջնադարյան (14—15-րդ դարերի) վանքերի ու եկեղեցիների, դպրոցների ու գրչատների մի մասը ստեղծվել և ղեկավարվել են Որոտնեցու և նրա աշակերտների կողմից:

17-րդ դարում Աբրակունիսի ս. Կարապետ վանքի դպրոցը ապրում է ծաղկման նոր շրջան, որը ղեկավարում էին Ղազար վարդապետը և Եսայի վարժապետը՝ Եսայի վարդապետ Մեղրեցին:

14-րդ դարում հիմնարկված և մի քանի անգամ վերանորոգված ս. Կարապետ վանքը այժմ կանգուն է մեկուսացած վիճակում: Դարերի ընթացքում վերացել են նրա տասնյակ շինությունները (18-րդ դարի կեսերին և վերջերին այն ունեցել է ավելի քան 40 օժանդակ շինություններ): Այդ վանքը վերջին անգամ վերանորոգվել է 1900 թ., Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կազմակերպչական աշխատանքների շնորհիվ և Նախիջևանի գավառի ժողովրդի անմիջական օգնությամբ:

Ս. Կարապետ վանքի համակառուցվածքի մեջ մտնող հուշարձաններն են՝

Տաճարը. Այս վանքի տաճարը (նկ. 2) իր դարաշրջանի հայ ճարտարապետական արվեստի աչքի ընկնող կոթողներից մեկն է՝

Նկ. 2. Ս. Կարապետ տաճարը արևմտյան կողմից

հիմնարկված 17-րդ դ.: Կառուցված է կապտավուն սրբատաշ բազալտից, որը բերված է վանքից մոտավորապես 3 կմ հեռավորության վրա գտնվող քարհանքից (հետագայում՝ վանքի քարհանք): Ս. Կարապետի տաճարը ունի քառամույթ բազիլիկայի հորինվածք, որի բարձրագմբեթ կաթողիկեն վեհասլաց է, աղյուսաշար և ունի ութը լուսամուտներ: Տաճարը իր ներքին արտահայտությամբ լուսավոր է և ընդարձակ, ունի մի շարք բարձրարվեստ զարդաքանդակներ, արձանագրություններ: Ավագ և ընդարձակ սեղանի աջ և ձախ կողմերում կան երկհարկանի գեղեցիկ ավանդատներ, որոնց երկրորդ հարկերի մուտքերը բացված են սեղանի կողմից և դեպի վար իջնող հինգ քարյա սանդուղքներով կապ են պաշտպանում Ավագ խորանի հետ: Ավագ խորանի բեմի ամբողջ երկարությամբ քանդակված է գեղեցիկ գոտեպատող գոտի, որի բարձունքում քանդակված է 2 գեղեցիկ խաչքարերի խորաքանդակներ և 5 սկավառա-

---

[14] Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը, Եր., 1950, էջ 559:

[15] Նույն տեղ, էջ 424:

կաձև զարդանախշերի բարձրաքանդակներ: Աջակողմյան ավանդատունը ունի վիմափոր, քարյա սանդուղքներով ընդերքը իջնող գաղտնատուն, որտեղ պահվել են ձեռագրեր և վանքի սուրբ մասունքներ: Այդ վիմափոր գետնուղուց մի ճյուղ առանձնանալով բարձրանում է անմիջապես գլխավոր խորանի հետևը, իսկ մի ճյուղն էլ իջնում է վար և միանում վանական շինությունների առաջին հարկերի տակ գտնվող գետնուղուն: Երկու ավանդատների մուտքերի բարավորներից վերև տեղադրված է մեկական գեղաքանդակ խաչքարեր, որոնց [illegible]ներին քանդակված են մեկական արձանագրություններ: Ձախակողմյան ավանդատան խաչքարի արձանագրությունը ունի ՋԻԴ (1475 թ.) տարեթիվը, իսկ աջակողմյան խաչքարը՝ ՌԾԴ (1204 թ.):

Ս. Կարապետ վանքի տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է տասնյակ վերանորոգումների, որոնցից առավելապես հայտնի է տաճարի 1648—1649 թթ. նորոգումը, որի մասին պահպանվել է և՛ վիմագիր, և՛ գրավոր տեղեկություններ: Շոշ քաղաքում 1649 թ. սկսած և ս. Կարապետում ավարտված մի Ավետարանի հիշատակարանում ասվում է. **«Արդ սկսեալ եղև Ընպահան ընդ հովանեաւ սբ. Աստուածածնին, և յաւարդն ի սբ. մենաստան սբ. Կարապետի, որէ Նախագահ և երևելի յոյժ ի գաւառս Երնջակայ, յառաջնորդութեան Տր. Եսայեայ քրտնաջան վարժապետի, որ յոյժ երկսմբ աշխատի ի շինումն սրբոյ եկեղեցւոյս մեծի, կոփածոյ քարամբք գեղեցկաշար՝ ի հիացումն տեսողաց յօրինեալ՝ ձեռամբ յոքնահնար Դաւիթ կոչեցեալ ուստայի, ըստ որում աղեխարշ սրտիւ պաղատիմ յիշել զինքն և զարբանակեալ միաբանսն իւր զՄարտիրոս եպիսկոպոսն, զտէր Յոհաննէս վարդապետն և զտէր Արիստակէս, զՂազար սարկաւագն և զԴավիթ տնտեսն...»**[16]: Այս գրավոր աղբյուրի տեղեկությունները հաստատվում և հավաստիացվում է վանքի սեղանի բեմի ճակատին տեղադրված գեղեցիկ, շրջանաձև և բոլորապատ վանդակի մեջ առնված զարդանախշերից մեկի վրա փորագրված արձանագրությամբ՝

Աղաչեմ զձեզ. հարք սու(րբ)ք. զուստայ: Դ(ա)ւիթն յ(ի)շ(ե)ց(ե)ք:

Այստեղ, ինչպես նաև վերը նշված հիշատակարանում հիշվող Դավիթ ուստան, որը ս. Կարապետ վանքի տաճարի 1648—1649 թթ. վերանորոգման ճարտարապետն է եղել, հայ ճարտարապետության պատմությանը հայտնի (17-րդ դ.) Դավիթ ուստա ճարտարապետն է[17]: Ս. Կարապետի տաճարը և նրա ամբողջ համալիրը հիմնովին վերանորոգվել է նաև 1653 թ.[18], 1656 թ. և հետագա շրջաններում:

Նկ. 3. Ս. Կարապետ տաճարի արևմտյան մուտքը

Ս. Կարապետի գեղեցկաշեն տաճարը ունի երկու մուտքեր, հարավային և արևմտյան կողմերից: Արևմտյան մուտքը հանդիսանում է տաճարի կենտրոնական մուտքը, որի եզերքը երեք շարք քանդակազարդով է զարդարված (նկ. 3): Տաճարը և նրա սեղանը 1740 թ. ծաղկեցվել է նուրբ որմնանկարչությամբ շոռոթեցի հայտնի նկարիչ և բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի և նրա որդիների՝ Հարությունի և Հակոբի կողմից: Այդ ծաղկեցման մասին վանքի ձախակողմյան ավանդատան երկրորդ հարկի որմի վրա արձանագրված է՝ **ՌՃԶԹ թվին սուրբ սեղանն ծաղկեցաւ ձեռամբ Յովնաթանի և որդւոցն Յակոբի և Յարութիւնին, ուրեմն յիշեսջիք ի բարին, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ:** Այդ մասին պահպանվել է նաև գրավոր վկայություն՝ 1740 թ. Մկըր-

[16] Տե՛ս՝ «Հանդէս ամսօրեայ» Վիեննա, 1889, էջ 269:

[17] Տե՛ս Ճարտարապետության բառարան, Եր., 1969, էջ 23:

[18] Տե՛ս **Առաքել վարդապետ Դաւրիժեցի**, Պատմութիւն վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղ-պատ, 1896, էջ 347—348:

տիչ Զահկեցու հատուկ գիրը[19], որով վանահայրը դիմել է ամբողջ Նախիջևանի ժողովրդին վանքի այդ ծաղկեցմանը օգնություն ցույց տալու համար:

Մինչև օրս էլ տեսանելի են Նաղաշ Հովնաթանի և նրա որդիների կատարած մեծարվեստ որմնանկարների բեկորները տաճարի գլխավոր խորանի, կամարների, կաթողիկեի և որմերի այլ հատվածների վրա: Այդ որմնանկարների մնացորդներում աչքի են ընկնում լաջվարդ կապույտի, մուգ կարմրի և ոսկե դեղինի երանգները, որոնք Հովնաթանյանների բնորոշ առանձնահատկությամբ, առնված են եղել սև եզրագծերի մեջ, տպավորվում են որպես բազմախոս գույներ, ասելիքների լայն պաթոսով երանգավորված: Խորանի 5 գեղեցիկ խորշերում (83×1,25), կամարներում որմնանկարված և նրանց մի մասը մեզ հասած հատվածներում ուշադրության էին արժանի հատկապես Աստվածամոր, սբ. Պողոսի, սբ. Պետրոսի և այլ դիմապատկերները, որոնց արվեստը մի շարք զուգահեռներով հար և նման էր Հակոբ և Հարություն Հովնաթանյանների կողմից մանրանկարված «Հայսմավուրք» ձեռագրի (Մատենադարան, № 1533) դիմանկարներին[20]: Վանքի տաճարը անմխիթար վիճակում է: Այժմյան վիճակով անվնաս է մնացել տաճարի կաթողիկեի ծաղկազարդ որմնանկարները, աջ և ձախ ավանդատների մուտքերի դիմաց գտնվող մեծ խորշերի պսակների որմնազարդերի, գլխավոր խորանի (նկ. 4), նրա 5 խորշերի որմնազարդերի առանձին հատվածները, որոնք աննշան տարբերություններով հիշեցնում են Էջմիածնի տաճարի Նաղաշ Հովնաթանի ծաղկազարդ որմնանկարների նկարելաոճը:

Ս. Կարապետ վանքի տաճարը միջնադարում (14—18-րդ դարերում) կրել է մի շարք վերանորոգումներ և վերակառուցումներ, սակայն ճարտարապետական իր նախնական հորինվածքով մնացել է անփոփոխ և այսօր էլ ներկայանում է որպես միջնադարյան մի հետաքրքիր և ուշագրավ հուշարձան:

Ս. Ստեփանոս մատուռը. Այս ընդարձակ և գեղեցիկ մատուռը, ըստ մեր ուսումնասիրությունների, կառուցվել է մոտավորապես 1653—1656 թթ.: Այն 1714 թ. վերակառուցվել է շոռոթեցի խոջա Այվազի կողմից, որի վերաբերյալ սյունաձև որմերի վրա արձանագրված է բավականին մեծ, չափածո տեքստով գրված մի արձանագրություն:

Ս. Ստեփանոս մատուռը (նկ. 5) ևս կառուցված է վանքի կապտագույն սրբատաշ բազալտից, ունի մեկ մուտք: Մատուռի տանիքի վրա, քառամույթ հորինվածքով կանգնեցված է վայելուչ և բարձրագմբեթ զանգակատունը, որը 1705 թ. կառուցել է նախիջևանցի Աղաջանի որդի պարոն Աղամալը: Այս զանգակատունը ևս մի քանի անգամ վերանորոգումների է ենթարկվել և մոտավորապես 1915—1920 թթ. ավերվել է նրա գմբեթը:



Նկ. 4. Հատված Աբրակունիսի ս. Կարապետ տաճարի գլխավոր խորանի որմնանկարչությունից (Լուսանկարը հրապարակվում է առաջին անգամ)

Գավիթը. Ս. Կարապետ վանքի գավիթը գրավել է վանքի ընդհանուր լայնությանը հավասար տարածություն: Գավիթը կառուցված է եղել չորս հաստաբեստ սյուների վրա, որոնց կամարները հենվել են վանքի արևմտյան որմին: Ընդ որում սյուները, որոնցից երեքը այժմ անվնաս դրությամբ ընկած են տաճարի մուտքի մոտ, գետնից վերև կանգնեցված են եղել ութանիստ ան-

[19] Տե՛ս **Մեսրոպ արքեպ. Սմբատյանց**, նշվ. աշխ., էջ 464—466:

[20] Տե՛ս նաև **Մանյա Ղազարյան**, Հայ կերպարվեստը 17—18-րդ դարերում, Եր., 1974, էջ 172—173:

կյունով 1,12 մ լայնություն ու 2,5 մ բարձրություն ունեցող մեկ կտոր զանգվածային բազալտյա քարերից:

Նկ. 5. Ս. Կարապետ եկեղեցին՝ կից մատուռով

Գավթի հիմնարկման մասին գրավոր և վիմագիր աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Մեր ուսումնասիրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ ս. Կարապետի գավիթը կառուցված է եղել մոտավորապես 15-րդ դարի կեսերին: Նրա վերանորոգումներից մեկի մասին տեղեկություն ունենք 17-րդ դարի ժամանակագրություններից մեկում, ուր ասվում է. **«Իսկ սրահն և գաւիթն ի ՌՃԺ և Գ (1664) ամին հիմնարկեցաւ, և ՌՃԺ և հնգին (1666) կատարեցաւ ի հոկտեմբեր ամսոյ Ժ (10) նաւասարդի Հայոց Ե (5)»**[21]:

Գավիթը կիսականգուն է եղել մինչև 20-րդ դարի սկիզբը, որից հետո իսպառ ավերվել է:

Բակը. Ս. Կարապետ վանքը շրջապատված է եղել (այժմ էլ մնում են անվնաս հատվածներ) քարից, աղյուսից և կրից կառուցված բարձր կրկնապարիսպներով: Պարիսպը ունեցել է երեք դարպասներ՝ հարավից, արևմուտքից և արևելքից: Արևելյան, հյուսիսային, հարավային պարսպաշարքերի մոտ կառուցված են եղել միաբանների խցերը, տնտեսական բնույթի տասնյակ շինություններ, որոնց մի մասը վաղուց արդեն ավերակ է, իսկ մի մասն էլ այժմ կիսականգուն վիճակում է: Շինությունները 2—3 հարկանի են, որոնց առաջին հարկերի ծածկը ունի թաղակապ կազմություն: Հարավարևմտյան պարսպաշարքի անկյունում կառուցված մի շինության որմերին նկատելի են որմնանկարների՝ ծաղկազարդերի մնացորդներ:

Շրջակայքը. Ս. Կարապետ վանքը արևելյան կողմից բաժանված է փոքրիկ ձորակով: Ձորի դիմաց, Աբրակունիս գյուղ մղտնող ճանապարհի աջ կողմում, գտնվում է վանքի հին գերեզմանատունը՝ 15—18-րդ դարերի տապանաքարերով: Վանքի հյուսիսային կողմում գտնվող բլրակների վրա և նրանց շուրջը տարածված է 15—20-րդ դարերին վերագրվող Աբրակունիս գյուղի ընդարձակ գերեզմանատունը, որի տապանաքարերի թիվը անցնում է 1000-ից:

Վանքի շրջակայքում, մինչև Երնջակ գետի եզերքը, միջնադարում եղել է մի քանի հազար ծառից կազմված բարդու անտառ: Այդ անտառից այժմ հատուկենտ նմուշներ են մնացել միայն:

[21] Տե՛ս Մանր ժամանակագրություններ, 13—17-րդ դդ., հտ. 1-ին, Եր., 1951, կազմեց Վ. Ա. Հակոբյանը, էջ 395:

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ*

ՀԱՑԻ ԳՅՈՒՂԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հացի գյուղը դարձյալ պատմական հինավուրց կոթողների, ավանդությունների գյուղ է: Այն ունի արժեքավոր բազմաթիվ հուշարձաններ, որոնք լուռ վկաներ են գյուղի հետաքրքիր պատմության: Բավական է հիշել, որ այս գյուղի վաղնջական անցյալը կապված է Վաչագան Բարեպաշտ թագավորի (Ե դ.) գործունեության հետ և նույնիսկ մտել է Վաչագանի ու Անահիտի սիրուն նվիրված ժողովրդական ավանդության ու հեքիաթի հյուսվածքի մեջ (Հացիկ անունով):

Հացիի պահպանված հուշարձաններից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գետակի ձախ ափին, բլրի գագաթին և լանջերին, փռված հուշարձանախումբը, որը ժողովրդի կողմից կոչվում է «Բռի եղցի»:

«Բռի եղցի» (եկեղեցի) անվամբ հայտնի հուշարձանախումբը բաղկացած է երեք փոքր եկեղեցիներից, չորս որմնափակ խաչքարերի մնացորդներից և ընդարձակ գերեզմանատնից: Բոլոր հուշարձանները կառուցված են փխրուն և շուտ քայքայվող թերթաքարից, որի պատճառով քանդակներն ու արձանագրությունները խիստ հողմահարված ու փշրված են:

Կանգուն և կիսավեր շինությունների ճարտարապետական ոճը և նրանց վրա մնացած արձանագրություններն ապացուցում են, որ դրանք մեծ մասամբ շինված են ԺԳ դարում[15]:

Առաջին եկեղեցին, որը գտնվում է բլրի գագաթի արևմտյան կողմում, փոքր շինու-



Հացի գյուղ. «Բռի եղցի» համալիրի առաջին մատուռը

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1976 թվականի № 2-ից:

15 **Ս. Բարխուդարյան,** Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963 թ., էջ 98:

թյուն է՝ շարված անտաշ սալաքարերով: Գրեթե ամբողջական մնացած թաղածածկ եկեղեցու միակ մուտքն արևմուտքից է, որի երեսակալները գեղեցիկ հյուսվածազարդով են, քառակուսիներ, և մեջը նույնպես հյուսազարդ խաչեր:

Բարավորի քարը կիսաշրջանաձև է, կենտրոնում՝ քանդակված խաչ, և շուրջը՝ ռոմբեր: Մուտքի վերին երկու կողմերին թռչուններ են՝ գլուխները փշրված: Արևմտյան ամբողջ պատի արտաքին երեսը պատած է խաչազարդ սալաքարերով:

Հյուսիսային կողմի թռչունների քանդակի մոտ ագուցված է մի սալքար, որի վրա հետևյալ արձանագրությունն-հիշատակությունն է փորագրված.

ՁԽԱ-
ՁԵՆԻԿ
ՎԱՐԴ-
ՊԵՏ
ՍԲ ԵԿԵՂ-
ԵՑՑՈՍ
ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇ
ԵՑԷՔ Ի ՔՍ:

Վարպետ Խաչենիկը, որի անունը հիշատակված է արձանագրության մեջ, բացի այս եկեղեցուց, նույն բլրի ստորոտում, ճանապարհի հարավային եզրում կառուցել է նաև մի մեծ ու գեղեցիկ որմնափակ խաչքար: Կոթողի վերևի ճակտոնը քանդված է, որի տակ, ինչպես վկայում է Ս. Բարխուդարյանը, եղել են սրբատաշ 8 քարեր, մի շարքով, որոնց վրա գրված է մեծ արձանագրություն՝ բաղկացած 6 երկար տողերից: Ի դեպ, անվանի գիտնականը 1961 թվականին եղել է այստեղ և մանրամասնորեն ուսումնասիրել ու նկարագրել և՛ հուշարձանները, և՛ արձանագրությունները:

Խաչենիկի հիշյալ հուշարձանի հյուսիսային շրջանակի ստորին մասում անեղծ պահպանվել է հետևյալ արձանագրությունը.

ԵՍ ԽԱՉԻՆԵ-
Կ ԱՆԵՑԻ, ՎԱՐ-
ԴՊԵՏ ՍԲ ՆԾ-
ԱՆԻՍ, ՈՐԴԻ ՎԱՐ-
ԿԱՍԱ, ՈՐՔ ԿԱՐ-
ԴԷՔ ՅԱՂԱՒԹ-
Ս ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ[17]:

«Խաչենիկ վարդապետի կառուցած այս հուշարձանը,—գրել է Ս. Բարխուդարյանը,—13-րդ դարում տարածված նման հուշարձանների լավագույն նմուշներից է և մեր տեսած ամենամեծերի շարքին է պատկանում»[18]:

Այս որմնափակ խաչքար-կոթողը չորս կողմից շարված է սրբատաշ սալքարերով, ունի բարձր ու շքեղ պատվանդան, որի երեսաքարերից դժբախտաբար մեկն է մնացել, և դրա վրա պահպանվել են նույն ռոմբաձև զարդերը: Որմնախորշի մեջ ագուցված են եղել չորս խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով:

Երկրորդ եկեղեցին հիմնադրվել է ԺԳ դարում, գտնվում է բլրի գագաթին, փոքրիկ հարթակում: Ներկայիս եկեղեցին, որի արտաքին չափերն են 7,5×7,8 մ, ունի քառակուսի հատակագիծ և շինված է վաղ միջնադարյան հուշարձանի հիմքերի վրա:

Շենքը շարված է սպիտակ անտաշ կրաքարով: Թաղակապ ծածկը հենվում է պատերի վրա: Եկեղեցին ունի նաև երկու փոքրիկ խորաններ և մեկ նեղ բեմ: Խորանների մուտքերը եզերված են գեղեցիկ քանդակներով: Բեմի մոտ, կոփածո քարի վրա, գրված է հետևյալ արձանագրությունը.

«Թվ. ՉԺԹ...ի Տէրութեան... Տր Ստեփանոսի յե...սիսի (յեպիսկոպոսութեան Ներսեսի) ես Մխիթար որդի... կանգնեցի զխաչս»[19]: Եկեղեցու ներսում կան մի շարք գերեզմանաքարեր, որոնցից մեկի վրա քանդակված է տապանագիրը. «Այս է տապան Տր Յոհանիսին որդի Տր Կարապետին թվ ՌՄԽԷ»[20]:

«Բոի եղցի» հուշարձանախմբի արևմտյան կողմում՝ բլրի ստորոտում է գտնվում հաջորդ եկեղեցին, այն, որ համեմատաբար փոքր է ու շարված կոպտատաշ սալաքարերով: Շինության ծածկը փլված է, պատերը, հատկապես արևմտյանը, թե՛ դրսից և թե՛ ներսից պատած են տարբեր մեծությամբ տասնյակ խաչքարերով: Արևմտյան մասում բացվող միակ մուտքը զարդարված է քանդակներով: Առանձնապես հետաքրքիր լուծում ունի կիսակամար ճակատաքարը: Կենտրոնում խաչ է, շուրջը՝ շախմատաձև զարդեր, իսկ երկու կողմում տեղադրված են մեկական սիրամարգի բարձրաքանդակներ: Այդ նույն արևմտյան պատի վերնամասում փորագրված է հինգ տողանի շինարարական արձանագրություն, որի տողերի սկզբի մասից երկու քար ընկել-կորել են, իսկ մնացածներն էլ կիսեղծ վիճակում վկայում են, որ եկեղեցին կառուցվել է Աղվա-

---

[16] Անդ, էջ 98, «Արցախ», էջ 126:

[17] **Ս. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 98:

[18] Անդ:

[19] «Արցախ», էջ 125:

[20] **Ե. Լալայան**, Ազգ, հաս., Բ, 1898 թ., էջ 48:

նից Հովհաննես կաթողիկոս և նրա կրտսեր եղբայր Ներսես կաթողիկոսի օրոք, 1235 թվականից առաջ[21]:

Նույն արձանագրության կողքին պահպանվել է ճարտարապետի հիշատակագիր արձանագրությունը.

ՋՇԱՀԵՆ Վ-
ԱՐԴԱՊԵՏ
ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏՐ:

Ինչպես այս, այնպես էլ առաջին եկեղեցու արձանագրության մեջ վարդպետ գրության փոխարեն վարդապետ գրված լինելը, մասնագետները համարում են «գրչի սխալ»[22]:

«Այսպիսով, «Բռի եղցի» հուշարձանախմբի ստեղծման մեջ երկու ճարտարապետների անուններ են հանդես գալիս, որոնցից Խաչենիկ Անեցին կառուցել է մի եկեղեցի և մի որմնափակ խաչքար, իսկ Շահենը՝ մի եկեղեցի: Բայց, նկատի ունենալով մնացած կիսավեր հուշարձանների ոճական և կառուցողական նմանությունները այս վարպետների կառուցածների հետ, պիտի ենթադրել, որ վերջիններիս մի մասն էլ այս ճարտարապետների ստեղծագործություններն են, մանավանդ որ անհայտ եկեղեցիների պատերին եղած արձանագրություններում պահպանված թվականները և անձնանունները ևս, ինչպես Ներսես եպիսկոպոսի և իշխան Սմբատի, ժամանակակից են Խաչենիկի և Շահենի կառուցածներին»[23]:

Ինչ վերաբերում է մյուս հուշարձաններին, որոնց Մակար վարդապետ Բարխուդարյանցը **բեմ** է անվանում, դրանք պարզապես որմնափակ խաչքարեր են՝ երեք կողմից շրջափակված սովորական պատերով, իսկ արևմտյան որմնախորշի մեջ ագուցված են խաչքարեր: ԺԳ դարում կառուցված այդպիսի որմնափակ խաչքարեր են պահպանվել Հաղրութում և Վանքում:

Սուրբ Աստվածածին եկեղեցին գտնվում է Հացի գյուղի կենտրոնում: Այն թաղակապ, բարձր և մեծ եկեղեցի է: Երկար տարիներ օգտագործվում է դպրոցի կողմից որպես օժանդակ շինություն:

Գյուղի հնությունների մեջ հետաքրքիր հուշարձան է նաև դպրոցի շենքը: Այն կառուցվել է 1911 թվականին, համագյուղացիներ Ջվանշիր և Գյուլբահար Ղազյանների միջոցներով:

Ականատեսները պատմում են, թե տակավին երիտասարդ ամուսիններն ինչպիսի սիրով են ձեռնարկել այդ աշխատանքին:

Շենքի ճակատային մասում գրված է.

«Հայ մանուկներին.
Թող ձեր բերնում հնչեն դարեդար
Սահակ, Մեսրոպ մայրենի բարբառը
Սիրեցեք բարին, լույսը, գիտություն,
Որ տանում են մեզ դեպի փրկություն,
Նվիրեցին Հացի գյուղին Ջվանշիր և Գյուլբահար
Ղազյաններ 1911 թ.»:

Հացի գյուղ. «Բռի եղցի» եկեղեցու ներսը

Հացի գյուղում կան մի շարք հուշաղբյուրներ: «Սվեգա ձորեն» աղբյուրը կառուցվել է 1909 թվականին: Ինչպես այդ, այնպես էլ «Անահիտ», «Քոնով» կոչվող աղբյուրները համարվում են գյուղի հիմնական աղբյուր-հուշարձանները:

ՍՊԻՏԱԿԱՇԵՆԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սպիտակաշենի մոտերքում, հին գյուղատեղիի հյուսիս-արևմտյան մասում, փոքր տափարակի վրա, կա մի եկեղեցի, որը կառուցվել է 19-րդ դարում, տեղական անտաշ քարով:

Պատմական մեկ ուրիշ հին հուշարձանի ավերակներ կա Սպիտակաշեն և Եմիշճան գյուղերի արևելքում, Ջարգյամարագ լեռան կատարին: Այստեղից լեռնակածանը հյու-

[21] Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 99:
[22] Անդ:
[23] Անդ:

սիս-արևելյան ուղղությամբ տանում է պարագծով դեպի Եխծուխութ սրբավայրը, մի փոքրիկ հարթ տեղ, ուր շատ են հինավուրց հսկայական չափերի անտաշ սև գերեզմանաքարերը՝ կիսով չափ թաղված հողի մեջ:

Սրբավայրի անվան ստուգաբանությունից երևում է, որ այստեղ երբևէ եղել է եկեղեցական շինություն: Նրա կործանումից հետո տեղացիները հավաքում են քարերը և կառուցում Նոր Սուրբ կոչվող եկեղեցին, որի ավերակները դարձյալ գտնվում են Սպիտակաշենից Աշան և Եմիշճան տանող ճանապարհի ձախ կողմում:



Պղնձակալ հնավայրի մոտերքում գտնվող խաչքար

Այդ փլատակների դիմաց հատած կոնի տեսք ունեցող մի բլրասար կա, որը Պղնձակալ անունն ունի և պատած է կործանված շինությունների մնացորդներով: Անցյալի այդ շենատեղից միայն մի խաչքար է մնացել:

Մի այլ հնություն, որ կոչվում է Մատաղախութ, գտնվում է Մարտունի-Ստեփանակերտ խճուղու վրա, Սպիտակաշենից դեպի հարավ: Մատաղախութից քիչ վերև, ուր խոզաբուծական ֆերմայից գյուղ տանող ճանապարհի վերելքն է վերջանում, գտնվում է 1,5 մետր բարձրությամբ արհեստական մի թումբ, որը կոչվում է Զարդամբուլ: Այստեղ դաշտային աշխատանքներ կատարելիս գտել են մեծ տարողությամբ կարասներ, մետաղյա ամաններ, զարդարանքներ:

ԱՂՎԱՆԱԲԵՐԴ

Աղդամ-Մարտունի ճանապարհի մոտավորապես կեսում, այնտեղ, ուր սկսվում են իսաղողի այգիները, «Ղզղալա» կրող ցուցանակի սլաքը թեքվում է դեպի հարավ: Ուղիղ 2,5 կիլոմետր այգիների միջով անցնելով, ճանապարհը դեմ է առնում տափաստանային լերկ ու կոնաձև մի փոքրիկ լեռան, որի անունը, ըստ ժողովրդական ավանդության, Աղջկաբերդ է: Թաթարներն այն թարգմանել են և կոչել Ղզղալա: Համանուն գյուղն էլ գտնվում է բերդից հարավ:

Գյուղից ներքև, դեպի խճուղին, Հինգշենատեղ հնավայրն է, որտեղից խաղողի այգիներ գցելու ժամանակ գտնվել են բրուտագործի արհեստանոց, կավե խողովակների շարք, բրոնզից և պղնձից ձուլած շատ իրեր, այդ թվում՝ ափսեներ, տղամարդու և կնոջ զարդարանքներ, ջնարակած թասեր, զենքեր, քարե լավ հղկած գործիքներ, որոնք արվեստի լավագույն նմուշներ են և արտաքինից շատ նման են Դվինում հայտնաբերված համանման նյութերին: Վերջերս Ղզղալայի դպրոցականները հնավայրից գտել են բերդի հին ջրատարը: Կավե խողովակների շարքը, ինչպես ցույց են տալիս ջրատարի հետքերը, ներկայիս գյուղի վերեվից, Ծովեր կոչված տեղից, ձգվել են մինչև Բերդասարի գագաթը: Ամրոցում հայտնաբերվել է մետաղի ձուլարան[24]: Լավ պահպանված, կավե թրծված պատերով ձուլարանն իրար հաղորդակից խողովակներով մի ամբողջ սիստեմ է ներկայացնում: Պահպանվել են նաև քարից ու կավից պատրաստված կաղապարները:

Աղվանաբերդին մոտիկ՝ Աշան գյուղի շրջակայքում հանդիպում են բազմաթիվ ավերակ բնակավայրեր, եկեղեցիներ, գերեզմանատներ և այլ հնավայրեր, որոնք դուրս են մնացել Մ. Բարխուդարյանցի, «Արցախ» գրքից:

Ահա դրանցից մի քանիսը.

1. Հերշեն գյուղատեղի—գտնվում է Աշան գյուղի դիմաց, մեկ կիլոմետր հեռավորության վրա: Այստեղ դեռ պահպան-

[24] «Սովետական Ղարաբաղ», 29 դեկտեմբերի 1973 թ., № 304:

վում են տնատեղեր, տապանաքարերով փոքրիկ գերեզմանատունը:

2. Ղուզարտեր քաղաքատեղին տարածվում է Աշան գյուղից 3 կիլոմետր արևմուտք, հարթավայրի վրա: Ընդարձակ տարածություն բռնող հնավայրի մեջ գտնվել է մի փոքրիկ խաչքար: Շրջակայքում կան ավերակներ, որոնք տեղական բնակչության կողմից ընկալվում են իբրև սրբավայրեր:
   ա) Ստեփանոց
   բ) Քրահարթ
   Պահպանվել է հին գերեզմանոցի մի մասը: Հնավայրում վերջին ժամանակներս պատահական կերպով գտնվել են հնագիտական բազմաթիվ իրեր, ջնարակած ափսեների բեկորներ, կավանոթներ և այլ հետաքրքիր նմուշներ:
3. Պիծի (փոքր) սուրբ կամ Նլբանդանց—գտնվում է Աշան գյուղի հետևի կողմում, Պիծի կոչվող լեռան վրա: Այստեղ դարձյալ տեսանելի են ավերակների հետքերը:
4. Ավետարան կամ Սվեգյանց սուրբ—գտնվում է Աշանի արևմտյան կողմում:
5. Մեծ Եխծի (եկեղեցի) անհաթար վիճակում կանգուն է Աշան գյուղի կենտրոնում: Կառուցված է տեղական տաշած քարատեսակներով:
6. Վանկախաչ—ավերված դրությամբ գտնվում է Նոր Աշանի մոտ, մի բլրի կատարին:
7. Կյումերեն (Գոմերի) կամ Աշան Բերդ (Պորթ): Կյումեր տեղամասից մեկ կիլոմետր հեռու, շրջակայքի ամենաբարձր բլրի վրա:
8. Ցեց (Ցից) քար—Հին կործանված գյուղատեղի, որի գոյության մասին է վկայում գերեզմանատունը:
9. Մեծ Նահատակ—պահպանվում է ամբողջությամբ, պատերի վրա կան արձանագրություններ:
10. Պիծի Նհատակ—Ղզղալա գյուղից դեպի արևելք: Հին բնակավայրից մնացել են գերեզմանոցը, եկեղեցիների ավերակները:
11. Ջնհազ—հին կործանված բնակավայր, ավերված եկեղեցիով, հողի մեջ կիսով չափ թաղված տապանաքարերով:
12. Օշախ — քաղաքատեղի — գտնվում է «Խաներ» տեղամասի մեծ հարթության վրա, շրջակա բազմաթիվ սրբավայրերով, ավերակներով և մի կանգուն խաչքարով:
13. Նհատակեն տափը—հին գերեզմանոց, կանգուն տապանաքարերով, առանց արձանագրությունների:

ԹԱՂԱՎԱՐԴԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Թաղավարդը հարուստ է հիշարժան վայրերով և նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններով: Թաղավարդ գյուղը բաժանված է երկու մասի՝ Վերին և Ներքին: Ներքին Թաղավարդից Շեխեր գնացող ճանապարհի վերին մասում, անտառապատ սարահարթում, կիսավեր դրությամբ դեռ մնում է Բրդահոնջ կոչվող եկեղեցին, որը

Աղվանաբերդից գտնված ջնարակած ափսեի բեկոր

շրջափակված է պարիսպներով: Կրկնապարիսպները, որոնք համեմատաբար անխաթար են մնացել, ձգվում են ժայռից-ժայռ, անմատչելի դարձնում միջնաբերդում գտնվող աշտարակները, բնակարանները, ջրավազանները և ժայռափոր այրերը: Պետք է ենթադրել, որ եկեղեցին եղել է միանավ բազիլիկ, բավականին երկար ու համեմատաբար նեղ հատակագծով, գեղեցիկ շենք, որից պահպանվել են առանձին բեկորներ, ատամնաշար քիվեր և այլ սրբատաշ քարեր, որոնք հատուկ են միջնադարի շենքերին: Հետաքրքիր կառուցվածք ունի բերդի ստորգետնյա մուտքը: Քարե ժայռափոր աստիճանները նեղ անցքով իջնում են բերդավանի ստորգետնյա «տնտեսությունները», որոնք դժբախտաբար հողով լցված են: Բրդահոնջն իր ժամանակին, հատկապես պատերազմական տարիներին, կարևոր դեր է խաղացել տեղական բնակչության պաշտպանության գործում:

Գյուղամիջի եկեղեցին. համաձայն դռան ճակատակալ քարի վրա եղած արձանագրության, կոչվում է սուրբ Աստվածածին և կառուցվել է ԺԹ դարում: Այդ առթիվ կա հետևյալ արձանագրությունը. «Շինեցաւ եկեղեցիս յանուն սրբոյ Աստուածածնին ար-

դեամբ և ծախիւք ազնիւ Բէրամ աղայի որդւոյ պօլկովնիկ Մելիք Ջիւմշիտեան Շահնազարեանց ի յիշատակ կենդանեաց և համայն ննջեցելոց իւրեանց ի Քրիստոս 1840 թ.»[25]:

Եկեղեցին եռանավ բազիլիկի ձևով շինված շենք է, 4 մույթերով, երկթեք ծածկը թաղակապ է, արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ՝ բարձր բեմով ու խորաններով:

Մեկ ուրիշ եկեղեցի գտնվում է գյուղից



Վաղ միջնադարյան շրջանին պատկանող արձանիկ. գտնվել է Աղջկա բերդ հնավայրից

մոտավորապես կես կիլոմետր հեռավորության վրա, «Գյուլեն բաղ» հանդամասում: Դարձյալ եռանավ բազիլիկի ձևի կառույց է: Հավանաբար վերակառուցվել է ԺԷ—ԺԸ դարերում: Պատերը շարված են անմշակ քարերով, կրաշաղախով: Եկեղեցու ավերակների մեջ գտնված արձանագրությունը, որը եղել է դռան ճակատակալը քարի վրա, ասում է. «Ես... Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին առաջնորդութիւն Տաւութին...»[26]:

Մեկ ուրիշ եկեղեցի կա Վերին Թաղավարդ գյուղում: Երկթեք կտորով բազիլիկ է, որի արտաքին չափերն են 18,35×9,65 մետր, կառուցվել է ԺԹ դարում, թաղավարդցիների միջոցներով:

Թաղավարդում հնուց ի վեր հայտնի է Փաթանց Խաչ սրբավայրը: Այն գտնվում է գյուղի «Կալեր» կոչվող հանդամասում և իրենից ներկայացնում է մի տափակ քար, վրան քանդակած խաչով: Հնում տեղացիները անձրևային օրեր ցանկանալու դեպքում խաչի վրա ջուր էին լցնում, իսկ արևային օրեր պահանջելու դեպքում՝ կրակ անում:

Ճոխտ պուվածառի վանք. Վերին Թաղավարդ գյուղի հարավային կողմում, ձվաձև լեռնաբազուկի վրա են գտնվում սրա ավերակները: Եկեղեցին, որի իսկական անունը հայտնի չէ, շրջապատված չէ պարսպի մնացորդներով:

Նրա գոյության մասին մինչև անցյալ դարի վերջերը ոչ ոք չգիտեր: Շինությունը թաղված էր հողի մեջ, սակայն հողի երեսին, բլրակի փոքրիկ հարթակում, իբրև ուղեցույց, կար մի խաչքար: 1884 թվականին թաղավարդցիները որոշում են խաչքարի վրա մատուռ կանգնեցնել: Հիմքերը փորելու ժամանակ հանդիպում են հողի տակ ծածկված եկեղեցուն:

Պարզվում է, որ խաչքարը վանքի ավերված պատերի մեջ եղած բազմաթիվ խաչքարերից մեկն է եղել, հրաշքով մնացել է գետնի երեսին:

Բարևածառի կառուցման ստույգ թվականը հայտնի չէ, բայց երկու արձանագրություններ պարունակող խաչքարեր ցույց են տալիս հետևյալը. «Սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս ի փրկութիւն Հոգո իմոյ և ծնողաց իմոյ: Արդ, որք երկրպագէք սուրբ նշանիս, զիս յաղաւթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ: ՆԽԶ (997) էր»[27], «Սուրբ Պաւղոս. յամս աստուածապսուիս և հոգևոր տեառն Յովհաննիսի Ամարասա եպիսկոպոսին և պետութեան տեառն Գագիկա Աղուանից իշխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւրորդի Կոկոնա»[28]: Գագիկը՝ իշխանաց իշխան թագավորը, նրա մասին թողել է մի այլ արձանագրություն, որ պահպանվում է Ղարաբաղի մարզային երկրագիտական թանգարանում. ապրել է Ժ դ. վերջին և ԺԱ-ի սկզբներին: Նշանակում է, երկու դեպքում էլ արձանագրված են Ժ—ԺԱ դարերի իրողություններ:

---

[25] «Արցախ», էջ 89:

[26] Նույն տեղում:

[27] «Արցախ», էջ 91:

[28] Նույնը:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատառիկի երկու երեսին էլ արաբական թվանշաններով բազմապատկության և այլ հաշիվներ կան:

Ը. ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 21,5×14 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** վատ:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 17:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** կա մի թռչնագիր և մի հատ էլ միացյալ մարդագիր-գազանագիր, որոնք շատ հասարակ են:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ: **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** սույն պատառիկը հանված է Մայր Աթոռի № 49 ձեռագրից:

Թ. ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 18×12,5 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 19: —**Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:

Ժ. ԺԱԾՈՑ

Թերթերը՝ 2:— **Մեծությունը՝** 18,6×10,7 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն բարակ թուղթ:— **Կազմը՝** ունի բարակ ստվարաթղթից մի կազմ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 18:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ունի երկու սիրուն թռչնագիր և մեկ լուսանցազարդ:— **Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ: —**Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** պատառիկն ստացված է նվեր Ստամբուլից Նշան Էվճիկյանի կողմից 1958 թ., Տ. Շավարշ քահանա Պալըմյանի միջոցով:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Նուէր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին թանգարանին, կը նուիրէ Նշան Էվճիկյան: 8 Յունիս 958 Իսթանպուլ:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1976 թվականի №№ Բ—Ե-ից:

Թ. 1բ.—Նուիրուած Շաւարշ քահ(անայ) Պալը-մեանի ջանքերով: 1958:

№ 389
ՀՐՈՎԱՐՏԱԿ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 68,2×48,1 սմ.:—**Նյութը՝** դիմացկուն հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար, բացի մի քանի եզրային փոքր մասերից, որոնք պատռված են:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** 1բ:—**Տողերը՝** 27:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** սույն ձեռագիրը միջնադարյան պարսկական զարդագրության գեղեցիկ և արժեքավոր մի նմուշ է: Հրովարտակի ամբողջական վերևի մասում (45×28 սմ.) և ներքևի աջակողմյան մասում (12,5×35,5 սմ.) նկարված են գույնզգույն գեղեցիկ ծաղիկներ, ծաղկեփնջեր, կանաչ տերևներ և ճյուղեր, ինչպես նաև ոսկեգույն նախշեր: Օգտագործված են որդան կարմիրը, կապույտն ու սրճագույնը, դեղինն ու կանաչը, ոսկեգույնն և այլ գույներ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Երևանի խանը՝ Հուսեյն-Ալի:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1759 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Երևան):—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն հրովարտակը (ֆերման) հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևանի Հուսեյն-Ալի խանի տված հրովարտակն (ֆերման) է սա Էջմիածնի Հակոբ Ե. Շամախեցի կաթողիկոսին (1759—1763 թթ.), որով պարսիկներին և այլազգիներին կարգադրում է, որ չխառնվեն Էջմիածնի և հայ եկեղեցու գործերին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Հրովարտակի ձախակողմյան վերևի մասում կա Հուսեյն խանի քառանկյուն փոքրիկ կնիքը (2×1,5 սմ.), որտեղ մի քանի այլ բառերի շարքում կարդացվում է «Հուսեյն» անունը:

Կնիքի ճիշտ կողքին, աջակողմյան մասում կա 1173 մահմետական թվականը (այսինքն 1759 թ.—Ն. Մ.), որ գչության տարին է:

Հրովարտակի առաջին տողը սկսվում է «Ակոբ խալիֆա» (Հակոբ կաթողիկոս—Ն. Մ.) բառերով, որին ուղղված է սույն պաշտոնական գիրը:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.—(Հրովարտակի կռնակի վերևի մասում նոտրգրով հայերեն գրված է հետևյալը):

ԻԲ—Մեր խանի թալղէն է զոր Հիւսէին Ալի խանն տուեալ է Շամաղցի Յակոբ կաթողիկոսին զամենայն հայոց վասն... ի գրոց նորին, զորս յատուկ գրեալ է ի սմա: Երկուք ևս գոն ի սմանէ, մին ի սոյն խանէս Սիմէօն կաթողիկոսին Երևանցւոյ, միւսն նոյն Սիմէօն կաթողիկոսին ի Քեարիմ խանէն, զորս գտցես ցուցակօքը: Սա գրի ի 1173 թուին տանկաց, իսկ միւսքն ի1176 թուոջն տանկաց: Լաւ պահէլիք են երեքեանն ևս:

(Հրովարտակի կռնակի ներքևի մասում նոտրգրով հայերեն գրված է հետևյալը):

Երևանայ Հիւսէին խանի թալկղայ է վասն ընդունելի լինելոյ զամենայն... թագաւորաց և... խանից... ուեցելաց առաջնոց:

(Այստեղ կա Հակոբ կաթողիկոսի ստորագրությունն ու թվականը)

Ցկր. Կթղկս. ի ՌՄԸ (1759 թ.—Ն. Մ.) թուոջն:

(Ձախակողմյան մասում կա նաև Հակոբ Շամախեցու կարմիր կնիքը, հետևյալ չափերով 2×1,7 սմ.: Գրված է կապգրերով):

ՔԻ.+Ծ.
Յակոբ Կաթողիկոս
128:

№ 390
ՀՐՈՎԱՐՏԱԿ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 60,4×28 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:—**Կազմը՝** թղթի կռնակում կարմրավուն գույնի մի ուրիշ թուղթ է կպցված:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 11:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** չունի: Հրովարտակի տեքստը ոսկեգույն շրջանակի մեջ է առնված, իսկ վերևում գտնվող կլոր կնիքն էլ զետեղված է ոսկեգույն քառակուսու (4,7×4,9 սմ.) մեջ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Աբաս Միրզա Բ (Փոքր Շահաբաս):—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1649 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Սպահան):—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն հրովարտակը (ֆերման) հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1642—66 թթ. Իրանի շահ Աբաս Միրզա Բ-ի (որ կոչվում է նաև Փոքր Շահաբաս) տված հրովարտակն է սա, Փիլիպպոս Ա. Աղբակեցի կաթողիկոսի (1632—1655 թթ.) օրոք, Էջմիածնապատկան գյուղերին ջուր տանելու մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Հրովարտակի վերևի մասի կենտրոնում կա շահի կլոր կնիքը (3,7 սմ. տրամագծով), որտեղ գրված է «Աբաս Միրզա Սանի»:

Հրովարտակի տեքստի առաջին բառը գրված է «ֆարման» (գրված կարմիր թանաքով):

Վերջում կա ֆերմանի թվականը՝ հիջրայի 1060 թ. (1649 թ.—Ն. Մ.) Ռարի էլ-Սանի ամիս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոնդակի կոնակում կա պարսկերեն մի քանի գրություններ, ինչպես նաև օվալաձև չորս փոքրիկ կնիքներ, մոտավորապես 1,5×1 սմ. չափերով:

(Կոնակի վերևի մասում կա նոտրգրով գրված հետևյալ հայերեն գրությունը) ԺԷ.

Փոքր Շահապպասի ֆէրմանն է. ի ժամանակի որոյ մուլք սրբոյ Էջմիածնի գիւղին մերոց զաւթեալ գոլով և Քէյ Խոսրով խանն զմուդախիլն այնորիկ ունելով ի տեղի մավաճիպի իւրոյ, Փիլիպպոս կաթուղիկոսն բերեալ յայնմ ժամանակի զԿիւզէլդարայի ինն ջրաղացաց ջուրն խառնէ ընդ գետն Կարբւոյ և արդ արարեալ շահին զայս բարերարութիւն իւր, խնդրէ շնորհել ինքեան զմուդախիլն գիւղին Էջմիածնի, առ որ ջատագով լինի և Քէյ Խոսրով խանն ըստ որոյ և շահն տայ զայս ֆէրման զի մուլքն և բահրայն Էջմիածնի գիւղին լինիցին գացիֆայ. այս է ապրուստ կաթուղիկոսին և միաբանիցն Էջմիածնի միշտ, բայց յետոյ յորժամ ստուգեալ են կաթողիկոսունք ժամանակին զվախֆ լինիլն նոյն գիւղի մլքին սրբոյ Աթոռոյն ի բնէ անտի և տիրեալ են այնմ շահի մարիֆաթով և շահի ֆէրմանով յետ այնորիկ հասարակ ամենայն վախֆիւ գիւղորէից բահրայն է շնորհեալ Աթոռոյն Շահ Սուլէյման (1666—1694 թթ.—Ն. Մ.) և որք զկնի նորա, որպէս ի նորումս Ավետարանի զօրացեալ բարեգութ Ապպաս Միրզայ (1642—1666 թթ.—Ն. Մ.) շմտնյն լաւագոյն ևս շնորհ ունելով վասն ամենայնին ողորմութիւն արարեալ շնորհեաց Աթոռոյն զարդիւնս ամենայն գիւղորէից վախֆին որպէս և գրեալ լինի մի ուղաւն կաթուղիկոսութեան Եփրեմ Սրբզն.:

№ 391
ՀՐՈՎԱՐՏԱԿ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 57,6×24,3 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար, սակայն տեղ-տեղ ներկը մաշել և ծակել է թուղթը:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի՝—**Տողերը՝** 11:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** միջակ որակի է: Հրովարտակի կենտրոնական մասում նկարված է երեք ճյուղ, որոնց վրա կան կարմիր և կապույտ գույնի ծաղիկներ, նույնպես և ֆերմանի ամբողջ աջակողմյան մասում, լուսանցքի և գրության միջև: Հրովարտակի կենտրոնում կա մի մեծ տերև, որի մեջ կա Շահ-Թահմազի կնիքը:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Շահ-Թահմազ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1723 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Սպահան):—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն հրովարտակը (ֆերման) հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրանի Շահ-Թահմազի տված հրովարտակն է սա Էջմիածնի Աստվածատուր Ա Համադանցի (1715—25 թթ.) կաթողիկոսին, որպեսզի պարսիկները հարկ չպահանջեն եկեղեցուց, հայերին նեղություն չտան և չթողնեն որ ուրիշներն էլ նեղեն նրանց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Շահի մեծ կնիքում (2,2×3,1 սմ.) գրված է «Բիիսմ Ալլահ էլռահիման էլ-ռահիմ... Թահմասբ էլ-Սանի 1135»:

Հրովարտակի ներքևի ձախակողմյան ծայրամասում գրված է հիջրայի թվականը՝ 1136 (1723 թ.—Ն. Մ.) Ջումադա էլ Սուալ ամիս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրովարտակի կոնակում կա չորս կնիք և չորս ստորագրություն: Կնիքներից մեկը օվալաձև է, իսկ մյուս երեքը՝ քառանկյուն:

Վերևի մասում կա հետևյալ երկու գրությունները, գրված նոտրգրով:

1136 (արաբերեն) Աստուածատուր կաթողիկոսին է. որ մալ ու ճիհաթ տայ, բայց այլևս խարճ ամենևին չտան, թէ Սուրբ Էջմիածին և թէ այլ վանքերն, որ է յետի Շահ Թահմազի ռաղամն: Տաճկաց թիւն ՌՃԼԶ (1723 թ.—Ն. Մ.):

(Հե) Շահ Թահմազի յետնոյ Ռաղամն է, որոյ արզ առնէ Աստուածատուր կաթուղիկոսն թէ բաց ի կանոնաւոր հարկէն զոր վանորայք տան ամ յամէ, զաւելի զատս ևս սպահանջեն բռնաւորք: Եւ Շահն որ զայս ռաղամս տայ մի առնել այնպէս: Ի թուին տաճկաց ՌՃԼԶ (1723 թ.—Ն. Մ.):

№ 392
ՀՐՈՎԱՐՏԱԿ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 46×25,1 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:——**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 8:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Շահ Աբբաս Բ.:—**Ժամանակը՝** 1654 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Սպահան):—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն հրովարտակը (ֆերման) հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրանի Շահ Աբբաս Երկրորդի (1642—66 թթ.) տված հրովարտակն է սա Մուղնու ջրի մասին: Նախկինում այս ջրից օգտվել են շաբաթը մի օր, այժմ շահի հրամանով կարգադրվում է, որ չարգելեն օգտվելու համար այս ջրից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Վերևի մասում կա Շահի մեծ կնիքը, 4,2 սմ. տրամագծով: Վրան գրված է «Աբբաս Սանի» և այլ բառեր:

Հրովարտակի աջակողմյան վերևի մասում կարմիր թանաքով գրված է «Շահ-Թահմազ»:

Ներքևի ձախակողմյան անկյունում գրված է գրչության թվականը, որ է հիջրայի 1065 թ. Սաֆար ամիս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրովարտակի կոնակում կա երեք փոքրիկ կնիք և մի տող պարսկերեն գրություն, իսկ ներքևում էլ հայերեն հետևյալ գրությունը նոտրգրով:

«Շահ Թամազի ֆարմանն է Մուղնուոյ ջրի մասին»:

№ 393
ՀՐՈՎԱՐՏԱԿ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 49,5×21, 9 սմ.:—**Նյութը՝** մաշված և ծակծկված բարակ հասարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** անբավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 13: **Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** սույն ձեռագիրը միջնադարյան պարսկական զարդագրության գեղեցիկ մի նմուշ է: Հրովարտակի վերևի ամբողջական մասում (14,5×21,9 սմ.), ինչպես նաև մյուս երեք կողմերում կպցված է կարմիր թուղթ, որի վրա դեղին և սպիտակ գույներով նկարված են ծաղիկներ, ծաղկաման, ծաղկեփունջ և այլ նախշեր: Ապա աջակողմյան մասում կա մի լուսանցք, որ բարձրանում է վերև և ձախից իջնում ցած, որտեղ նկարված են ծաղիկներ, ճյուղեր և նախշեր, օգտագործելով կապույտ, կարմիր և ոսկեգույն գույները: Սրա մեջ ևս կա մի ուրիշ լուսանցք, նույն ձևով, որտեղ օգտագործված է միայն ոսկեգույնը, տալով ճյուղեր և ծաղիկներ: Հրովարտակի կենտրոնական մասում կա մի քառանկյուն շրջան, 6,3×7,9 սմ. չափերով, որտեղ նկարված են շատ սիրուն գույնզգույն ծաղիկներ, կանաչ տերևներ, վարդի մի կոկոն: Այստեղ գործածված է նաև որդան կարմիրը: Այս հատվածի ֆոնը ոսկեգույն է: Ծաղիկների ներքևում կա շահի փոքրիկ (1,2×1,1 սմ.) սև կնիքը:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Շահ-Թահմազ Բ.:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1730 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Սպահան):—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն հրովարտակը (ֆերման) հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրանի Շահ-Թահմազ Բ-ի (1729—1736 թթ.) տված հրովարտակն է սա Աբրահամ Բ. Խոշաբեցի կաթողիկոսին (1730—1734 թթ.) թույլ տալու Էջմիածնի եկեղեցին բարեզարդելու: Թույլ տալ անելու ամեն ինչ, որ արվել է նախկինում, եկեղեցին բարեզարդելու և ուշադրություն դարձնելու համար:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Վերևում կա շահի սև կնիքը, որի վրա գրված է «Շահ Թահմազ Սանի»:

Ներքևի ձախակողմյան անկյունում կա գրչության թվականը՝ հիջրայի 1143 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոնակի մասում կա պարսկերեն երկու բառ և մի փոքրիկ ձվաձև կնիք, որ մաշվել և պատռվել է, մնալով միայն մի փոքրիկ մասը:

Ապա կա հայերեն հետևյալ գրությունը.

(ՀԹ) Շահ Թահմազին յետնոյ ռաղամն է, զոր տուեալ է Աբրահամու կաթուղիկոսին Մշեցւոյ, իբր թէ վասն մեր աղօթեայ որքան եմք ի նեղութեանս, և որպէս նախնիքն իմ այդ Աթոռոյդ խնամս նն ս յարեալ, և մեք նոյնպէս առնելոց եմք: Զի լեալ է այն ժամանակն, յորում զայսպէս առեալ են ի Հօրէն: Ի թուին տաճկաց ՌՃԼԿԳ (1730 թ.—Ն. Մ.):

№ 394
ՀՐՈՎԱՐՏԱԿ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 44,7×23 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտված հասարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 9:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** հրովարտակի չորս կողմերում կպցված է դեղնագույն հասարակ մի թուղթ, իսկ ֆերմանի վերևի մասում, նաև աջակողմյան լուսանցքում նկարված են ծառեր, ճյուղեր և ծաղիկներ, որոնք ունեն միջակ արժեք: Կենտրոնում կա շահի կնիքը:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Շահ Թահմազ Բ.:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1723 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Սպահան):—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն հրովարտակը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շահ Թահմազ Բ-ի հրովարտակն է տրված Էջմիածնի Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսին (1715—1725 թթ.): Որոշ մարդիկ գրավել են Էջմիածնի վանքի հողամասերը և նեղացրել կաթողիկոսին: Այս ֆերմանով պարսից շահը հրաման է տալիս այդ մարդկանց, որպեսզի այլևս նեղություն չտան Էջմիածնի վանքին և կաթողիկոսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Հրովարտակի կենտրոնում կա շահի կնիքը, 2,1×2,3 սմ. չափերով, վրան բրգաձև: Գրված է հետևյալը. «Բի-իսմ Ալլահ էլ-ռահման էլ ռահիմ, Շահ-Թահմասբ Սանի»:

Ֆերմանի ներքևի ձախակողմյան անկյունում կա

գրչության թվականը՝ հիջրայի 1136 թ. (1723 թ.—Ն. Մ.) Ջեմալ էլ Առալ ամիս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրովարտակի կոնակի մասում կա չորս փոքր կնիքներ (մեկը ձվաձև, իսկ երեքը քառանկյուն) և ստորագրություններ։ Վերևում կա հայերեն հետևյալ նստրգիր գրությունները.

Շահ Թահմազին ռաղամն է։

Սիայն վասն վանից ցանքին։

(ՀԴ) Ցետին Շահ Թահմազի ռաղամն է, վասն բահրայ չտալոյ։ Զի արզէ արարեալ Աստուածատուր կաթուղիկոսն թէ, քանզիս յառաջ եղեալ խալիֆայքն զոր ինչ վար և վաստակ արարեալ են վասն Աթոռոյս մերոյ, ոչ ոք առեալ է ի նոցանէ զբահրայ, և ոչ ոքէ արարեալ զշիլթախ ինչ, և այժմ զմեզ նեղացուցանեն։ Եւ շահն գրէ զսաստիկ հրաման մի առնել այնպէս։ Ի թուին տաճկաց ՌՃԼԶ (հիջրայի 1136, այսինքն 1723 թ.)։

№ 395
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 2։—**Պրակները՝** 1։—**Մեծությունը՝** 35,5×22,2 սմ.։—**Նյութը՝** մաքուր դեղնավուն դիմացկուն թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** լավ։—**Գրությունը՝** միապյուն։—**Դատարկ թղթերը՝** 1բ, 2ա և 2բ։—**Տողերը՝** 18։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր։—**Զարդագրություն՝** չունի։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** Ալի Աշրաֆի Նախիջևանցի։—**Ժամանակը՝** 1830 թ.։—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Երևան)։—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն կալվածագիրը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարսկերեն սույն կալվածագիրը վերաբերում է Նախիջևանի գյուղերից մեկի մասին, որ գնվել է 1830 թ. խալիֆ (այսինքն հոգևորական) Սարգսի կողմից, որի մահից հետո իր ժառանգներին է պատկանելու։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կալվածագրի վերջում, թերթի ձախակողմյան անկյունում կա թվականը՝ հիջրայի 1246 թ. և հետևյալ ստորագրությունը՝ Ալի Աշրաֆի Նախիջևանի։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կալվածագիրն ունի հինգ վկաների ստորագրություններն և փոքր կնիքները։ Կնիքներից երկուսը օվալաձև են, իսկ երեքը՝ քառանկյուն։ Ստորագրություններից պարզվում է, որ հինգ վկաներն էլ երևանցի պարսիկներ են։

№ 396
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1։—**Մեծությունը՝** 100,4×33,2 սմ.։—**Նյութը՝** դեղնած հաստ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** լավ։—**Գրությունը՝** միապյուն։—**Դատարկ թղթերը՝** 1բ։—**Տողերը՝** 26։—**Գծումներ՝** չունի, սակայն տեքստը գրված է համաչափ քաշված զուգահեռ գծերի մեջտեղում։—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր։—**Զարդագրություն՝** չունի։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1828 թ.։—**Վայրը՝** Նախիջևան։—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն կալվածագիրը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն կալվածագիրը վերաբերում է Նախիջևանում Շամբա գյուղի գնման ակտի մասին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կալվածագրի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա հիջրայի 1244 թվականը (1828 թ.—Ն. Մ.)։

(Շարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ.—Վեհափառ Հայրապետը Փարիզում և Ժնևում 3

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. յուրեր 8

Ա. Հ.—Ծայրագույն վարդապետական իշխանության տվչություն 10

Աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան 12

ՄԻՍԱՔ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ—ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի երիտասարդաց կազմակերպության անդամները Մայր Աթոռում և հայրենիքում 14

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ—Բարսեղ վարդապետ Ճոն 16

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Մայր տաճարի պահպանության ուղղությամբ կատարված ջանքեր 21

ՀԵՂԻՆԵ ՆԵՐՍԵՍՅԱՆ-ՓԱՆԻԿՅԱՆ—Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք»-ը . 26

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ—Մատենադարանի № 4813 Ավետարանը 31

ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ—Մայր Աթոռի դրամագիտական ժողովածուն . . 37

Ա. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ—Արրակունիսի սուրբ Կարապետ վանքը 45

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ—Մարտունու շրջանի պատմական հուշարձանները . . 53

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 27.7.1976 թ., ստորագրված է տպագրության 3.9.1976 թ.:
Տպագրական 4 մամուլ + 3 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 594:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1976 թ.

Библиотека

1976, մ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

1. Վազգեն Ա. Հայրապետ Հայոց, գիրք երրորդ, Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի առթիվ Նրա կոնդակների, քարոզների, ելույթների և նամակների հատընտիր ժողովածու, տպագրական 18,75 մամուլ, 4.000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

2. Օրացույց, Մայր Աթոռի, 1977 թվականի, 15 մամուլ, պատկերազարդ, 20.000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան: